AZG NEW SHABAT.QXD 30/01/2020 21:51 Page 1

31 ՀՈՒՆՎԱՐ 2020 ՈՒՐԲԱԹ 4(5600)

# Ազգ

Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

## Ինչի՞ շուրջ էին երկարաժամ հանդիպումները Ժնեւում

Հունվարի 29-ին եւ 30-ին Ժնեւում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի միջնորդությամբ եւ մասնակցությամբ տեղի ունեցավ Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարներ Զոհրաբ Մնացականյանի եւ Էլմար Մամեդյարովի հանդիպումը: Ըստ ԱԳՆ մամլո խոսնակ **Աննա Նաղդալյանի**՝ եռօրյա ինտենսիվ քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը: Այն է՝ 2019 թվականին ձեռք բերված պայմանավորվածությունների եւ քննարկված առաջարկների իրականացում եւ ժողովուրդներին խաղաղության նախապատրաստելու ուղղությամբ հնարավոր հաջորդ քայլեր, ապագա կարգավորման հիմքը հանդիսացող սկզբունքներ եւ տարրեր: Քննարկվել են նաեւ կարգավորման գործընթացի առաջմղմանն ուղղված ժամանակացույցը եւ օրակարգը: Նախարար Մնացականյանը շեշտել է խաղաղ գործընթացում Արցախի ժողովրդի ընտրյալ ներկայացուցիչների ներգրավման անհրաժեշտությունը:ԱԳ նախարարները համաձայնել են կրկին հանդիպել մոտ ապագայում՝ համանախագահների հովանու ներքո:

*ՕՐԵՐԻ ՀԵՏ*

## Ինչո՞ւ են փչացնում անվտանգության աշխատակիցներին

Տեւական ժամանակ է արդեն, որ առօրյա, ընթացիկ, սովորական տեսարանի են վերածվել մարդկանց ձերբակալելու գործողությունները Հայաստանում: Այնքան սովորական՝ որ նման տեսարանների բացակայությունը հեռուստեսիլի, համակարգիչների ու հեռախոսների էկրաններից, վստահ եմ, զարմացնելու է մեր հայրենակիցներին, ներսում թե դրսում:

Դիմակավոր, հուժկու, ահարկու տեսքով ոստիկաններ՝ ինչ-որ մեկի թեւերը մեջքի վրա ոլորած կամ հետեւի կողմից ձեռնաշղթաներ կապած՝ քարշ են տալիս դեպի մոտակա ավտոմեքենա, ոստիկանատուն կամ ԱԱԾ շենք. անցնող մեկուկես տարիներին քանի՞ անգամ ենք տեսել նման պատկերներ, որոնք բացի վախից ու անհանգստությունից, շատ մարդկանց մոտ առաջացնում են նաեւ արգահատանք ու զզվանք, անկախ այն բանից, թե ձերբակալվածը սովորական գրպանահա՞տ է, ավազա՞կ, օլիգա՞րխ, գործարա՞ր, թե՞ քաղաքական գործիչ:

Պատահում են նաեւ ավելի սարսափազդու տեսարաններ, հատկապես ձեռնաշղթա անցկացնելու արարողության ժամանակ, երբ մեկին կամ միանգամից մի քանիսին պառկեցնում են (քիչ էր մնացել լսողական հիշողությամբ օգտագործեի «պառկըցնել» ձեւը) ուղղակի ասֆալտին, տառացիորեն իրականացնելով մեր բարձրագույն պաշտոնյայի սպառնալիքները: Ո՛չ, դեռեւս չենք տեսել պատին ծեփված քաղաքացիների, սակայն ներկա ընթացքով կարող ենք վստահ լինել, որ կհասնենք նաեւ դրան՝ այնքա՜ն մեծ է հրահանգները տառացիորեն եւ ավելորդ ոգեւորությամբ կատարելու ոմանց պատրաստակամությունը:

Դեպի ու՞ր են նայում Ազգային ժողովի մեր պատգամավորները, ներառյալ սորոսականները, որոնց հրահանգիչն անգամ նախորդ օրը բողոքեց «Ադեկվատի» տղաների նկատմամբ ոստիկանների «անհամաչափ ուժի կիրառումից»: Ու՞ր են նայում մարդու տարատեսակ ու բազմատեսակ իրավունքների մեր իրավ կամ անիրավ պաշտպանները, համապատասխան նախարարությունների, զբոսաշրջության, արտաքին ու ներքին քարոզչության պատասխանատու մեր պետական այրերն ու... այրուհիները:

Ու՞ր են նայում անվտանգության ծառայությունների, քննչական մարմինների ղեկավարները եւ առաջին հերթին՝ ոստիկանության պետերը, որոնց հրահանգով գրեթե ամեն օր հեռուստատեսությամբ տարածվում են տեսաձայնային հաղորդագրություններ իրենց քաջարի աշխատակիցների արդյունավե՜տ գործողությունների մասին՝ ընդդեմ տարբեր հանցագործների, զազրելի ոճրագործներից մինչեւ մի խեղճ քաղաքացու ավելի խեղճ պարունակությամբ դրամապանակը գողացողի: Ի՞նչ տպավորություն կթողնեն դրանք, այդ «բոյեվիկական» տեսարանները, մեր դեռահասների եւ առհասարակ քաղաքացիների վրա: Չհաշված սադիստական որոշ շրջանակներին, դրանք, անշուշտ, ծանր, ընկճող տպավորություն են թողնում բոլոր նորմալ մարդկանց վրա, գրեթե այնպես, ինչպես սովետական ժամանակաշրջանում թողնում էին Մոսկվայից՝ կենտրոնական հեռուստատեսությամբ տրվող «Մարդը եւ օրենքը» հաղորդումները, որոնց ընթացքում անպայման մատնացույց էր արվում նաեւ մի հայ սպեկուլյանտի, օրինակ՝ «տակից» կոշիկ վաճառելիս:

Սխալվում են բոլոր նրանք, ովքեր կարծում են, թե այդպիսով ցույց է տրվում բռնողների ուժը բռնվողների նկատմամբ, անվտանգության մարմինների աչալրջությունը եւ հզորությունը, առավել եւս՝ մեր օրենքի ու կարգուկանոնի երկիր լինելը: Երբեւիցե մտածե՞լ են այդ մարդիկ, թե նման տեսարաններն ու հաղորդագրությունները ինչպիսի՜ հակաքարոզչություն են նաեւ այն օտարերկրացիների համար, որոնք մտադրություն ունեն այցելելու մեր երկիր՝ ոչ միայն բնության ու պատմական հուշարձանների գեղեցկության, այլեւ, ի տարբերություն շատուշատ երկրների՝ Հայաստանի ապահով երկիր լինելու համար, որը համարվում է մեր գրավչություններից մեկը:

Այստեղ թող թույլ տրվի ինձ «հովվերգական» մի շեղում կատարել դեպի... Ավստրալիա, որտեղ, տարիներ առաջ եղել եմ ընկերներիս հրավերով: Շուրջ 10 օր մնացի իսկապես չքնաղագեղ Սիդնեյում, որը ավստրալացիների պնդմամբ՝ Աստված նկարել է իր իսկ ձեռքով, կիրակնօրյա հանգստի պահին: 10 օրում ես այդ քաղաքում որեւէ ոստիկանի, որեւէ համազգեստավորի չհանդիպեցի, թեեւ ընկերներս ասում էին, որ այդ երկրում, որը, ինչպես հայտնի է, ավելի քան 200 տարի եղել է Բրիտանական կայսրության կալանավայրը ցմահ ազատազրկման դատապարտվածների համար, անվտանգության ուժերը հսկում են աչալուրջ եւ շատ արագ եւ աննկատ վնասազերծում օրինախախտներին:

Արդարեւ, պետությունների ներքին անվտանգության, կարգուկանոնի եւ օրենքի գերիշխանության մակարդակը չի չափվում ոստիկանների, նրանց շարունակ աղմկող ավտոմեքենաների, վայրենի գործողությունների առատությամբ:

Սակայն այստեղ կա առավել կարեւոր մի խնդիր՝ ոստիկանության աշխատակիցներին, քննիչներին, դատախազներին, նույնիսկ դատավորներին փչացնելու խնդիրը: Մեր փոքր երկրում, ուր ամեն մարդ ամեն մարդու ճանաչում է եւ ուր հիշաչարությունն ու քինախնդրությունը դեռեւս փոխանցվում է սերնդեսերունդ, անմարդկային է իրենց ենթակա ծառայողներին նսեմացնելը, ժողովրդային լեզվով ասած՝ նրանց փչացնելը: Տակավին սովետական օրերից ի վեր Հայաստանում մարդիկ չեն ուզում լսել՝ «ի՞նչ անեի, հրահանգ էր», կամ՝ «վլաստը (իշխանություն) նրանց ձեռքին էր, ես քանի՞ գլխանի էի, որ....» արդարացումները:

Մեղավորներին ձերբակալեք առանց կրքի ու ցուցամոլության, նրանց դատեք օրենքով ու խստությամբ, բայց մի՛ վիրավորեք նրանց արժանապատվությունը, մի՛ նսեմացրեք նրանց, ինչպես նսեմացնում եք նրանց ձերբակալող ձեր աշխատակիցներին, մեր ոստիկաններին:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Հայկական անվտանգության ծառայություն

ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ




Պուտինն ուզում է վերականգնել ԽՍՀՄ-ը՝ ՄԱԿ-ում փորձելով մեծ պետությունների հետ քննարկել ԽՍՀՄ փլուզման հիմքերը: Որպես պետություն մեր անվտանգությանը վերաբերու՞մ է դա, իհարկե՝ այո: Թրամփն առաջարկում է իր կարծիքով դարի գործարքը՝ իր պատկերացումներով (շահերով) կառուցելով Պաղեստինի եւ Իսրայելի սահմանները: Դա նույնպես մեզ հետ ի վերջո կապ ունի, քանզի Մերձավոր Արեւելքի ու մեր տարածաշրջանի գործընթացները հաղորդակից անոթներ են, էլ չասած՝ ուղիղ կապ եւս կա, եթե նկատի առնենք հայկական Երուսաղեմի փաստը: Մի օր էլ Թրամփն ու Պուտինը երեւի առաջարկեն Արցախի սահմանների իրենց տարբերակը, ինչ իմանաս, ամեն ինչ հնարավոր է , աշխարհի մեծ խաղացողների պարագայում խաղի մեկ կանոն է գործում՝ սեփական շահերի՝ իբր մյուսների անվտանգություն անվան տակ:

Ինչ ունենք մենք այդ բոլորին որպես հակադրում, մանավանդ հենց այս երկու օրը Մինսկի խմբի համանախագահների մասնակցությամբ Ժնեւում Մնացականյան-Մամեդյարով ժամեր տեւող հանդիպումները եղան, որի մասին շունչները պահած հաղորդագրության են սպասում մեր նախկինները, որ գրիչն առնեն, ստորակետ առ ստորակետ ընկնեն հաղորդագրության ջանը՝տարածքները «հանձնում են» ոգով բառ ու տառ գտնելու հույսով:

⇨10

## Հայոց բանակը եւ նրա նշանակությունը հզոր պետության կերտման գործում

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

պ.գ.թ.

Ամեն տարի հունվարի 28-ին Հայաստանը նշում է Հայոց բանակի ստեղծման հերթական տարեդարձը, ինչը, խոստովանենք, արդեն իրական տոն է դարձել Հայաստանում: Հիշեցնենք նաեւ, որ օրվա ընտրությունը պայմանավորված է 1992թ. նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի համապատասխան հրամանով, իսկ տոնակատարությունը սկսվել է նշվել 2001թ.-ից՝ նախագահ Ռոբերտ Քոչարյանի համապատասխան որոշումից հետո:

Հայոց բանակը, ըստ անցկացված բոլոր հարցումների, ամենաբարձր վստահությունը ունեցող ինստիտուտն է Հայաստանում: Եվ բնակչության կողմից վստահության այս բարձր ցուցանիշը (մոտ 86 տոկոս) պայմանավորված է նաեւ ռազմաքաղաքական այն իրավիճակով, որում գտնվում է Հայաստանը՝ չավարտված պատերազմ եւ հստակ գիտակցում՝ որ միայն սեփական ուժերով կարելի է պաշտպանել հայրենիքի անվտանգությունը:

Սակայն հանուն ճշմարտության նաեւ եկեք նշենք, որ ասել թե հայկական բանակը 28 տարեկան է, նույնպես սխալ մոտեցում է, քանի որ Հայոց պատմությունը առնվազն 4-5 հազար տարվա ժամանակաշրջան է ընդգրկում եւ, հետեւաբար, հայկական բանակն էլ այդքան տարիների կյանք ունի: Այս առումով կարելի է պատմաբանների հավաք անցկացնել եւ որոշել, թե ո՛ր թվականից գոյություն ունի հայոց կանոնավոր բանակը, եւ արդեն հաջորդ տարի նշել հայկականի բանակի ասենք 3200-րդ ամյակը, օրինակ սկսած Հայկ ու Բելի հայտնի ճակատամարտից կամ ասենք Արարատյան (Ուրարտու) թագավորության ժամանակաշրջանից, երբ արդեն կար կանոնավոր հայկական բանակ եւ այլն:

⇨2



Իրական փաստերն ընդդեմ չակերտավոր փաստերի
էջ 3



Հայաստանյա-ցության պարտ-ված խաղը
էջ Ա

Բրիտանացի գործակալներ Թուրքիայի արեւելքու՞մ
էջ 11

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

## Հալէպն ու պատերազմը

Շուտով Սուրիոյ պարտադրուած պատերազմին իննամեակը պիտի նշենք ցաւով ու թեւաթափ, եւ մեր ականջներուն պիտի հասնի պատասխանատուներու միեւնոյն հանկերգը՝ «Պատերազմ չէ եղած, որ չաւարտի»... Իսկապէս, ազգերու պատմութեան մէջ բոլոր պատերազմներն ալ աւարտ ունեցած են, սակայն անոնց տեւողութիւնը նոյնը չէ եղած, պատերազմ եղած է, որ ընդամենը մի քանի օր տեւած է, պատերազմ ալ եղած է, որ հարիւր տարի տեւած է: Իսկ Սուրիայի՞նը...

Այս անցնող ինը տարիներուն ընթացքին իննսուն անգամ ըսուեցաւ ու լսուեցաւ, որ՝ «Ահա՛, վերջանալու վրայ է», սակայն վերջը չեկաւ. ժողովուրդին վերջը եկաւ, բայց պատերազմին վերջը չեկաւ:

«Սուրիոյ պատերազմ» կ՚ըսեն, բայց իսկութեան մէջ Հալէպն է կիզակէտը, քանի որ Սուրիոյ տարածքին ոչ մէկ քաղաք եւ ոչ մէկ բնակչութիւն պատերազմին լեղին ցմրուր ըմպեց, որքան Հալէպն ու հալէպցին: Եւ այս բոլորէն ետք, երբ կը տեսնենք, թէ ինչպէ՛ս կը գոյատեւէ այս աստղնջական քաղաքը, կը զարմանանք:

Հիմա, փորձենք կիզակէտին՝ կիզակէտը լուսարձակի տակ առնել, այսինքն հալէպահայութիւնը:

Ազգերու պատմութեան մէջ պատահած է, որ քաղաք մը հռչակուի որպէս «Հերոս քաղաք»՝ պատերազմին մէջ անոր բնակչութեան սխրանքները նկատի առած, սխրանքներ՝ որոնք նպաստած են վերջնական յաղթանակին: Եթէ հիմա հեղինակաւոր մէկը Հալէպին ալ շնորհէ այդպիսի պատուանուն, սխալած չ՚ըլլար: Այս պարագային ոչ թէ պատերազմին ուղղակի համաժողովրդային մասնակցութեամբ, այլ՝ ժողովուրդի ֆիզիքական տոկունութեամբ եւ հոգեկան արիութեամբ:

Պատերազմի ամբողջ տեւողութեան կենսամակարդակի անկումին դիմանալով, տարրական անհրաժեշտութիւններու՝ ելեկտրական հոսանքի, ջուրի, վառելանիւթի, յարաճուն սղաճին տոկալով, ժուժկալութեամբ ապրելով,- երբ հալէպահայուն սեղանը լի կ՚ըլլար ամէն տեսակի բարիքներով,- հինը նորոգելով, քիչով գոհանալով եւ սակայն տխրութիւնը ժպիտով փարատելով, դպրոցները, եկեղեցիներն ու ակումբները աշխատունակ պահելով, մշակութային-ազգային զանազան ձեռնարկներով, երգով ու պարով, երաժշտութեամբ ու թատրոնով, սկաուտական եւ ուսանողական շարժումներով ու տակաւին՝ նշանախօսութիւններով, պսակադրութիւններով, հարսանիքներով Հալէպի ամպամած երկինքը լուսաւորեցին:

Ժողովուրդ մը, որ այս տարատեսակ ցնցումներուն դիմացաւ, փոխանակ տկարանալու, աւելի՛ կ՚ամրապնդուի, աւելի՛ դիմացկուն կը դառնայ, որպէսզի,- Աստուած մի արասցէ,- նոր ցնցումները դիւրութեամբ տանի: Փաստը՝ այս վերջին ցնցումն էր Թուրքիոյ մէջ պատահած երկրաշարժին որպէս արդիւնք: Ըստ հաղորդումին՝ 12 երկվայրկեան տեւած ցնցումը, որ քիչ չէ, թէեւ վախի մթնոլորտ մը ստեղծած է, յատկապէս գերզգայուն մարդոց մօտ, սակայն անբնական իրարանցումի կամ սարսափի չէ մատնած մարդիկը, ինչպէս տպաւորուեցայ Հալէպէն հասած դիմատետրային գրառումներէն:

Այն պահուն, ուր ամէն ինչ կ՚երերար ու կը տատանէր երկրաշարժին պատճառով, ՀԵԸ-ի «Ադամեան» թատերախումբը փորձի մէջ էր, կը պատրաստուէին երկու օր ետք տարեկան երգիծական պատկերներու (**սքեչ**) ներկայացման:

Յայտարարուեցաւ, որ տոմսերը արդէն սպառած են եւ յաջորդող երկու օրերուն լեփ-լեցուն սրահներու մէջ հանդիսատեսները երկու ժամ խնդացին եւ ուրախացան: Յայտարարուեցաւ, որ յաջորդ շաբաթ եւ կիրակի ալ պիտի կրկնուի ներկայացումը... Ալ ի՞նչ երկրաշարժ, ի՞նչ տագնապ:

Ի պատիւ հալէպահայութեան, տակաւին բաց են մեր կրթական օճախները, եկեղեցիներէն դէպի երկինք կը բարձրանան մեր հոգեպարար շարականները, դեռ կը շարունակուին միութենական ձեռնարկները... Եւ այս բոլորը՝ ի պատիւ Հերո՛ս քաղաքի բնակիչ հալէպահայու անկոտրում կամքին:

## Հայոց բանակը եւ նրա նշանակությունը հզոր պետության կերտման գործում

⇨1

Սա ուղակի թվականի ճշգրտում չէ, այլ շատ կարեւոր ռազմահոգեբանական միջոց այսօրվա հայոց բանակի զինվորներին ցույց տալու, որ իրենք հազարամյակների պատմության մի մասն են ու պատմական այդ հարստության կրողն են: Ընդհանրապես ռազմական պատմությունը պետք է դառնա մեր բանակի առօրյայի մի մասը, այն պետք է դասավանդվի զորամասերում, ու 2 տարի անց զորացրված զինվորը պետք է իր մեջ կրի այդ բանակի մասը կազմելու պատմական հպարտությունը:

Բանակային ծառայությունը պետք է դիտարկել ոչ միայն ռազմական պատրաստության ժամանակաշրջան, այլեւ ռազմահայրենասիրական դաստիարակության կարեւորագույն փուլ, որի արդյունքում զորացրված զինվորը կվերադառնա քաղաքացիական կյանքի հստակ գիտակցությամբ Հայոց բանակի դերի մասին պետության կայացման ու հզորացման գործում: Իսկ այդ դաստիարակության հիմքում հենց ռազմական պատմությունն է՝ տարբեր դարերում Հայոց բանակի անցած փառահեղ մարտական ուղին եւ այն ճակատամարտերը, որոնցում նրանք հաղթանակներ են տոնել:

Տարիներ առաջ, երբ մի առիթով եղա Արցախի Պաշտպանական բանակի զորամասերից մեկում եւ զինվորների համար դասախոսություն էի կարդում, նրանց փորձեցի ներկայացնել Կիլիկյան Հայաստանի մեր բանակը՝ որպես հզոր ու մարտունակ միավորի: Սակայն հստակ շեշտեցի, որ օրինակ Կիլիկյան Հայաստանում բանակում ծառայելը պատվի հարց էր՝ Հայոց ազնվականության ու նրանց զավակների համար պարտադիր պայման, իսկ ծառայությունից ազատվում էին միայն ամենացածր խավի ներկայացուցիչները:

Յուրաքանչյուր պետության բանակի ամրության հիմքում բնակչության եւ բանակի անքակտելի կապն է, որը արտահայտվում է ոչ միայն կենացներով, այլեւ ծառայելու եւ Հայրենիքի պաշտպանությանը նվիրվելու ձգտմամբ: Իսկ դա արտահայտվում է ոչ միայն 2 տարի բանակում ծառայելով, այլեւ՝ հետագայում մաս կազմելով պահեստազորին, որտեղ արդեն պետք է ծառայեն բոլորը:

Ժամանակին առաջ քաշված ազգ-բանակ կոնցեպտը վաղ թե ուշ պետք է իրականություն դառնա, քանի որ մենք ուղղակի այլ ճանապարհ չունենք: Այդ սկզբունքի կիրառումը շատ հաջող քննություն է բռնել մի շարք պետություններում, որոնք ժամանակին խնդիրներ են ունեցել իրենց հարեւանների հետ:

Դեռ Շվեյցարիայում մշակված այս սկզբունքը սկսեցին կիրառել նաեւ Ֆինլանդիայում, Իսրայելում, Հարավային Կորեայում, Սինգապուրում եւ այլուր: Ազգ-բանակ սկզբունքը հնարավորություն է տալիս չկտրել կապը բանակի հետ, չմոռանալ այնտեղ ստացած ռազմական գիտելիքները եւ շարունակաբար դրանք զարգացնել ու կատարելագործել:

Այսինքն պահեստազորայինները առնվազն երկու տարին մեկ անգամ պարտադիր կերպով 2-3 շաբաթվա ծառայություն են անցնում, ինչը նրանց հնարավորություն է տալիս պահպանել իրենց ռազմական գիտելիքները: Մի շարք պետություններում դա նաեւ շատերի համար լավ հնարավորություն է ռազմական կարիերա ունենալու եւ հերթական զինվորական կոչումն ստանալով՝ կատարելագործելու իրենց գիտելիքները: Այսինքն ազգ-բանակ սկզբունքը նաեւ ռազմակրթական կարեւորագույն շրջափուլ է, որով պետք է անցնի ագրեսիվ հարեւաններով շրջապատված որեւէ պետության բանակ:

Հայկական բանակը անկախ Հայաստանի կարեւորագույն ձեռքբերումն է, որը հնարավոր եղավ ստեղծել ազգանվեր ու հայրենասեր մարդկանց ջանքերով, որոնցից շատերը այսօր, ցավոք սրտի, տարբեր կեղծ մեղադրանքներով գտնվում են դատաքննության ներքո: Բանակը թրծվեց Արցախյան հերոսամարտում, ինչի արդյունքում այն դարձավ հզոր եւ մարտական, արդյունքում մենք ունեցանք տարածաշրջանի ամենամարտունակ բանակը:

Արցախյան պատերազմի առաջին իսկ օրերից շատ մասնագետներ ու փորձագետներ անդրադառնալով Արցախյան պատերազմին շեշտում էին, որ հայկական կողմը դատապարտված է պարտության, քանի որ իր թշնամուն զիջում է թե՛ մարդաքանակով, թե՛ սպառազինությամբ: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ ռազմի դաշտում դա էական չէ, քանի որ հանձինս հայ կամավորների, իսկ հետագայում՝ Հայոց բանակի, մենք ունենք ոգեղեն հզորությամբ զինված ռազմիկներ, որոնք հաղթանակ էին կերտում այնտեղ, որտեղ այն թվում է անհնար:

Ինչեւէ, Հայոց բանակը անկախ Հայաստանի այն կարեւորագույն ձեռքբերումն է, որը պետք է անընդհատ զարգացնել եւ կատարելագործել, պայմանավորված նաեւ այն մարտահրավերներով, որոնց բախվում է տարածաշրջանը եւ Հայաստանը: Իսկ դրանք, այդ մարտահրավերները, անընդհատ փոփոխվելու եւ ավելի մեծ ու իրական սպառնալիքներ ներկայացնելու հատկություն ունեն:

Ադրբեջանը պատրաստ է օգտագործել ամեն առիթ սահմանային լարվածություն ստեղծելու եւ, ինչու չէ, նաեւ լայնամասշտաբ պատերազմ սկսելու, եթե մենք աչալուրջ չլինենք եւ դրա հնարավորությունը տանք նրան: Մեր պետության անվտանգության հիմքերի հիմքը Հայոց բանակն է, որը թե Արցախյան պատերազմում եւ թե Ապրիլյան հերոսամարտում իրենց ցույց տվեց որպես հասուն եւ կայացած մարմին:

Հայոց նորօրյա պետականության հզորության հիմքը հանդիսանում է Հայոց բանակը՝ զինվորը, սպան եւ գեներալները, որոնք իրենց ամենօրյա ծառայությամբ ապացուցում են իրենց նվիրումը Հայրենիքին: Շատ կարեւոր է, որ այդ հզորությունը լրացվի Հայ ժողովուրդ- Հայոց բանակ սկզբունքով: Միայն այդ ժամանակ կարող ենք խոսել այդ երկու հասկացությունների անքակտելիության եւ հավերժության մասին:

## Հայերը Օսմանյան կայսրությունում ցեղասպանությունից հետո



Արի Շեքերյան

Առաջիկա ուրբաթ օրը, փետրվարի 7-ին Ֆրեզնոյի պետհամալսարանի բիզնես կենտրոնում տեղի է ունենալու դոկտ. Արի Շեքերյանի դասախոսությունը նվիրված «Վերապրելու չպատմված պատմությունը: Ստամբուլի հայ համայնքը զինադադարի (1918-23 թթ.) տարիներին» թեմային:

Միջոցառումը մաս է կազմելու գարնանային դասախոսությունների շարքին, որը փորձելու է բացահայտել, թե ինչպես հայերը վերակազմավորվեցին եւ պաշտպանեցին իրենց գոյությունը զինադադարի տարիներին: Մինչ այժմ չօգտագործված հայկական եւ օսմանյան մամուլի հրապարակումների հիման վրա ուսումնասիրությունները նոր լույս են սփռելու պատմության այդ քիչ ուսումնասիրված ժամանակաշրջանի վրա: 1918-ի Մուդրոսի զինադադարը նոր էջ բացեց օսմանահայության պատմության մեջ, որը վերապրելու նոր հույս պարգեւեց: Ստամբուլի փողոցներում հայերի հետ հույներ եւ հրեաներ դուրս եկան մասնակցելու տոնակատարություններին:

Շեքերյանը վերոնշյալ համալսարանում այցելու դասախոս է նշանակվել գարնանային կիսամյակի համար: Նա Օքսֆորդի համալսարանի արեւելյան ուսումնասիրությունների ֆակուլտետն է ավարտել: 2018-19 ուսումնական տարում Ուիսկոնսին-Մադիսոն համալսարանի գիտխորհրդի անդամ է ընտրվել:

Ն.Ծ.

## ՄԻԵԴ-ի որոշումը՝ Մանվել Սարիբեկյանի գործով

**Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշում է կայացրել հայ հովիվ Մանվել Սարիբեկյանի գործով՝ պարտավորեցնելով Ադրբեջանին հայցվորներին վճարել 60 հազար եվրո՝ որպես բարոյական վնասի փոխհատուցում եւ 2200 եվրո՝ որպես դատական ծախսերի փոխհատուցում:**

**«Սարիբեկյանն ու Բալյանն ընդդեմ Ադրբեջանի» գործով դատարանը որոշել է, որ Մանվել Սարիբեկյանի մահվան առումով տեղի է ունեցել ՄԻ կոնվենցիայի 2-րդ հոդվածի (կյանքի իրավունք) եւ խոշտանգումների վերաբերյալ կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում (արգելում է խոշտանգումը եւ «անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը»):**

**Հայաստանի քաղաքացի, Ճամբարակի մարզի Թթուջուր գյուղի բնակիչ Մանվել Մամիկոնի Սարիբեկյանը ադրբեջանական զինուժը գերեվարել էր 2010 թվականի սեպտեմբերի 11-ին, Շամշադինի ուղղության սահմանամերձ տարածքից, որի խոշտանգված մարմինը մեկ ամիս անց էր հանձնել Հայաստանին:**

## Վերին Լարսում մաքսային կցորդ կունենանք

**Այսուհետեւ Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի դեսպանությունը մաքսային կցորդ կունենա, որի նստավայրը կլինի Վերին Լարսի մաքսային անցակետի մոտակայքում: Կառավարության նիստում մաքսային կցորդ է նշանակվել Արամ Թանանյանը, որը մինչ այս ՊԵԿ նախագահի խորհրդականն էր: Ենթադրվում է, որ այս նշանակումից հետո ավելի համակարգված լուծումներ կստանան այն խնդիրները, որոնք պարբերաբար առաջանում էին Վերին Լարսում հայ ներկրողների եւ արտահանողների համար: Համենայնդեպս՝ կցորդը նշանակվել է այդ նպատակով:**

ՄԱՆՈՒԿ ԱՐԱՄՅԱՆ

# Իրական փաստերն ընդդեմ չակերտավոր փաստերի




Նիկոլ Փաշինյանի ամփոփիչ ասուլիսն այս անգամ եւս աչքի ընկավ ապատեղեկատվության առատությամբ: Անգամ «վարչապետին ճիշտ չեն զեկուցում» արդարացմամբ հանդես եկողները ոչինչ չունեցան ասելու: Բացի ակնհայտ կեղծ տեղեկատվությունից, նրա ներկայացրած փաստերի մեջ քիչ չէին «Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ երկրի գործող ղեկավարը Քննչական կոմիտեի հրավերով ներկայացել է նախաքննության մարմնի գրասենյակ եւ քննիչի աշխատասենյակում հարցաքննվել» կամ «վերջին ամիսներին Հայաստանում ընթանում են հնամաշ ավտոմեքենաների թափքերի ուտիլիզացման ակտիվ աշխատանքներ» տիպի, մեղմ ասած, ծիծաղելի «փաստեր», ինչպես նաեւ փաստեր, որոնք մշտապես արձանագրվել են բոլոր իշխանությունների ժամանակ եւ ոչ ոք այդ՝ ընթացիկ հարցերը որպես նվաճում չի ներկայացրել: Ներկայացնենք վարչապետի մի քանի առավել ուշագրավ «փաստերը», որոնք իրականության հետ առնչություն չունեն:

## Պետբյուջեի եկամուտների ու ծախսերի խեղաթյուրումը

Ըստ Նիկոլ Փաշինյանի, 2018 եւ 2019 թվականների ընթացքում պետական բյուջեի հարկային եկամուտները բացարձակ թվով ավելացել են 505,4 միլիարդ դրամով, որի մի մասը՝ 200 մլրդ դրամն ուղղվել է հարկ վճարողների հանդեպ ունեցած պարտքերի մարմանը, իսկ մյուս մասով՝ 305,4 մլրդ դրամով ավելացել են պետական բյուջեի եկամուտները: Նրա հավաստմամբ, 2018-2019 թվականների արդյունքներով տոկոսային արտահայտությամբ պետական եկամուտների աճը 2017 թվականի համեմատ կազմել է 43,6 տոկոս, իսկ տնտեսավարողներին ժամկետանց պարտք այլեւս չունենք:

Այստեղ գործ ունենք, Նիկոլ Փաշինյանի բնորոշմամբ՝ հիբրիդային խաբեության հետ.

Նախ՝ 2017 թվականի պետական բյուջեի եկամուտները կազմել են մոտ 1 տրլն 237 մլրդ դրամ: Եթե հիմք ընդունենք Նիկոլ Փաշինյանի նախորդ ելույթում հայտարարած 2019 թ.-ի բյուջեի 89 մլրդ դրամով գերակատարումը, ապա բյուջեի տարեկան եկամուտները կկազմեն 1 տրլն 490 մլրդ դրամ: **Հետեւաբար, 2017 թ.-ի համեմատ, երկու տարի հետո աճը կկազմի ոչ թե 43,6 տոկոս, այլ 20 տոկոս, բացարձակ թվով էլ՝ ոչ 505,4 մլրդ դրամ, ոչ էլ 305,4 մլրդ դրամ, այլ 253 մլրդ դրամ:** Իսկ բյուջեի եկամուտների 10 տոկոս եւ շատ ավելի աճ ունեցել ենք նաեւ նախկինում՝ 2001-2003 թթ., 2005-2007 թթ., 2010 թ., 2011 թ., 2013 թ.-երին:

Ինչ վերաբերում է 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ տնտեսվարողներին ունեցած պարտքին, ապա հիշեցնենք, որ տնտեսվարողներին 55 մլրդ դրամ պարտքը հետ է վերադարձվել Կարեն Կարապետյանի կառավարության կողմից՝ հունվար-փետրվար ամիսներին: **2019 թվականի ընթացքում որպես անցումային գերավճար էլ վիճկոմի կողմից նշված է 136 մլրդ դրամը, այլ ոչ թե 200 մլրդ դրամը:** Ընդ որում, 136 մլրդ դրամը առաջին եռամսյակի ցուցանիշների մեջ հայտնվել է հանկարծ, իսկ հունվար,փետրվար եւ մարտ ամիսներին տվյալների մեջ առանձին-առանձին այդ գումարը՝ մաս մաս կամ ամբողջությամբ, ուղղակի չկա:

Պետական բյուջեի ծախսերի մասին վարչապետը հայտարարեց, թե 2020թ. պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսերը, սոցիալական նշանակության եւ մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված ծախսերը որքան ավելի են լինելու 2017, 2018 եւ 2019 թվականների համեմատ: Այնուհետեւ հայտարարեց, որ 2020-ին Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ կառավարությունը չի նախատեսում վերցնել բյուջետային աջակցության վարկեր: Ի՞նչ կարելի է ասել այս առնչությամբ:

Նախ՝ 2020 թ.-ին նախատեսվածը ներկայացնել որպես 2019 թ.-ին իրականացված «փաստ», նշանակում է մարդկանց հիմարի տեղ դնել: Երկրորդ՝ պետական բյուջեով նախատեսված ծախսերը թերակատարվել են շուրջ 223 մլրդ դրամով, իսկ կապիտալ ծախսերը՝ ավելի քան 60 տոկոսով:

Նոր վարկ վերցնելու անհրաժեշտությունն անցյալ տարի չպետք է լիներ, եթե բյուջեի եկամուտների աճը իսկապես ցնցող լիներ: **Սակայն 2019 թ.-ին ՀՀ պետական պարտքը Նիկոլ Փաշինյանն ավելացրել է շուրջ 400 մլն դոլարով, որի մեծ մասը հենց բյուջեի ֆինանսավորմանն է ուղղված: Արդյունքում, ՀՀ պետական պարտքն արդեն հասել է 7 մլրդ դոլարի սահմանը:**

## ՀՆԱ աճի ցուցանիշը՝ ի վնաս կառավարության

Ըստ Նիկոլ Փաշինյանի, 2019 թվականի երեք եռամսյակների նախնական տվյալներով Հայաստանի ՀՆԱ աճը կազմել է շուրջ 7,5 տոկոս, ինչը 1.6 տոկոսային կետով գերազանցում է 2017 թվականի համապատասխան ցուցանիշը եւ 1,3 տոկոսային կետով՝ 2018 թվականինը:

Բանն այն է, որ 2018 թ.-ին ՀՆԱ աճը 2017 թ.-ի համեմատ տարվա առաջին եռամսյակում 10 տոկոս էր, որը տարեվերջին նվազելով դարձել էր 5,2 տոկոս: Այնուհետեւ, 2019 թ.-ին 7,5 տոկոս ՀՆԱ աճը մեծապես պայմանավորվել է երկու ճյուղերով՝ ավտոմեքենաների ներմուծման ծավալների աննախադեպ աճով, որը պայմանավորված էր մեր երկրին ԵԱՏՄ մտնելիս տրված արտոնյալ ժամկետով եւ այս կառավարության հետ ոչ մի կապ չուներ, եւ բուքմեյքերական գրասենյակներում խաղադրույքների աճով, որը հավելյալ արժեք չի ստեղծում: Սրան էլ ավելացնենք այն փաստը, որ 2017 թ.-ին Հայաստանի տնտեսական աճը կազմել էր 7,5 տոկոս, պարզ է դառնում, որ 1,3 եւ 1,6 տոկոսային կետով ՀՆԱ աճը գերազանցելու փաստերն իրականում ի վնաս ներկա կառավարության են:

## Օտարերկրյա ներդրումները նվազել են, ոչ թե աճել

Վարչապետ Փաշինյանի խոսքով, 2019 թվականի հունվար-սեպտեմբերին օտարերկրյա ներդրումների ներհոսքը կազմել է 2 մլրդ 174 մլն դոլար, ինչը 2018-ի նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 465 մլն դոլարով կամ 27,6 տոկոսով, 2017-ի համեմատ՝ 635 միլիոն դոլարով, կամ 41 տոկոսով: Օտարերկրյա ուղղակի ներդրումների գծով ստացումները նշված ժամանակահատվածում կազմել են 453,8 մլն դոլար, ինչը 68,7 մլն դոլարով կամ 17,8 տոկոսով ավել է, քան 2018-ի ցուցանիշը:

Իրականում Կենտրոնական բանկի կողմից հրապարակված ՀՀ վճարային հաշվեկշռի համաձայն, 2018 թ.-ի առաջին ինը ամիսներին օտարերկրյա ներդրումները կազմել են 186,4 մլն դոլար, իսկ 2019 թ.-ի ինը ամիսներինը՝ 185,7 մլն դոլար: **Այսինքն, օտարեկրյա ներդրումները ոչ թե աճել են 456 մլն դոլարով, այլ նվազել ավելի քան 700 հազար դոլարով**: Երկրորդ, էապես 31 տոկոսով, նվազել է օտարեկրյա ներդրողների կողմից եկամուտի վերաներդրումը՝ անցած տարվա ինը ամիսներին վերաներդրվել է 73,5 մլն դոլար՝ նախորդ 2018 թ.-ի 106,2 մլն դոլարի համեմատ:

## Գյուղատնտեսությունում անկումը շարունակվում է

Նիկոլ Փաշինյանի ներկայացրած 100 փաստերի շարքում 22-30-րդ փաստերը առնչվում էին գյուղատնտեսությանը: Եթե հաշվի առնենք իր կառավարման ժամանակ սկսված եւ հիմա էլ խորացող գյուղատնտեսության անկումը, ապա ակնհայտ է, որ անլուրջ է խոսել վերոնշյալ փաստերի լուրջ կամ առարկայական լինելու մասին:

## Զբաղվածություն եւ գործազուրկներ

Եվս մեկ գլխիվայր ներկայացվող ասուլիսային «փաստ»՝ 2018 թվականի մայիսի համեմատ 2019 թվականի վերջին ստեղծվել է կամ ստվերից դուրս է եկել 81 հազար 534 նոր աշխատատեղ, զբաղվածության մակարդակը 2019 թվականի երրորդ եռամսյակում բարձրացել է մինչեւ 49,3 տոկոս՝ 2018 թվականի 46,8-ի փոխարեն:

Իրականում, ըստ վիճկոմի, 2019 թ.-ի երրորդ եռամսյակում գործազուրկ է եղել 217 հազար մարդ երկրորդ եռամսյակի 207 հազարի փոխարեն, գործազրկության մակարդակն էլ կազմել է 18 տոկոս՝ 17,7 տոկոսի փոխարեն: Այսինքն, գործազուրկների թիվը երեք ամսվա ընթացքում ավելացել է մոտ 10 հազարով կամ 0,3 տոկոսով: Զբաղվածության պետական գործակալության տվյալներով էլ աշխատանք փնտրողների թիվը նոյեմբերին ավելացել է 3,5 տոկոսով:

## Զբոսաշրջային այցելությունների աճի գաղտնիքը

Նիկոլ Փաշինյանը նշել է, որ 2019 թվական հունվար-սեպտեմբերին ներգնա զբոսաշրջային այցելությունները նախորդ տարվա համեմատ աճել են 14, 4 տոկոսով եւ ներկայացրել տարբեր երկրներից եկած զբոսաշրջիկների աճի ցուցանիշները: Ո՞րն է իրականությունը եւ ի՞նչ է տեղի ունեցել այս ոլորտում:

Նախ՝ 2018 թ.-ի հունվար-սեպտեմբերին զբոսաշրջային այցելությունների աճի տեմպը նվազել էր եւ կազմել 8,8 տոկոս նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Գաղտնիք չէ, որ դրա համար «պարտական» էինք 2018 թ.-ի «թավշյա հեղափոխություն» կոչվող իրադարձություններին, որոնց պատճառով տարվա երկրորդ եռամսյակում՝ ապրիլ-հունիսին զբոսաշրջային այցելություններն անգամ նվազել էին: Այսինքն, 2018 թ.-ին, վերոնշյալ «հեղափոխության» հետեւանքով զբոսաշրջային այցելությունների աճի տեմպի կտրուկ անկման ֆոնին է 2019 թ.-ին արձանագրվել 14,4 տոկոս աճը: Համեմատության համար նշենք, որ օրինակ 2017 թ.-ի հունվար-սեպտեմբերին Հայաստան զբոսաշրջային այցելությունների աճի տեմպը անհամեմատ ավելի բարձր էր՝ 21 տոկոս:

Բացի վերոնշյալից, ընդգծենք, որ երկու հիմնական երկրներից մեկից՝ Ռուսաստանից զբոսաշրջիկների ավելի քան 76 տոկոս աճը մեծապես պայմանավորված է նախորդ կառավարության կողմից Ռուսաստանից եկող զբոսաշրջիկների այցելությունները առանց արտասահմանյան անձնագրի թույլ տալու որոշմամբ: Որոշում, որ որոշ հարթուղեղներ պիտակավորեցին որպես Ռուսաստանի «գաղութ» լինելու վկայություն եւ որը քննադատվեց նաեւ Նիկոլ Փաշինյանի ընտանեկան թերթում, բայց հիմա դրա արդյունքները նա քաղում է եւ հպարտանում:

## Վանդալիզմ ընդդեմ հայկական եկեղեցու



Կեսարիայի Բաղդինար գյուղում գտնվող պատմական Սուրբ Աստվածածին հայկական եկեղեցին արդեն քանիերորդ անգամ բարբարոսական հարձակման է ենթարկվել, Թուրքիայից տեղեկացնում է «Էրմենի հաբեր» լրատվամիջոցը հունվարի 21-ին: Գանձ որոնողների վանդալիզմի հետեւանքում զգալի վնաս են կրել եկեղեցու պատերի որմնանկարները: Թուրքական լրատվամիջոցին տված հարցազրույցի ժամանակ գյուղապետ **Օմեր Նալբանտը** ափսոսանք է հայտնել կատարվածի առնչությամբ եւ հույս հայտնել, որ իշխանությունները կվերականգնեն եկեղեցին եւ կդարձնեն դիտարժան վայր զբոսաշրջիկների համար: Ըստ նրա, քանիցս ամուր մետաղյա դռներ եւ կողպեքներ է տեղադրել տվել, բայց վանդալներին հաջողվել է ջարդել դրանք եւ ներս մտնել: Մշակույթի եւ զբոսաշրջության գավառական մասնաճյուղը հայտնել է, որ շրջանի բոլոր եկեղեցիները հաշվառման են ենթարկված եւ նախատեսված են դրանց վերանորոգման աշխատանքները, սակայն նա չի նշել կոնկրետ որեւէ թվական, թե երբ են դրանք սկսվելու:

Հ.Ծ.

# Մարդու իրավունքների ռահվիրան՝ Հրանտ Դինք

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Դետրոյթ, ԱՄՆ

Թուրքիայում հայկական համայնքի ներկայացուցիչների վարքագիծը սովորաբար առնչվել է վախի մթնոլորտի առկայության հետ: Վախ՝ արտահայտվելու եւ գործելու, ինչպես նաեւ ցույց տալու իրենց իսկական ինքնությունը մի հասարակությունում, որտեղ ատելության մութ ուժերը մինչեւ օրս էլ շարունակում են խաթարել մարդկանց մտածողությունը: Այդ վախը արդարացված է: Դրա համար ունենք հիմնավոր պատճառ: Ցեղասպանության հիշողությունը փոխանցվել է սերնդե սերունդ, այն պահպանվել է նույնիսկ եթե դրա մասին բարձրաձայն չենք արտահայտվել: Թուրքական դպրոցներում հայ երեխաներին սովորեցրել են, որ նրանք դավաճանական մի ցեղի ժառանգներն են, դրանով նրանցում սերմանելով ատելություն իրենց սեփական ինքնության նկատմամբ:

Ցեղասպանությունն ու նրա պատմական ազդեցությունը շարունակ ընդլայնվել, մեծացել են՝ փոքրամասնությունների հանդեպ չընդհատվող հետապնդումներով, Ստամբուլում 1955-ի սեպտեմբերի 5-ի կոտորածների կազմակերպումով, հայերի, հույների եւ հրեաների վրա դրված ունեցվածքի խստագույն հարկերի կիրառումով, ինչպես նաեւ 1940-ականներին դեպի Աշկալեի աշխատանքային գաղութները նրանց տարագրելու միջոցով:

Բացի դրանցից, թուրքական կառավարության առաջնորդները մշտապես ահաբեկել են հայերին, զգուշացնելով, որ եթե 1915-ի դասերը հայերը լավ չեն յուրացրել, ապա կարժանանան ավելի դաժան վերաբերմունքի: Նախագահ Թուրգուտ Օզալի 1993-ին ասված խոսքերն են: Նրան հաջորդած առաջնորդներից վարչապետ Թանսու Չիլլերն ու ներկայիս նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ոչ մի առիթ բաց չեն թողել սպառնալու վերաբնակ հայերին, որ կվտարվեն Ստամբուլից:

Հայկական համայնքը նման սարսափի պայմաններում էր ապրում, երբ հանկարծ լսվեց տարբեր, հանդուգն մի նոր ձայն: Դա Հրանտ Դինքի ձայնն էր, որ սարսուռ առաջացրեց համայնքում: Երկրի առաջնորդներն ու քաղաքացիները չէին հավատում, որ հայ էթնոսին պատկանող մեկը այդքան անխոհեմ կգտնվի եւ կփորձի թոթափել ստրկության այն շղթաները, որ երկար ժամանակ փակի տակ էին պահել հնազանդ հայ համայնքին:

Նախքան Թուրքիայի հասարակությանն ուղղելու իր պատգամը, Դինքը զարմացրեց հայկական համայնքի ներկայացուցիչներին հրատարակելով «Ակօս» շաբաթաթերթը թուրքերեն լեզվով, հայերենին հատկացնելով միայն մեկ էջ: Մինչ լեզվի ընտրությունը գործնականում հասկանալի էր, հայերից շատերը շտապեցին այդ մոտեցումը մայրենի լեզվի հանդեպ դավաճանություն բնութագրել:

Հայերը Թուրքիայում մի քանի տարբերակներ ունեն, բայց հիմնականում երկուսն են ճանաչված որպես հայկականության հովանավորներ: Դրանք «Մարմարա» եւ «Ժամանակ» օրաթերթերն են, որոնք շարունակում են լույս տեսնել ի գին բազում դժվարությունների, զոհողությունների եւ համայնքի փոքրանալու հետեւանքում նաեւ բաժանորդների նվազեցման:

Տասնամյակներ շարունակ համայնքային դպրոցներում հայոց լեզվի դասավանդման վրա դրված սահմանափակումները բացասական ազդեցություն են թողել նրա մասնագիտական զարգացման վրա: Փոխարենը թուրքերենն է դարձել բոլոր փոքրամասնությունների իրար հետ հաղորդակցվելու առօրյա լեզուն: Մյուս կողմից արտագաղթի հետեւանքով գաղութի նվազեցմանն առընթեր շրջաններից եկած հայ երիտասարդները, թեեւ համալրել են շարքերը եւ աչքի ընկնող դիրքերի ու հարստության տիրացել, բայց նրանք միայն թուրքերեն են խոսում: Հրանտի նախաձեռնությունը համապատասխանում էր նրանց պահանջներին: Նրանք հայերեն չէին խոսում, բայց հայրենասեր էին, եւ հայկական ժառանգության հանդեպ նախանձախնդիր:

Հրանտ Դինքը համայնքի անունից չէր խոսում, բայց համայնքի պահպանողական շրջանակները վախենում էին, որ իր այդ քայլով կվտանգի երկրի ամբողջ հայերի ապահովությունը: Նրանք թշնամանքով էին վերաբերվում Դինքին, հատկապես երբ նա բառերը չխնայելով քննադատում էր հովանավորչությունն ու կաշառակերությունը հայկական համայնքում: Նրա պատգամը երիտասարդների զգայուն թելերին էր դիպչել, բայց նաեւ իր արձագանքն էր գտել քրդերի շրջանում, քանի որ համահունչ էր նրանց ազատագրական ձգտումներին:

Դինքը միաժամանակ դարձել էր թուրք ազատական եւ կրթված խավի խոսնակը: Շատ ականավոր թուրք գրողներ, ինչպես օրինակ Բասքըն Օրանը, դարձել էին «Ակօսի» կանոնավոր նյութեր հայթայթողները, դրանով իսկ բարձրացնելով թերթի վարկը թուրքական մտավորականության եւ քաղաքական գործիչների շրջանում:

Հրանտը պաշտպանում էր ժողովրդավարությունն ու մարդու իրավունքները: Նա անդրդվելի էր փոքրամասնությունների իրավունքները խթանելու հարցում: Մինչ թուրքական իշխանությունները ամեն ջանք գործադրում էին վերացնելու համար հայկական ինքնության հետքերը Թուրքիայի հանրապետության սահմանների ներսում, նա, ի հակադրություն այդ քաղաքականության, հպարտությամբ հայտարարում էր՝ «Ես երկու ինքնությունների կրողն եմ: Նախ՝ ապրելով Թուրքիայում՝ ես Թուրքիայի հանրապետության քաղաքացի եմ, եւ երկրորդ... ես հայ եմ»: Նա հետազոտություններ կատարելով մեկը մյուսի ետեւից հոդվածներ սկսեց հրատարակել Թուրքիայի պատմությանը, լեզվին, մշակույթին եւ տնտեսությանը հայերի բերած նպաստի վերաբերյալ: Այնուհետեւ նրա ձեռքն ընկավ մի հաղթաթուղթ, երբ պարզեց, որ Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի որդեգրած դուստրը՝ Սաբիհա Գյոքչենը, որին թուրքերը հերոսացրել էին որպես կործանիչի առաջին կին օդաչուն եւ որի անունով օդանավակայան էր գործում, հայ որբուհի էր եղել: Փաստի հրապարակման արդյունքում մահվան սպառնալիքներ ստացավ նա:




Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված նրա պաշտպանական ջանքերն է՛լ ավելի գրգռեցին կառավարական շրջանակներին եւ մոլեռանդ ազգայնականներին: Նա անթաքույց արտահայտվում էր հայկական ամենատարբեր հարցերի մասին եւ դրա համար էլ երեք անգամ դատական կարգով հետապնդվել է քրեական օրենսգրքի 301 հոդվածի հատկանիշներով, որ պատիժ է նախատեսում բոլոր նրանց, ովքեր համարձակվում են վիրավորանք հասցնել «թուրքականությանը»:

Նա հասարակա-քաղաքական կյանքը փոփոխելու առաքելություն էր վերցրել իր վրա, որն իրեն ստիպում էր դուրս գալ հայերի եւ թուրքերի իրար հանդեպ ունեցած ավանդական շրջանակներից եւ ձեռնոց նետել հին մտածելակերպին: Թուրքերի համար հայերը դավաճաններ էին, որոնք արժանի էին այն պատժին, որին արժանացան: Հայերի համար թուրքերը անողորմ ու անպատկառ, միջոցների մեջ խտրականություն չդնող «մսագործներ» էին: Դինքը հավատում էր, որ թուրքերին կրթելով կարելի էր հասնել երկու կողմերի համերաշխ գոյատեւմանը:

Մինչ հայերից շատերի համար Թուրքիայի Եվրոմիությանն անդամակցելը վտանգավոր քայլ էր համարվում, Դինքի կարծիքով պատմական իրական փաստերի հետ առնչվելը կարող էր դուրս մղել նրանց իրենց նեղ մտածելակերպից եւ փոխադարձ հաշտեցման ուղիներ բացել նրանց առաջ:

«Երբ ճանաչողության, իրազեկության սերմերն ես ցանում մի հասարակությունում, որտեղ գիտելիքն ազատորեն չի փոխանցվում, ապա ինքնաբերաբար պարադոքս է առաջանում», ասում էր նա եւ եզրակացնում. «Ի վերջո այնպես չէ, որ թուրք հասարակությունը գիտի ճշմարտությունը եւ ժխտում է այն: Ո՛չ, նա չգիտի ճշմարտությունը եւ պաշտպանում է այն, ինչն իր կարծիքով ճշմարիտ է»:

Այդուհանդերձ, «ճանաչման» Դինքի հասկացությունը տարբերվում էր ավանդականից:

Հայերից ոմանք հոնքերը կիտեցին, երբ նա բացահայտեց իր փիլիսոփայությունը նշելով, որ հաջողության կարելի է հասնել ոչ թե դատական որոշումներով կամ սահմանափակող օրենքներով, այլ վիճարկելու մթնոլորտ ստեղծելով, որը հնարավորություն կտար փոփոխել մտածողությունը: «Առանց հասկանալու, ճանաչումը կամ ժխտումը չի կարող ձեռնտու լինել կողմերից ոչ մեկին», ասում էր նա:

Եղավ ժամանակ, երբ Դինքի ուղերձը գրավեց թուրք հասարակության լայն շրջանակներին, եւ Էրդողանի վաղ շրջանի քաղաքականությունը բխում էր այդ մթնոլորտից: Շատերն սկսեցին հավատալ, որ Թուրքիայում վերջապես ժողովրդավարություն է հաստատվում: «Թուրքիան փոխվել է», ասում էին Դինքին իր արտասահման կատարած այցելությունների ժամանակ, մինչեւ որ Էրդողանն իր իսկական դեմքը ցույց տվեց: Պարզվեց, որ նա իրականում հենվում է արմատական իսլամի վրա, որպես սկզբունք, որն իրեն մի հաջողությունից մյուսին հասցրեց, մինչեւ որ նա ձեռք բերեց անպարտելիության զգացմունք Թուրքիայում եւ այլուր:

Եվրոմիության պահանջներին համապատասխանելու համար, Թուրքիան պաշտոնապես վերացրեց մահապատիժը: Բայց մյուս կողմից սպանությունների ու քրդերի զանգվածային կոտորածների արյունալի ռեկորդներ սահմանեց «Խորքային պետության» իրականացրած գործողությունների միջոցով, որը պարզվեց, որ համագործակցում է MIT-ի՝ Թուրքիայի գաղտնի գործակալության հետ:

Հիշեցնենք, որ «Խորքային պետությունը» օգտվել էր Ահմեդ Ալի Աղջայի ծառայություններից՝ սպանելու համար ճանաչված լրագրող Աբդիլբեկչիին՝ 1979-ին: Որոշ ժամանակ անց նրան ազատ էին արձակել, որպեսզի փորձի սպանել Հռոմի պապ Հովհաննես Պողոս Բ-ին՝ 1981-ին:

«Խորքային պետությունը» վաղուց էր թիրախավորել Դինքին, բայց վերջինս իրեն ապահով էր զգում, քանի որ ճանաչված էր եւ մեծ ժողովրդականություն էր վայելում: Իր վերջին խմբագրականում նա գրում էր, որ իրեն «վախվորած աղավնու» պես է զգում, բայց ավելացրել էր, որ «Թուրքիայում մարդիկ չեն վնասում աղավնիներին»:

Նա սխալվում էր: 2007 թվի հունվարի 19-ին «Ակօս» թերթի խմբագրատան առաջ նրան զգետնեց Օգյուն Սամասթ անունով մի երիտասարդ, որ հայտնեց, թե թուրք ազգայնական է: Ոստիկանությունը ձերբակալեց նրան, բայց վերաբերվեց նրան որպես հերոսի, որի կողքին շատերն էին ուզում լուսանկարվել:

Դինքի հուղարկավորությանը հարյուր հազարավոր մարդիկ մասնակցեցին «Մենք բոլորս հայ ենք», «Մենք բոլորս Հրանտ Դինք ենք» կոչերով:

Ջնայած մարդասպանին մեղավոր ճանաչեցին եւ 13 տարվա բանտարկության ենթարկեցին, ոճրագործության իրական մտահղացողները այդպես էլ խուսափեցին արդարադատությունից:

Դինքի սպանության 13-րդ տարելիցի հիշատակությունների առթիվ ցույցեր տեղի ունեցան Բալըքլի հայկական գերեզմանատան իր հողաթումբի մոտ եւ Օսմանիյե թաղամասում «Ակօսի» նախկին խմբագրատան առաջ: Ելույթներ ունեցան մի շարք քաղաքական դեմքեր եւ լրագրողներ: Հատուկ ուշադրության արժանի էր Կարո Փայլանի մասնակցությունը եւ ներբողը: Նա շարունակում է Դինքի փիլիսոփայությունը եւ խիզախորեն պայքարում հանուն դրա կենսագործմանը:

Թուրքական իշխանությունները մի անգամ եւս ցույց տվեցին իրենց դիրքորոշումը փակելով երթեւեկությունը դեպի Հարբիյե, որտեղ հիշատակի արարողություն էր տեղի ունենում: Այդ շրջանի մետրոյի կայարանը նույնպես փակ մնաց երեք ժամ:

Այսօր, մահացած Հրանտ Դինքն ավելի վտանգավոր է, քան նախկինում ապրող Հրանտ Դինքը, որովհետեւ նրա առաքելությունը, նպատակներն ու գաղափարները դրոշմվել են միլիոնավոր թուրք քաղաքացիների մտածողության մեջ: Թուրքիայի կառավարությունը այլեւս չի կարող հետապնդել կամ կալանավորել նրան: Նա, ավելի ներկա քան երբեւէ, դեռեւս ողջ է եւ ակտիվ՝ շնորհիվ իր քարոզած սկզբունքների: Նա մնում է մարդու իրավունքների անխոնջ մարտիկը, ռահվիրան՝ ինչպես Թուրքիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Թարգմանեց
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Arm. Mirror-Spectator)

AZG NEW SHABAT.QXD 30/01/2020 21:51 Page 5



# «Որեւէ իշխանություն՝ որքան էլ բարի նպատակներով գա, տապալվելու է, քանի դեռ չի կարեւորում հասարակության արատները»

## *Զրույց՝ գրող, մտածող, վերլուծաբան Արծրուն Պեպանյանի հետ*

**- Ձեր գործունեությունը գաղափարական հստակ ուղղվածություն ունի՝ հանրային գիտակցության փոփոխություն, ինչը փորձում եք անել վերլուծական, գեղարվեստական հեղինակային գրականության, հեռուստատեսային հաղորդաշարերի միջոցով. տարիներ առաջ ձեւավորեցիք մտավորականների «Վերելք» ակումբը, ներկայում համանուն հաղորդաշար եք ստեղծել եւ վարում եք: Դրանց ազդեցությունը, արդյունքը ինքներդ ինչպե՞ս եք գնահատում:**

-Հայ ժողովրդի մտածողությունը խեղվել է վերջին հազար տարում, անհրաժեշտություն կա վերափոխել այդ մտածողությունը: Դա անելը ծանր ու դժվարին գործ է: Իմ ջանքերը, համեմատությամբ խնդրի ծավալներին, կարելի է համարել չնչին, էական ազդեցություն չի թողել եւ չէր էլ կարող թողնել. սա մեկ մարդու գործ չէ: Եթե անգամ պետական համակարգը սա ըմբռնի եւ փորձի ողջ ռեսուրսները ներդնել ազգային վերափոխման համար, տասնամյակներ կպահանջվի: Իսկ մեկ անձ, որ չունի առանձնակի լծակներ, էական հաջողությունների հասնել չի կարող: Բայց եթե համեմատենք 20 տարի առաջվա հայ քաղաքական միտքը ներկայի հետ, նկատելի է, որ իմ նմանները որոշակի ներդրում ունեցել են, խորքային մտածողների շերտ է գոյացել, շատ փոքր, բայց կա: Նաեւ ասեմ, որ այսօր ավելի բարենպաստ իրավիճակ է այսպիսի մտածողություն տարածելու, քան 2018-ի գարնանը, քանի որ ժողովուրդը նկատելիորեն հասունացել է՝ տեսնելով, որ իշխանափոխությունը բավարար չէ էական վերափոխումների համար:

**-Տեսնո՞ւմ եք արդյոք հանրային մեկ այլ լուրջ ամբիոն, որը հետեւողականորեն նման քաղաքականություն վարի եւ լայն լսարան ապահովի:**

- Մեր քաղաքական դաշտը գտնվում է մակերեսային մտածողության տիրույթում, եւ սա էլ իր պատճառներն ունի: Դեռ հարյուր տարի առաջ նկատել են Նժդեհը, Հայկ Ասատրյանը եւ փաստել, որ հայությունը, պատմական անցյալով պայմանավորված, խորքային, պատճառահետեւանքային մտածողություն չունի: Մեր ժողովուրդը գրագետ չի եղել քաղաքականապես, մշակութապես, գտնվել է օտարի լծի տակ, ո՞վ պիտի նրա կրթությամբ զբաղվեր, ուստի կարողանում է լուծել զուտ կենցաղային մակարդակի խնդիրներ՝ օրվա ապրուստի եւ կամ անձնական կյանքի անվտանգության. այս ուղղությամբ արհեստավարժ է դարձել: Երբ ունեցանք պետություն, մեր առջեւ ծառացան մեծ խնդիրներ եւ աշխարհաքաղաքական բարդ իրավիճակ, որոնց լուծումը դժվարին գործ էր կենցաղային մտածողության սովոր մեր ժողովրդի համար: Այդ պատճառով նշվում են իրադրության պատճառների եւ դրանից ելնելու պարզունակ տարբերակներ. այսպես՝ եթե կյանքը վատ է, ապա մեղավորը միմիայն վերեւներն են, փոխենք իշխանությունը, եւ հարցերը կլուծվեն: Այսքան տարի՝ որքան էլ համառորեն հորդորում էի առանցքային քաղաքական գործիչներին՝ խորքային պատճառները հասկանալու, իրական ելքերը որոնելու, ինձ չէր հաջողվում այս մտածողությունը ներդնել: Եթե Հայաստանում եղել է հարթակ, որ սկսել է զբաղվել նման հարցերով, իմ կամ ինձ հետ համագործակցած մարդկանց ստեղծածն է, եւ սա շատ նեղ շրջանակ է:

**- 2018-ի ժողովրդական շարժման հիմնական լեյտմոտիվը «արժեքների հեղափոխություն» գաղափարի մեջ էր, ընտրվել էր շատ գրավիչ կարգախոս: Ներկայում ստեղծված հանրային մթնոլորտը դրա հակառակն է եւ, առհասարակ, այն ինչ լսեցինք հրապարակներում մեկ ու կես տարի առաջ՝ թունդ խոստումներ, կառավարման ամենադեմոկրատական մեթոդներ՝ անգամ հին հունական ագորայի մասին հիշատակվեց, այսօր մոռացված է: Ի՞նչ արժեքներ ներմուծեց հասարակության մեջ այս հեղափոխություն համարվածը:**



- Եկեք միասին դիտարկենք, թե նոր իշխանությունները որքանով են ըմբռնում այն խնդիրը, որի մասին խոսեցի: Կարելի է արձանագրել, որ զրոյական վիճակ է, իրենք չեն արտահայտվել այս մասին, չեն կարեւորել եւ բնականաբար լուծում էլ չեն առաջարկել: Պատկերացրեք մի բժշկի, որը հիվանդի իրական ախտորոշումը չտված՝ բուժում է սկսում՝ արտաքին փոփոխությունների վրա կենտրոնանալով: Ի՞նչ է լինելու. մի որոշ ժամանակ անց հիվանդությունը ներսից նորից է գլուխ բարձրացնելու: Որեւէ նոր արժեք չի ներմուծվել, ժողովրդին վերափոխելու ուղղությամբ ոչինչ չի արվում, ավելի ակնհայտ դրսեւորում են ստացել հասարակության մեջ եղած հազար տարիների բացասական որակները: Որեւէ իշխանություն, որքան էլ բարի նպատակներով գա, ինչ կարգախոս էլ ընտրի, տապալվելու է, քանի դեռ չի կարեւորում հասարակության արատները:

**- Ձեր վերջին հաղորդման մեջ հետաքրքրական միտք արտահայտեցիք, թե մեր հանրության այսչափ ապաբարոյականացման ծավալներն իրական չեն, թե սա ավելի շուտ վիրտուալ հարթության մեջ այսպես կոչված ֆեյք «ինստիտուտների» սարքած գործն է՝ հանրային խորը պառակտման տպավորություն թողնելու, հուսահատություն առաջացնելու:**

- Փորձենք այս երեւույթը հասկանալ: Արդեն ասացի, եկել է նոր իշխանություն, եւ սոցիալական, տնտեսական ասպարեզում հաջողություն չի կարող ունենալ, քանի որ անտեղյակ է հասարակության մեջ եղած բացիլներին: Ուստի դժգոհություններ են առաջանալու, ինչն իրենք փորձելու են սաստել տարբեր միջոցներով: Այժմ տարածված է վարկաբեկել, վաստաբանել քննադատողներին, անգամ խելացի միտք արտահայտողներին, ձեւավորվել է վճարվող, ուղղորդվող մարդկանց մի խումբ, ովքեր տասնյակ ֆեյք ստեղծելով՝ լցվում են ասպարեզ ու հազարի տպավորություն թողնում: Սրան ավելանում է ցածրամշակույթ շերտը, որ հեղափոխությունների ժամանակ սովորաբար ակտիվանում է, քանի որ չունի ինքնուրույն դատողական, վերլուծական միտք եւ ինքնադրսեւորման այլ ասպարեզ, անմիջապես ոգեւորվում ու ակտիվանում է՝ հայհոյելով քննադատող եւ հատկապես առողջ մտածողներին. նա դառնում է իշխանությունների պաշտպան: Եւ ահա վերոնշյալ ֆեյքերը սրանց ոգեւորում են, ծափահարում, ու այս մարդիկ դառնում են հանրային դեմք, իրենց կարեւորված զգում: Այս երկու հոսանքներն այսօր միացել եւ ստեղծել են այսպիսի մթնոլորտ:

Դեռ Թումանյանն էր ասում՝ մեր ժողովրդի մեջ խտացված չարություն կա՝ պայմանավորված հազար տարվա նվաստացումով: Ես միշտ էլ ասել եմ՝ հեղափոխությունը հակացուցված է նման ժողովուրդներին, որովհետեւ ատելության ջինը դուրս է գալիս, ու ստորին շերտը ակտիվանում է. նրանք հիմա հեղեղել են համացանցը: Եվ հարցն այն է, որ իշխանություններին այս պահին ձեռնտու է սա, որովհետեւ այդ շերտը, որին մորեխների պարս եմ կոչում, սաստում է առողջ քննադատողներին, եւ իշխանությունն իրեն պաշտպանված է զգում:

**-Իհարկե կա նաեւ մեկ այլ շերտ՝ նախկին իշխանությունների պաշտպանները՝ որոշակի ազդեցություն, զանազան հնարավորություններ կորցրածների, որոնք պակաս ակտիվ չեն եւ ֆեյքերի պակաս բանակ չեն ստեղծում: Իսկ այսօրինակ ինքնահաստատման ու ինքնապաշտպանության ռեալ վտանգը ո՞րն է:**

- Վտա՞նգը. այս պատկերը տեսնելով՝ հասարակության առողջ շերտը հուսահատվում է, կարծելով, թե ժողովուրդն իսկապես այսպիսին է, եւ ուրեմն հնարավոր չէ վերափոխել նրան, ու մարդը արտագաղթում է. դա լինում է ֆիզիկապես՝ լքում է երկիրը, կամ՝ հոգեպես. նա մեկուսանում է: Սա ռեալ վտանգ է պետության համար: Չեմ ասում, թե միտումնավոր է արվում, հնարավոր է՝ հետեւանք է, բայց սա կարող են օգտագործել արտաքին ուժերը...

Ես շատ եմ շփվում մարդկանց հետ, մեծ մասի վրա այդ պատրանքային բացասական ազդեցությունը կա, թե անհույս վիճակ է, թե բոլորն ախտահարված են: Սա հիբրիդային պատերազմի մի ձեւ է՝ ազդել ժողովրդի վրա, հուսահատեցնել նրան: Սակայն եթե իրական հարցում արվի, այլ պատկեր կունենանք. մեր ժողովրդի մեջ կան բավարար ռեսուրսներ, կա այն շերտը, որի միջոցով հնարավոր է երկրում իրական վերափոխումներ անել:

**- Սոցիալական տարբեր խմբերի բողոքները բնական երեւույթներ են. կուտակված հարցերի լուծումը հեշտ չէ, ժամանակատար է, սակայն կա՞ դրա քաղաքական կամքը, թե՞ միայն մի շերտի համար ժամանակի գործոնը դեր չունի: Այդ ինչպե՞ս է, որ ժողովրդական հուզումների ալիքի վրա իշխանության եկողները այսպես արագ մոռանում են ժողովրդին ու կտրվում նրա իրական հոգսից: Վերջին բողոք - ընդվզումը ֆերմերների, ինչպես իրենք ասացին, ընդունված որոշումների՝ իրականությունից կտրված լինելու հետեւանք է:**

- Եկեք չմտածենք, թե երկրում միայն իշխանությունները պիտի քայլեր ձեռնարկեն, մենք կարող ենք ինքնակազմակերպվել, ներքեւից ինքնակազմակերպման տարբերակը չմոռանանք: Սրա նախաձեռնողները պետք է լինեն հենց այդ առողջ ուժերը՝ լուծման ուղիներ բերողները: Սա չի լինելու հակաիշխանական ուղղվածության հոսանք, այլ ազգային ինքնակազմակերպված միավոր, որ առնչվելու է թե՛ իշխանությունների, թե՛ հասարակական տարբեր շերտերի հետ. հնարավորություն կա, ես տեսնում եմ այդ նախադրյալները: Ի՞նչ եմ առաջարկում ես. գործող խորհրդարանը կա՛մ պահում ենք, կա՛մ՝ ոչ, ձեւավորում ենք կորպորատիվ խորհրդարան հետեւյալ կերպ. նախապես ստեղծված հանրային տարբեր խավերի ոլորտային միությունները (ֆերմերների, բժիշկների, ուսուցիչների, իրավաբանների եւ այլ) իրենց ներկայացուցչին ուղարկում են կորպորատիվ խորհրդարան. վստահաբար՝ լավագույն մասնագետներին կընտրեն: Ենթադրենք դրվում է հարց՝ սննդի անվտանգության, մսամթերքի որակի բարձրացման, այդ ժամանակ ֆերմերների միության ներկայացուցիչը պարզաբանում է առկա խնդիրները, որպեսզի օրենքն ընդունելուց առաջ արվեն նախնական անհրաժեշտ քայլեր, գուցե գյուղերում խոշորացնեն տնտեսությունները, կոոպերացիաներ ստեղծեն՝ մեծաքանակը տեղափոխելու եւ այլն: Կառավարությունը, տեղեկանալով խնդրի մասին խորքային ու համակողմանի, որոշումները կկայացնի նկատի առնելով դրանք, սակայն ներկայիս շատ որոշումներ, գուցե լավն էլ են, բայց հակառակ ազդեցությունն են գործում, որովհետեւ կտրված են իրականությունից:

**- Այսինքն՝ մասնագիտական ներկայացուցչական մարմի՞ն:**

- Այո, եւ նախաձեռնողները պիտի բավարար ինքնակազմակերպված լինեն, հեղինակություն եւ ուժ ունենան՝ իշխանությանը իրենց ձայնը լսելի դարձնելու:

Կա մեկ այլ խոչընդոտ՝ իշխանությունների ինքնասիրահարվածության պահը, թե իրենք ամեն ինչ գիտեն, եւ այսպիսի մտահոգությունները իրենց երկրորդական են թվում:

**- Մտածող մարդկանց, մտքի էլիտայի պասիվությունը նրանց քանակի՞ մեջ է, թե՞ այս մարդկանց դեմ տարիների հետեւողականորեն տարվող քաղաքականության՝ մեկուսացնելու, լռեցնելու:**

- Հայ ժողովուրդը պատմական դաժան անցյալի պատճառով ենթարկվել է այլասերումների՝ հոգեբանական եւ այլ, ու եթե չբուժենք նրան այս արատներից, նույնը կրկնվելու է: Մեզանում հարյուրավոր տարիներ մտավորականներին ճնշել, մեկուսացրել, բռնությունների են ենթարկել, թողել են ներքին շերտը, արդյունքում՝ դեգրադացված հանրություն ունենք: Հիշո՞ւմ եք՝ ԽՍՀՄ -ը խարխլվելու շրջանում ինտելիգենցիան արտահայտությունը դարձավ հայհոյանք, գլուխ բարձրացրեց պլեբսը, ամեն ինչ նրա ձեռքում էր, պետություն չէր ճանաչում, արժեքներ չկային, ու հիմա էլ նույնն է: Վերջին շարժման ժամանակ ամենաակտիվ տարրը հիմնականում հենց այս շերտն էր, շարժման ղեկավարների առաջին քայլը պիտի լիներ մինչ իշխանության գալը այս շերտի մակարդակը բարձրացնելը: Ես դեռ հանրահավաքների ժամանակ եմ ասել, որ հրապարակները ողողած եւ ոգեւորված այս մարդիկ բնականաբար պահանջելու են իրենց հեղափոխական ներդրումի հատուցումը, եւ շարժման ղեկավարները իշխանության գալով ստիպված են լինելու բավարարելու այդ պահանջներն ու գերի են մնալու այդ շերտին, որովհետեւ եթե հեռացնեն, ապա կմնան օդում: Իսկ այդ շերտի վրա հիմնվելով հնարավոր չէ նոր որակի երկիր կառուցել:

**- Այնուամենայնիվ, հետաքրքրական է՝ այս շերտը սոցիալապես ամենաանապահովն է, բազմաթիվ խնդիրներ ունի, այդ ինչո՞ւ է շարունակում ծափահարել իշխանություններին, երբ դրանք հիմնականում չեն լուծվում:**

- Պլեբսը սիրում է հաց կամ տեսարան, եթե հաց չի ստանում, բավարարվում է «կերակրվել» տեսարանով:

**- Մի՞թե: Եվ որքա՞ն նա կբավարարվի տեսարանով, ծաղրուծանակի է վերածվում արդեն, անհեթեթ բաներով են սկսել «կերակրել»:**

- Մի ինչ-որ ժամանակ նա դեռ կբավարարվի տեսարանով: Կա վտանգ, որ այն հետզհետե կվերածվի մի հրեշի, որն անընդհատ «զոհ» է պահանջելու: Ու եթե մի քանի ամիս դադարեն նրան «կերակրել զոհերով», սկսելու է խժռել արդեն իշխանություններին:

⇨8

# «Ազգայինի դեմ այս «դեմարշը» ծագումնաբանորեն գեոքաղաքական է». Գոռ Հարությունյան



***ԿԳՄՍ նախարարության վարած քաղաքականության եւ մասնավորապես «Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի շուրջ զրուցել եմ ժամանակակից գրող, Bohem գրական-երաժշտական խմբի անդամ, մանկավարժ Գոռ Հարությունյանի հետ:***

**- Գոռ, ԿԳՄՍ նախարարության կողմից անցյալ տարեվերջին շրջանառության մեջ դրված «Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին ի՞նչ կարծիք ունեք:**

- Առաջին իսկ օրից իմ բացասական կարծիքն եմ հայտնել եւ կարճ վերլուծականներ գրել այդ՝ այսպես կոչված նախագծի աշխատանքային տարբերակի դեմ, մասնավորապես՝ բուհերի պարտադիր առարկայացանկից հայոց լեզվի, հայ գրականության եւ հայոց պատմության դասավանդման «պարտադիր» բաղադրիչը հանելու առիթով:

**- Բուհերից հայագիտական առարկաների դուրսմղումը համարենք բարի նպատակների իրագործման սխալ տարբերա՞կ, թե՞ միտում:**

- Ըստ իս՝ ակունքում միտում կա, որը, ինչպես կասեր Մեծն Լոռեցին՝ աչքի պես պարզ է ու բարդ: Ընդհանրապես, ես ու ինձ պես շատ չափավոր պահպանողական մարդիկ տարիներ, ոմանք՝ տասնամյակներ շարունակ, խոսում են ամեն ազգայինի դեմ եղող պայքարի մասին: Ազգայինի դեմ այս «դեմարշը» ծագումնաբանորեն գեոքաղաքական է: Եւ ցավ է, որ «տեղական» քաղաքականությունը եւ այն իրացնող պարոնները ու տիկինները բավականին անցավ են տուրք տալիս օրենքի հակաազգային նախագծեր դակելու «հրահանգներին» եւ գրեթե զրո դիմադրությամբ են ընդունում ամենայն գարշելին, որ ծառանում է ազգային պետություն ունենալու ճանապարհին: Եվ սա վերաբերում է բոլոր ժամանակների իշխանություններին այս կամ այն չափով: Իներցիան շարունակվում է. գուցե խորանում: Եթե նախարարությունն ու ինքը՝ նախարարը, միտումի հեղինակ կամ մաս չեն կազմում, ապա՝ «դավին անտեղյակ, ցավին անտարբեր», կատարում են միտումի հեղինակների բոլոր պահանջներն անտրտունջ եւ, մի բան էլ, կուրծք ծեծելով, դրանց մտացածին ճշմարտացիության համար:

**- Դուք ժամանակակից գրականության սիրված դեմքերից եք, Ձեր երկրպագուներից շատերն այս օրերին բողոքի ցույցեր են իրականացնում՝ ընդդեմ ԿԳՄՍ նախարարության առաջ քաշած նախագծի: Դուք պաշտպանո՞ւմ եք այդ երիտասարդների նախաձեռնողականությունը:**

- Իհարկե պաշտպանում եմ, բայց բացառապես քաղաքական ինտրիգներից զերծ պայքարը: Ոչ մի կերպ չեմ ողջունում այն «պայքարողներին», որոնք ուղղորդված են. նրանց պայքարի նպատակը քաղաքական է եւ ինձ համար՝ անազնիվ: Հասկանալի է, որ մեր օրերին հատուկ ներքաղաքական խառնիճաղանջության ծիրում պետք է այլազան մոտիվացիաներ ունեցող խմբեր ու խմբավորումներ, անհատներ ու կազմակերպություններ փորձեն պղտոր ջրերում իրենց քիմքին հաճո ձկներ որսալ, բայց ազգային հարցերից քաղաքական միավորներ հավաքելու ունակներին պետք է ցույց տալ իրենց անփառունակ տեղն ու դիրքը: Ես հավատում եւ աջակցում եմ ձեր նախաձեռնած պայքարին՝ ուսանողներին եւ պրոֆեսորադասախոսական այն կազմին, որոնք զերծ են մնացել քաղաքական հայտարարություններ ու կոչեր հնչեցնելուց եւ ծայրահեղ ազնիվ են ազգային հարցերում իրենց ոգորումների մեջ: Նախարար Արայիկ Հարությունյանի հրաժարականի պահանջի մասով էլ նկատեմ, որ այն քաղաքական է իր հիմքում եւ քիչ աղերս ունի բարձրացված հարցերի հետ, քանի որ ոլորտային ռազմավարական հարցերը միանձնյա չեն ընդունվում, այլ ամբողջ կառավարության եւ դրա ղեկավարի կողմից են «դակվում»՝ իբրեւ տեսլական: Հետեւաբար, Հարությունյանին, ասենք՝ Փիլիպոսյանով փոխելը ոչինչ չի տա: Իսկ եթե, այնուամենայնիվ, պետք է անձ փոխվի, ըստ իս, փոխնախարար Արեւիկ Անափիոսյանն է թիվ մեկ մարդը, որ պետք է հրաժեշտ տա իր փոխպորտֆելին, որովհետեւ օդում կախված լուրերի համաձայն՝ հենց նա է տվյալ նախարարության թիվ մեկ ապազգային ֆիգուրը:

**- Ազգային լեզուն, գրականությունն ու պատմությունն ի՞նչ տեղ պետք է ունենան մեր կրթական ոլորտում:**

- Այ այստեղ է թաղված շան գլուխը. սա՛ է հարցի ողջ էությունն ու հենց այստե՛ղ էլ պետք է փնտրել փիլիսոփայությունը: Իրականում, սրանք ոչ թե սոսկ դասավանդվող առարկաներ են կամ, առավել եւս, քաղաքական գետնի վրա քննվող հարցեր, այլ՝ քաղաքակրթական նշանակության խնդիրներ, որոնք հարուցում են խորը մտահոգություններ այն իշխանության նկատմամբ, որը զանց է առնում սեփական ազգի լեզուն, պատմությունը եւ գրականությունը: Եկեք հրանցիկ հայացքով քննության առնենք վարչապետից մինչեւ ամենաստորին օղակում գտնվող չինովնիկը եւ տեսնենք՝ նրանցից քանի՞սն են հայերենը կամ, որ նույնն է՝ մեր մայրենի լեզուն, դիտարկում, կրում ու ընկալում ոչ թե սոսկ որպես հաղորդակցման միջոց, այլ՝ մշակույթ, վաղնջական բովանդակ մի ժողովրդի ու ազգի քաղաքակրթության անկյունաքար, հենման կետ եւ կամ լինելիության գրավական ու փարոս, քանի՞սն են հայ գրականության մեջ որոնում իրենց իսկ ազգային պատկանելության, իրենց իսկ տեսակի գեղարվեստական հերոսին, իրենց ազգի գեղագիտական իդեան ու իդեալը, քանի՞սն են հայոց պատմության մեջ որոնում ու գտնում իրենց ազգի ու ժողովրդի հերոսականությունը, պայքարի եւ հաղթանակի կոնցեպտը... Երեք իմաստակիր եւ հոդաբաշխ նախադասություն կազմել չկարողացող չինովնիկական մի փաղանգ լծվել է հայոց կողմից հազարամյակներով ստեղծված քաղաքակրթության երեք հիմնասյուների սաստիկ պրիմիտիվ քննման ու քննարկման ապաշնորհ ու անպտուղ գործին՝ հասցնելով դրանք դասավանդվող «շարքային» կամընտրական առարկաների մակարդակի, որոնք այլեւս ավելորդ են դիտվում ապագա ՀԱ՛Յ ֆիզիկի, կիբեռնետիկի, տնտեսագետի, իրավաբանի, կենսաբանի եւ այլոց համար: Այնինչ, պետք է առաջին կուրսից մինչեւ մագիստրատուրա վերջին կուրս ամենայն մանրակրկտությամբ դասավանդվեն, ուսուցանվեն, մատուցվեն այս երեք ազգային արժեքները, որոնցով է գերազանցապես ուրվագծվում մեր քաղաքակրթական արժեքն ու արժեհամակարգը: Ցավ ի սիրտ, հետանկախության բոլոր իշխանությունները զառանցական վերաբերմունք են ունեցել ինքնության այս երեք հզոր բաղադրիչների նկատմամբ:

**- Եթե նախագիծը հավանություն ստանա նաեւ ՀՀ կառավարության կողմից, որպես գրող, մանկավարժ եւ ամենակարեւորը՝ հայ մարդ, ի՞նչ եք պատրաստվում անել:**

- Անկեղծորեն մի ռոմանտիկ հույս եմ փայփայում, որ ազգի ամբողջական շահին ծառայելու գործուղված կամ այդ շահերը պատշաճորեն իրացնելու կոչված ընկերները կվերանայեն իրենց մոտեցումները: Հակառակ պարագային՝ ես այնտեղ եմ, որտեղ կարիք կա ամուր պահելու ԱԶԳԱՅԻՆ արժեքն ու արժեհամակարգը, իսկ թե ինչ ձեւով կդրսեւորվի իմ պայքարի կերպը՝ կթելադրի տվյալ ժամանակն ու իրավիճակը:

Զրուցեց՝
ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆԸ

---

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Հայաստանի վաստակավոր լրագրող

# Հարցականի տակ չդնե՛նք

Երբեւէ չի եղել որեւէ հեղափոխություն կամ նույնիսկ պետական հեղաշրջում, որի դրոշին ժամանակի ամենավսեմ կարգախոսները գրված չլինեին: Երբ ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխության առաջնորդներից մեկին բարձրացնում էին կառափնարան (քանզի գրեթե բոլոր հեղափոխությունները խժռում են իրենց զավակներին, ընդսմին՝ ամբոխների հրճվալից աղաղակների ուղեկցությամբ), պարանոցը գիլյոտինի տակ դնելուց առաջ թշվառի աչքին ընկավ խոշոր տառերով գրված մի ցուցապաստառ՝ Ազատություն, Հավասարություն, Եղբայրություն: Հենց այդ երեք բառերի մեջ էր ֆրանսիական հեղափոխության գլխավոր կարգախոսը, եւ նա մատը մեկնելով՝ բացականչեց. «Եվ, այնուամենայնիվ, դա ե՛ս եմ ստեղծել»:

Ամենեւին միտք չունեմ անդրադառնալու այն հարցին, թե պատմական այս կամ այն անձնավորությունը կոնկրետ ի՞նչ ներդրում է ունեցել այս կամ այն հեղափոխության կամ նույնիսկ՝ հաջողված ու նույնիսկ ձախողված պետական հեղաշրջումների մեջ: Եվ ապա՝ տվյալ հեղափոխությունը ժամանակին կամ թեկուզ հետագայում ինչպե՞ս է փոխհատուցել յուրաքանչյուր անհատ քաղաքացու վաստակը: Կամ գոնե ըստ արժանվույն գնահատե՞լ է նրան, թեկուզեւ ուշացումով հարգանքի տուրք մատուցե՞լ, թե՞ չի մատուցել հեղափոխության անմիջական կրողին:

Անշուշտ, մեծ կամ փոքր անհատների մեծ կամ փոքր դերակատարությունների դասակարգումը ավելի շատ պատմաբանների, քան՝ տվյալ իրադարձությանը մասնակից շարքային ակտիվ կամ պասիվ քաղաքացիների գնահատման խնդիրն է: Սակայն թե՛ պատմաբանները, թե՛ հեղափոխական հորձանուտի մեջ կամա-ակամա ներքաշված հարյուր-հազարավոր մարդիկ իրավունք ունեն ու նույնիսկ պարտավո՛ր են իմաստավորել, թե տվյալ հեղափոխությունը հասա՞վ կամ հասնելո՞ւ է այն նպատակներին, որ դրել էր իր առջեւ: Եվ եթե հասավ՝ ի՞նչ չափով, եթե չհասավ՝ ի՞նչը խանգարեց: Արդ, եկեք դիտարկենք, թե կոնկրետ ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությունը իր հաղթանակից ավելի քան երկու դար անց հասե՞լ է իր դրոշին գրված Ազատություն, Հավասարություն, Եղբայրություն կարգախոսի թեկուզեւ մեկ բաղադրիչին:

Ավա՜ղ, ըստ իս՝ դեռ չի՛ հասել: Ֆրանսիայում, անշուշտ, շարքային քաղաքացիների ազատությունը անհամեմատ ավելի մեծ է, քան ոչ-ժողովրդավարական պետությունների մեջ ապրող քաղաքացիներինը: Էլ չեմ ասում՝ ժողովրդավարության ուղին դեռ նոր ոտք դրած պետությունների քաղաքացիների ազատությունն է: Բայց այնտեղ կա՞ քաղաքացիների կատարյալ հավասարություն: Էլ չեմ ասում՝ եղբայրություն: Չկա եւ պարզապես՝ չի՛ կարող լինել: Որովհետեւ մարդիկ բնականից հավասար չեն, մեկը գեղեցիկ է, մյուսը՝ տգեղ, մեկն աշխատասեր է, մյուսը՝ ծույլ, մեկն ընդունակ է, մյուսը գենետիկորեն տգետ: Մեկն ունեւոր է, մյուսն աղքատ, մեկն առողջ է, մյուսը՝ հիվանդոտ...Եթե բոլորը հավասարաչափ գեղեցիկ, խելացի, աշխատասեր ու բոլոր մյուս չափորոշիչներով իրար նման լինեին, ապա աշխարհի բազմազանությունը կվերանար, մարդիկ տվյալ հասարակության մեջ ուղղակի չէին կարողնա ապրել, շնչահեղձ կլինեին միօրինակությունից:

Նույնը եւ՝ համընդհանուր եղբայրության գաղափարի հաղթանակի դեպքում: Դա նույնպես գեղեցիկ հեքիաթ է, համենայն դեպս՝ հայն ու թուրքը երբեք, նույնիսկ շատ հեռավոր ապագայում, եղբայրներ լինել չեն կարող: Տարբեր ժողովուրդների, եւ նույնիսկ միեւնույն ժողովրդի տարբեր խավերին պատկանող մարդկանց միջեւ արյան, թշնամանքի ու անհասկացողության օվկիանոսներ կան, որոնց հաղթահարելը անհնար է:

Որպեսզի որեւէ հեղափոխություն, այդ թվում նաեւ մոտ երկու տարի առաջ Նիկոլ Փաշինյանի գլխավորած հեղափոխությունը Հայաստանում իրական արդյունքներ բերի, պիտի ազգովին հասկանանք՝ հեղափոխության հաղթանակից հետո դեռ շատ կարճ ժամանակ է անցել: Հարկ է դադարեցնե՛լ անիմաստ, հաճախ նաեւ անարդար պատերազմը անցյալի բոլոր լավ ու վատ դրսեւորումների դեմ: Հանուն մեր իսկ ապագայի՝ պետք է հաղթահարե՛նք մեկը մյուսին հոշոտելու մոլուցքը, որն ավա՜ղ՝ գնալով խորանում է: Հարկ է համաներո՛ւմ հայտարարել մեր իսկ հեռավոր կամ մոտավոր անցյալի բոլոր իրական կամ երեւակայական մեղքերի համար: Եվ հետեւել, որ այսուհետ բոլորը հավասար լինեն օրենքի ու խղճի առաջ: Արեցի՞նք՝ կմտնենք զարգացման նոր փուլ, չարեցի՞նք՝ կվարկաբեկենք մե՛զ էլ, հեղափոխությունն էլ:

Ամենակարեւորը՝ հարցականի տակ կդնենք երկրի ապագան, սերունդների ճակատագի՛րը:

# «Երբ իշխանությունը ճակատագրական սխալ է թույլ տալիս, ժողովուրդը գալիս է ուղղելու այն».

## Գեղամ Օհանյան

***Քարվաճառում կառուցվող ՀԷԿ-ի ու դրա շուրջ բարձրացած աղմուկի մասին զրուցել եմ բնապահպան-ակտիվիստ, «Խարույկ» արշավախմբի հիմնադիր Գեղամ Օհանյանի հետ:***

**-Գեղամ, արդեն մի քանի օր է, ինչ Քարվաճառում մեծ աղմուկ է բարձրացել՝ կապված Թարթառ գետի վրա կառուցվող ՀԷԿ-ի շինարարության հետ, Ալեքսանդր Քանանյանը նույնիսկ հացադուլ է հայտարարել: Ի՞նչ գիտեք այդ մասին:**

-Ճիշտն ասած Արցախի բռնաբարվող բնության մասին վաղուց եմ տեղյակ, երբ դեռ բանակում ծառայելուս տարիներին, ձմռանը, թաց, ու առողջ ծառերը հատում եւ բերում էին զորամասը տաքացնելու նպատակով:



Բնականաբար մենք պետք է չմոռանանք, որ Արցախը իր սահմանի գրեթե ողջ երկայնքով ունի ռազմաճակատ եւ շրջապատված է թշնամի զորքով: Այսինքն արցախաբնակ հայը մի փոքր այլ կերպ է նայում կյանքին, եւ առաջնայնությունները արցախցու մոտ ավելի շատ պաշտպանական են ու ռազմական:

**-Վերջին տարիներին Դուք համարյա բնապահպանական բոլոր ակցիաների կիզակետում եք: Եթե իրավիճակը սրվի, պատրա՞ստ եք կանգնել նաեւ Քանանյանի կողքին:**

-Չգիտեմ, կանգնել ասելով ինչ նկատի ունեք, բայց օրեր առաջ փոքրիկ հոդվածով եմ հանդես եկել ֆեյսբուքյան իմ էջում եւ զորակցությունս հայտնել Քանանյանին:

Ինչպես արդեն նշեցի վերեւում, Արցախում, բնակիչները այլ կերպ են մտածում եւ այն պայքարի տարբերակները, որոնք մենք կիրառում ենք Երեւանում, ըստ իս Արցախում բնական շունչ չեն ստանա եւ չեն գրավի մարդկանց սրտերը:

**-Կառավարությունն այստեղ անելիք ունի՞, թե՞ ոչ: Նա պե՞տք է ուշադրություն դարձնի մտավորականի այդ ծայրահեղ քայլին ու փորձի շտկել հարցը: Ինչ կարծիք ունեք այս մասին:**

-Կառավարությունը ոչ թե պետք է արձագանքի մտավորականի ծայրահեղ քայլին, այլ այդ մտավորականի բարձրացրած հարցին: Խնդրի լուծումը բնականաբար իշխանությունների մտքի թռիչքին է սպասում:

Բայց երբ իշխանությունը ճակատագրական սխալ է թույլ տալիս, ժողովուրդը գալիս է ուղղելու այն, մենք այսօր ունենք դրա վառ օրինակը Ամուլսարում:

Հիշեցնենք, որ երկար ժամանակ Թարթառ գետի վրա կառուցվող ՀԷԿ-ի վերաբերյալ իր բողոքի ձայնն է բարձրաձջել քարվաճառցի մտավորական Ալեքսանդր Քանանյանը: Չկարողանալով իշխանությունների ուշադրությունը հիրավիրել երեւույթի վրա, օրեր առաջ մտավորականը անժամկետ հացադուլ է հայտարարել:

Այս պահի դրությամբ ո՛չ Արցախի, ո՛չ ՀՀ-ի ղեկավարությունը որեւէ կերպ չեն արձագանքել:

**Գեւորգ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ**
**Վարդենիս**

***Խմբ. կողմից.*** *- Տեղեկացնենք, որ ոչ միայն բնապահպանները, այլեւ ոչ քիչ թվով մասնագետներ նույնպես դժգոհ են ՀԷԿ-ի կառուցումից, հատկապես Թարթառի ջրերը խողովակների միջով մղելու գործընթացից: Նրանց կարծիքով, ՀԷԿ-ի կառուցումը տնտեսապես էլ արդարացված չէ. «փոքր շահ՝ մեծ կորուստներով» բնորոշումն են տալիս այդ նախագծին:*

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**

# ...4-րդ իշխանություն. ո՞վ է հեղինակը

Նախորդ դարի 60-ականներից մինչեւ օրս փորձել եմ վերնագրում դրված սույն մտորումներիս արդյունքում հարցի պատասխանն ստանալ, եւ... ապարդյուն: Կախման կետերի տեղում բաց թողած բառը կուզեք մամուլ անվանեք, կուզեք ժուռնալիստիկա, խնդիրը չի պարզվում: Առավել եւս՝ հայաշունչ լրագրության պարագայում, երբ գործը լուր գրելուց բացի նաեւ բացահայտման, վերլուծության, հետազոտման եւ հասարակական ու հանրային այլ հետաքրքրությունների շրջանակ է ընդգրկում: ՀՍՀ հանրագիտարանի 7-րդ հատորի «Մամուլ» նյութում ասվում է. տարածված իմաստով՝ պարբերական հրատարակություններ, մասնավորապես, թերթեր ու ամսագրեր: Իսկ ահա «Ժուռնալիստիկա»-ի տակ նշված է. զանգվածային հաղորդակցության միջոցներով հրապարակ ինֆորմացիա հավաքող, մշակող եւ պարբերաբար տարածող հասարակական գործունեության տեսակ: Ընդամենն այսքանը, որը մեր օրերում էլ կարելի է նորովի խմբագրել, սակայն չտարածվեմ:

Այս ամենը մի կողմ թողած՝ մեզանում սպասվածից էլ հաճախ է արտաբերվում «մամուլը 4-րդ իշխանություն է» արտահայտությունը, երբ խոսքը շատ դեպքերում «երեխեք ջանով» որակավորվող մեր մասնագիտության ներկայացուցիչներին է վերաբերում: Այսօրինակ իրավիճակներում չգիտես ինչու պարզապես մոռացվում է վայրկյաններ առաջ իշխանություն հռչակվողի հանգամանքը, որը տեղը զիջում է ժպիտների փոխանակմանը: Այսօրինակ տրամադրություն ապրեցի անցյալ շաբաթավերջին ՀՀ վարչապետի կապանյան ասուլիսը հեռուստատեսությամբ դիտելու ընթացքում: Ակտիվ լրագրությամբ զբաղվող ՀՀ քաղաքացիս թեեւ մասնակցել էի նախորդ մի քանի ասուլիսներին, անգամ հարց ուղղելու հնարավորություն էի ունեցել, ասել է թե հաշվառված էի ՀՀ կառավարության համապատասխան վարչությունում, այս անգամ մոռացության էի արժանացել: Էապես սահմանափակ տպագիր ու էլեկտրոնային մամուլի ներկայացուցիչները իրենց խմբագիրների ու գործատուների ցանկություններն ու նպատակները հետապնդող հարցեր էին ուղղում ՀՀ վարչապետին, կարծես արածից ու աշխատանքից գոհունակություն ստանում: Դրանք հիմնականում լայն հանրային հետաքրքրությունների շրջանակից էին, շատ դեպքերում թե՛ հարց տալու շարժառիթն էր հայտնի, թե՛ դրանց տրվող պատասխանների բովանդակությունը: Ո՞վ չգիտի, որ մեր բանակը լավագույնս է արդիական զինատեսակներով զինվում, իշխանությունն ամեն ինչ է անում երկրի ֆինանսատնտեսական կայունության ամրապնդման ուղղությամբ, ճանապարհներն են վերակառուցվում, աշխատավարձերն են բարձրացվում, իշխանության բնորոշմամբ՝ գնաճն է զսպվում... ուր որ է Հայցարիա թե Հայլանդիա-ում ենք հայտնվելու, շվեյցարացիների ու ֆինլանդացիների բարի նախանձին ենք արժանանալու: Բայց այս ամենը՝ հետո, պարզ չէ երբ, քանզի առավել կարեւորը մեր այսօրն է, ՀՀ տնտեսության վիճակը, մեր հաց ու կաթը, կերածն ու խմածը, որոնց կառավարության ղեկավարը իր ցանկության սահմաններում թռուցիկ անդրադարձավ: Չէր ասելու, չէ՞, որ գդալ- պատառաքաղից ու պարզ ներքնազգեստներից մինչեւ էլեկտրամոբիլների եւ ուղղաթիռների արտադրություն ենք իրականացնելու, մեր հողա-ջրա-ջերմային կարողությունները ենք առավելագույն արդյունավետությամբ օգտագործելու, փոքր ու միջին գործարարությունն ենք մեր առօրյան դարձնելու, ՀՀ-ում բոլոր առումներով միայն առողջ միջավայր ենք հաստատելու: Դրանք մեզանում տեսանելի ապագայում լուծվող խնդիրներ չեն, տասնամյակներ են պահանջվում, ֆինանսական միջոցներ պետք է հայթայթել, կադրերի խնդիր կա, հետն էլ՝ կոռումպացված համակարգի մնացուկների դիմադրությունը: Ընդհանրապես վերջին այս թեման իշխանության ներկայացուցիչների բառապաշարի անբաժանելի մասն է, այն հարկի-անհարկի հիշվում է յուրաքանչյուր առիթով, երբ թերեւս տեղին կլինի նաեւ սեփական թերություններից խոսել, ասենք՝ երկրի պարենանվտանգության գրեթե վտանգված խնդրից: Հիմնական սննդատեսակներից մսամթերքներով ՀՀ ապահովվածությունը հազիվ 30-35 տոկոս է, կաթ-կաթնամթերքներով՝ 50-60 տոկոս, երկիրը գրեթե չի արտադրում կարագ ու ձեթ, շաքարավազն ու դրա հումքը ներկրվում է, ալյուրով ու ցորենով ինքնաբավությունը 30-40 տոկոսի սահմանագծում է, հատիկավոր մշակաբույսերից թերեւս միայն լոբու աննշան քանակներ են ստացվում: Կարծես հույս կար, որ ՌԴ-ից հրավիրված գյուղոլորտի մասնագետ բարձրագույն պաշտոնյան գյուղատնտեսությունում բարեփոխումների ծրագրեր կսկսի, նորովի աշխատելու հիմքեր կդնի: Ավաղ, տարօրինակ որոշմամբ ՀՀ-ում հազիվ 1,5 տարի պաշտոնավարած մասնագետը Հայաստանից հեռացվում է... դեպի Մոսկվա, առավել կոնկրետ՝ ԵԱՏՄ գործադիր մարմին, ՀՀ-ին վերապահվող բարձրագույն պաշտոնի: Ինչու եմ նման գործընթացը տարօրինա՞կ համարում. պարզ մի պատճառով: Դպրոցն ավարտելուց հետո ամբողջ երեք տասնամյակ մարդն ուսանել ու աշխատել է ՌԴ-ում եւ միայն 2018-ի իշխանափոխությունից հետո հրավիրվել ՀՀ: Ոչինչ, որ նոր իշխանությունը այդ 30-ամյակում ներսում մնացած, տառապած ու պայքարած, հույսեր ներշնչող երիտասարդ գեթ մեկ մասնագետ կադր չի գտել, թեեւ վստահ եմ, ագրարային համալսարանի հազարավոր շրջանավարտների թվում նրանք տասնյակներով կան: Առավել անհասկանալի է նաեւ այն, որ թե՛ 2018-ին, թե՛ 2019-ին ՀՀ գյուղոլորտի կառավարման բարեփոխումներ չեն արձանագրվել, այստեղ միայն անկում է գրանցվել, ՀՀ պարենային ապահովությունն ու անվտանգությունն իրականացվել է հիմնականում աշխարհի չորս կողմերից սննդի ու հումքի ներկրումների արդյունքում: Յուրաքանչյուր օր հեռարձակվող հեռուստառեպորտաժները հաստատում են, որ անգամ հույսի նշույլներ չկան, որ առաջիկա՝ ասենք տասնամյակում հայկական գյուղերն ու հայ գյուղաբնակները հնարավորություն կունենան արդյունավետ գործունեություն ծավալել:




ՀՀ-ում տնտեսական բարեփոխումների նախապայման հանդիսացող վստահության միջավայրի ստեղծման անորոշությունն է, որ ոչ վաղ օրերի միակամ համակիրներին աստիճանաբար այլախոհներ է դարձնում, վերջիններից էլ առավել արագ արդյունքներ ակնկալողներին քննադատներ, եւ այսպես մինչեւ վարչապետական բնորոշմամբ՝ հակա-ներ: Յուրօրինակ սեւի ու սպիտակի գործընթաց տեսնելու նախաշաններ մեկի կողմից, ով քաղաքական գնահատականներ հնչեցնելու գայթակղությունից մշտապես է խուսափել, քանզի համաշխարհային զարգացումների օրինակով համոզված է, որ հնարավորինս ինքնաբավ տնտեսությունն է՝ այստեղ էլ անվտանգությունը պարենային առումով՝ երկրի լիարժեք կայացման նախապայմանը, նույնիսկ վերգետնյա թե ստորգետնյա ռեսուրսների իսպառ բացակայության եւ անբարյացակամ հարեւանների առկայության պարագայում: Տարօրինակորեն թե ցավալիորեն ա՛յս է որ չինչեց հիշատակված ասուլիսի մասնակից երկու կողմերից, երբ երկուսն էլ իրենց իշխանության կրողներ են համարում, ավաղ... անզորի ու անօգնականի վիճակում:

**27.01.2020 թ.**

AZG NEW SHABAT.QXD 30/01/2020 21:51 Page 8



ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# Անդրանիկի հասցեները ԱՄՆ-ում

Նախանցյալ տարի բովանդակ հայությունը նշեց Զորավար Անդրանիկի ծննդյան 150-ամյակը, սակայն նրա աստանդական կյանքի բազմաթիվ մանրամասներ ցարդ ճշտման եւ հետազոտման կարիք ունեն: Մինչ այժմ քիչ բան է հայտնի այն մասին, թե որտեղ, ինչ պայմաններում է անցկացրել Անդրանիկն իր կյանքի ամերիկյան շրջանը:

Երբ Կիլիկիան ազատագրելու բոլոր հույսերն ի դերեւ ելան, 1922-ին կնոջ՝ Նվարդի հետ Զորավարը մեկնեց ԱՄՆ, որտեղ պիտի ապրեր իր կյանքի վերջին ժամանակահատվածը: Հուլիսի 12-ին հասնելով Նյու Յորք՝ Անդրանիկն ու Նվարդն իջեւանեցին Նյու Յորք Սիթիի «Սեւիլ» հյուրանոցում: Ներկայումս «Քարլթոն» վերանվանված հյուրանոցում, որի 1904 թ. կառուցված շենքը պահպանվում է պետության կողմից:

Կարճ ժամանակ անց Զորավարը Նյու Յորքից տեղափոխվեց



Սեւիլ հյուրանոցի շենքը:

Ֆրեզնո, Կալիֆորնիա, որտեղ մեծ հայ համայնք կար, օդը չոր էր եւ նպաստավոր հոդացավով տառապողների համար, քաղաքն էլ իրեն դեռ 1920 թ.՝ ԱՄՆ առաջին այցելության ժամանակ էր դուր եկել. «Այս ինչ սքանչելի կլիմա եւ երկիր է, ճիշտ Եգիպտոսի Հելվան քաղաքի կլիմային նման...», ասել էր Անդրանիկը:

Անդրանիկը նաեւ ճանապարհորդում էր. կեցության իրավունք ստանալու նպատակով մեկ տարի անց հատեց Մեքսիկայի սահմանը եւ կրկին վերադարձավ Ֆրեզնո: Նաեւ եղավ հայաշատ քաղաքներում եւ քարոզեց հայությանը՝ օգնելու հայ որբերին եւ գաղթականներին:

Որքան հայտնի է՝ Ֆրեզնոյում Անդրանիկը հաջորդաբար բնակվել է երկու տներում: Առաջինը՝ Բաթլեր պողոտայում (E Butler Ave.) վարձված փայտաշեն հին տունն էր, որը հրդեհվեց, եւ իրերի մի մասն այրվեց: Նույն Բաթլեր պողոտայում էր գտնվում այն հողամասը, որտեղ Անդրանիկը սեխ էր աճեցրել, որը իր բեռնատարով Սան-Ֆրանցիսկո էր ուղարկում:

Անդրանիկ Չելեպյանի «Զորավար Անդրանիկ» գրքում Ֆրեզնոյի տան հրդեհն այսպես է նկարագրվում. «Բոցավառ շենքէն ներս մտնելով, Անդրանիկ կարգ մը բաներ ազատեց, բայց երբ կրակը սաստկացաւ, հրշէջները արգիլեցին ներս մտնել»: Դրանից հետո Քալիֆորնիայի հայ համայնքը Հայոց հերոսին նվիրեց խանութներ Նորթ Վեն Նես բուլվարում (N Van Ness Blvd, Fresno, CA) եւ եկամտաբեր բնակարան: Ամերիկաբնակ Ս. Յարալյանի շնորհիվ մեզ հաջողվեց պարզել այն տան հասցեն, որտեղ Անդրանիկը տեղափոխվել էր հավանաբար նախորդ տան հրդեհից հետո. 1926 թ. ամռանը թափքավոր «փիքափ» բեռնատարի հարկային ստացականում նշված է Անդրանիկի հասցեն՝ 22 M Street, Fresno CA: Այն գտնվում է հին հայկական քաղաքամասում (Old Armenian Town)՝ հայկական Սուրբ Երրորդություն եկեղեցու մոտակայքում: 1914 թ. կառուցված այս եկեղեցին Ֆրեզնոյի հայ համայնքի հիմնական հավաքատեղին էր, այստեղ էլ կատարվեց Անդրանիկի հոգեհանգիստը: Ի դեպ, այն ներկայումս կանգուն հնագույն հայկական եկեղեցին է ԱՄՆ-ում:

Տունը չի պահպանվել. Էմ փողոցի սկզբնամասում ներկայումս արդիական ծածկասրահներ են, սակայն այդ տեղերում դեռ կանգուն են այն ժամանակների համր ականատես՝ արտադրական բնույթի հին շինություններ, ինչպիսիք սովոր ենք տեսնել Չարլի Չապլինի ֆիլմերում:

Ֆրեզնոյում դիմագրավելով մի շարք դժվարություններ, հատկապես առողջության վատթարացումը, Անդրանիկը պարտադրված տեղափոխվեց Սան-Ֆրանցիսկո՝ իր կյանքի վերջին ամիսների օթեւանը: Ու եթե Ֆրեզնոյում Անդրանիկի բնակված տների լուսանկարներ մեզ ցարդ հասնի չեն, ապա Սան-Ֆրանցիսկոյի դեպքում բախտն անսպասելիորեն ժպտաց. Զորավարի թիկնապահ ու օգնական Լեւոն Լյուլեճյանի (1893-1974) դիվանում (Ս. Յարալյանի հավաքածու) աչքս ընկավ մի ծրարի, որի վրա Անդրանիկի հետադարձ հասցեն էր՝ 325 Franklin Street, apt. 35, San Francisco CA: Նամակը գրված էր 1925 թ. մայիսին: Փորձեցի ճշտել այդ տան ճակատագիրը. պարզվեց, որ 1922 թ. կառուցված այդ եռահարկ փայտե բազմաբնակարան տունը մինչ այժմ կանգուն է, գտնվում է Hayes Valley բազմազգ թաղամասում եւ նույնիսկ հասցեն չի փոխվել: Շենքում կա 42 սենյակ եւ 19 լոգարան (շենքը լուսանկարելու համար շնորհակալություն եմ հայտնում հայագետ Արծվի Բախչինյանին):





Զորավարի նամակը Լեւոն Լյուլեճյանին:



Անդրանիկի բնակած տունը Սան-Ֆրանցիսկոյում:

Գրեթե նույնությամբ պահպանվել է Ռիչարդսոն Սփրինգս հանքային ջրերի առողջարանային համալիրը՝ հյուրանոց-բուժարանը. այնտեղ բժիշկների խորհրդով Անդրանիկը փոխադրվեց 1927-ի օգոստոսի սկզբին:

Ռիչարդսոն Սփրինգսն ավան է Չիքո քաղաքի հյուսիս-արեւելքում, Կալիֆորնիա: Գտնվում է ծովի մակերեւույթից 189 մ բարձրության վրա: Հիմնվել է 1898 թ.՝ Ռիչարդսոնների կողմից: Ռիչարդսոն Սփրինգսն էլ 1926-ին այրվել եւ ապա վերակառուցվել էր:

Մինչեւ բուժարան ուղեւորվելը Անդրանիկը մի նամակ գրեց Լեւոն Լյուլեճյանին. «Սիրելի Լեւոնս, մեզի համար նոր տուն մը վարձէ, ջուրէն վերադարձիս կփափաքիմ Ֆրեզնօ բնակիլ: Ֆրեզնոյի օդն ու ջուրը ինծի համար շատ նպաստաւոր են»:



Սուրբ Երրորդություն եկեղեցին Ֆրեզնոյում:



Ռիչարդսոն Սփրինգս հյուրանոց-բուժարանի ներքին հարդարանքը:

Օգոստոսի 29-ին նրան 313 սենյակում այցելում է հավատարիմ զինակից զորավար Սմբատ Բորոյանը: Երկու օր անց Զորավարը հավերժ փակում է աչքերը՝ հառաչելով.

-Գործս կիսատ մնաց:

Անդրանիկի այս վերջին հանգրվանում 2010 թ. նրա հիշատակին աղբյուր կառուցվեց:

# «Որեւէ իշխանություն՝ որքան էլ բարի նպատակներով գա, տապալվելու է, քանի դեռ չի կարեւորում ...»

⇨5

**-Կան քաղաքական ուժեր, անհատներ, որոնք ազգային համաձայնության կառավարություն ձեւավորելու միջոցով են պատկերացնում իրավիճակից դուրս գալու ելքը՝ համագործակցությամբ արտախորհրդարանական տարբեր ուժերի, որոնցից մի քանիսի հայտարարությունների տեքստերում արձագանքներ նկատելի էին, եւ իշխանության, եթե այդ կամքի դրսեւորումը լինի վերջինիս կողմից. մտահոգությունը՝ երկիրը ավելորդ ցնցումներից ետ պահելն է: Կարծես դուք եւս այսպիսի առաջարկ հնչեցրիք:**

- Առաջիններից մեկը, որ խոսել է նոր ընտրությունների եւ ազգային համաձայնության կառավարություն ձեւավորելու մասին, թերեւս ես եմ եղել: Երբ հայտարարվեց, որ Սահմանադրական դատարանում կա ճգնաժամ, ես հակադարձեցի, որ ճգնաժամը խորհրդարանական է: 2018-ի դեկտեմբերի 9 -ի ժողովուրդը չորս ամիս անց այլեւս չկար եւ ամսեամիս փոխվում է: Այս խորհրդարանը պատմական հիշողություն է, արտահայտում է չեղած ժողովրդի իղձերը, ԱԺ-ում պետական լուրջ խնդիրներ չեն քննարկվում, օրվա մտահոգիչ հարցերն այնտեղ չեն հասնում, այնտեղ հանգստություն է տիրում, կապը ժողովրդի հետ խզված է, մինչդեռ ժողովուրդը ցնցումների մեջ է, ցույցեր են արվում, փողոցներ են փակվում: Նման իրավիճակներում նորմալ երկրներում նոր ընտրություններ են անցկացվում, որպեսզի առկա իրավիճակին համապատասխան առաջացած հոսանքներն իրենց ներկայացուցիչները բերեն խորհրդարան:

**- Իսկ ի՞նչ են փոխելու նոր ընտրությունները, երբ նույն որակի հանրություն ունենք, ի՞նչ է պետք անել, որ մարդկանց մեծամասնությունը կարողանա նոր որակի քաղաքական մտածողություն կրողներին տարբերել, ճանաչել:**

- Նոր ընտրությունները եւ ազգային համաձայնության կառավարությունը անհրաժեշտ են, քանի որ սա կօգնի՝ բողոքի այս ալիքները, ագրեսիաները համացանցից ու փողոցից տեղափոխելու ԱԺ դահլիճ, որ քննվեն այնտեղ, հաշվի առնվեն տարբեր դիրքորոշումներ եւ ավելի արդյունավետ որոշումներ կայացվեն: Ագրեսիան կթուլանա ժամանակավորապես, որեւէ քաղաքական ուժ խորհրդարանում ճնշող մեծամասնություն չի ունենա: Իմ կարծիքով, իշխող խմբակցությունը չունի հիմա այն հեղինակությունը, որ 51 տոկոսը հաղթահարի: Բացի դա հարկավոր է անցողիկ շեմն իջեցնել, որպեսզի 7- 8 հոսանք մտնի խորհրդարան, իրական մտահոգություն լինի, բանավեճեր ընթանան: Մինչ այդ հարկավոր է որոշ ինքնակազմակերպման եւ կազմակերպչական աշխատանքներ տանել ժողովրդի հետ: Սակայն ընտրություններն էական փոփոխություններ չեն բերի, ընդամենը գալու են եղած լարվածությունները ժամանակավորապես թուլացնելու, այլապես նման սրված մթնոլորտը հնարավոր է քաղաքացիական ընդհարման տանի: Դարձյալ կրկնեմ՝ երկիրը հիմնովին վերափոխելու համար քաղաքական այնպիսի հոսանք է հարկավոր, որը ժողովրդի խնդիրները հասկացել է խորությամբ, ախտորոշել է դրանք եւ ունի լուծումներ, ճանապարհային քարտեզ՝ թե ինչպես Թումանյանի ասած «խալխին» հանի այս իրավիճակից ու վերածի պետականակիր ժողովրդի:

Հարցազրույցը՝
ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆԻ

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Կա՛մ Լուսին, կա՛մ վիսկի



Հայաստանից շատ հեռու՝ Մեծ Բրիտանիայում, կոնկրետ՝ Ուելսի Սուոնսի քաղաքի՝ բանաստեղծ Դիլան Մարլայս Թոմասի կենտրոնի մոտ, տեղի է ունենում մի դասական իրադարձություն: Հանդիպում են հոռետեսն ու լավատեսը: Քանի որ Մեծ Բրիտանիայում բոլոր պապարացիները գործուղվել են Կանադա՝ հետաքննելու, թե ինչով են գիշեր-ցերեկ զբաղված արքայական կոչումներից հրաժարված արքայազնը եւ կինը, ավելի ճիշտ՝ ուղղակի Հարրին եւ Մեգան Մարքլը, այս հանդիպումը ուշադրության չի արժանանում: Մինչդեռ հոռետեսը, գուցե մառախլապատ եղանակի, հնարավոր է՝ միգամած բնավորության պատճառով ասում է. «Ես չգիտեմ, թե ինչով կավարտվի Բրեքսիթը, եւ կհասնի՞ արդյոք բրիտանական ափ չինական կորոնավիրուսը, բայց ես վստահ եմ, որ մեր երկրում ավելի վատ չի լինի»: Լավատեսը, սակայն, առարկում է. «Ոչ, ոչ, ի՞նչ ես ասում, կլինի, այ կտեսնես, հաստա՛տ կլինի»:

Լուրջ ենթադրություն ունեմ, որ Ուելսի ծովափնյա այս քաղաքում, որտեղ, ի միջի այլոց, գտնվում է Մեծ Բրիտանիայում ավտոմեքենաների գրանցման կենտրոնական գրասենյակը եւ Ուելսի ամենամեծ փակ շուկան, այս դասական հանդիպման ներկաները հայեր են եղել: Ընդ որում՝ ե՛ւ հոռետեսը, ե՛ւ լավատեսը: Խնդիրն այն է, որ միայն հայերը կարող են ասել, թե ավելի վատ չի լինի, եւ պետք է անպայման հայ լինես, որ հակառակը պնդես՝ ինչպե՞ս թե, հաստատ կլինի:

Հենց այս տրամաբանությամբ էլ ապրում ենք Հայաստանում: Բայց որպեսզի գործող իշխանությունը չնեղանա, իսկ գործող իշխանությունը սիրում է նեղանալ, ինչը կարող է ծանր հետեւանքներ ունենալ նրա համար, որից նեղանում է, ասեմ, որ Հայաստանում այս սկզբունքով ապրում էինք ե՛ւ Տեր-Պետրոսյանի ժամանակ, ե՛ւ Քոչարյանի օրոք, ե՛ւ Սերժ Սարգսյանի տարիներին: Հիմա պարզապես իշխանությունը վստահեցնում է, որ երկրում ավելի վատ չի լինելու, իսկ ընդդիմությունը պնդում է՝ հաստատ լինելու է: Ուշագրավ է, որ երբ իշխանությունը վստահեցնում է, թե ավելի վատ չի լինելու, նկատի ունի, որ ինքը միշտ մնալու է իշխանություն, իսկ ընդդիմությունը երբ պնդում է, որ հաստատ ավելի վատ լինելու է, նույնպես կարծում է, որ այս իշխանությունը միշտ մնալու է եւ ինքը միշտ լինելու է ընդդիմություն: Իհարկե կան առանձին երջանիկներ իշխանության մեջ, որոնք զարմանում են, երբ որեւէ մեկը Հայաստանում ինչ-որ բանից բողոքում է, քանի որ ըստ իրենց՝ երկրում ամեն ինչ իդեալական է: Կան նաեւ առանձին համարձակներ՝ ընդդիմության մեջ, որոնց կարծիքով էլի՝ հաստատ ավելի վատ է լինելու, բայց եթե իրենք չգան իշխանության, այ երբ գան, հաստատ ավելի վատ չի լինի:

Իրականում այս ամենը ծիծաղելի է՝ ճիշտ Հրայր Թովմասյանի գրիչի պես կամ «հանրային պահանջով» ձերբակալությունների: Ծիծաղելի է, քանի որ օրինակ Երեւանի ավագանու Իմքայլական անդամը, որը հայտարարեց, թե երկրում քաղաքացի է ձերբակալվել՝ հանրային պահանջով, չի կարող հիմնավորել հանրային պահանջը, երբ օրինակ Վենետիկի հանձնաժողովի նախագահ Ջիանի Բուքիքիոն իր կապտա-կանաչ աչքերով ուղիղ նայի նրան: Կարծում եմ, որ վարչապետ Փաշինյանը եւս առնվազն դժվարություններ պետք է ունենա, եթե Բուքիքիոն նրան ուղիղ հարց տա՝ ինչո՞ւ եք ասում, թե Հրայր Թովմասյանը չի կարող լինել ՀՀ ՍԴ նախագահ՝ հիմնվելով միայն նրա դեմ հարուցված քրեական գործով մեղադրանքի վրա, այն պարագայում, երբ այդ մեղադրանքի հետ կապված հարցեր կան, իսկ դրանք հաստատող դատավճիռ չկա: Բայց քանի որ ես լավատես ու, կներեք, հայրենասեր եմ, հավատում եմ, որ պարոն Ջիանի Բուքիքիոն երբեք չի նայի Երեւանի ավագանու անդամի աչքերի մեջ եւ հարց չի տա Հայաստանի վարչապետին: Լավատեսությունս ինձ նաեւ հուշում է, որ Հայաստանում սահմանադրական կարգը ոչ ոք չի տապալի, իշխանության մի թեւը՝ մյուսին չի ճնշի, նախկինները ռեւանշի մասին չեն մտածի, գործողներն էլ նախ կմտածեն, բայց ոչ թե նախկինների, այլ ապագայի մասին: Եւ վերջապես քաղաքականությամբ այսքան մեծ թվով երիտասարդներ չեն զբաղվի, որովհետեւ կյանքում շատ ավելի հետաքրքրական բաներ կան: Օրինակ, ճապոնացի միլիարդատեր Յուսակու Մաեձավան հրաշալի առաջարկ ունի: Նա փնտրում է նվազագույնը 20 տարեկան աղջիկ՝ միասին դեպի Լուսին ճանապարհորդելու համար: Պայմաններն են՝ աղջիկը պետք է լինի կենսուրախ եւ աշխարհին խաղաղություն ցանկացող, մնացածը, ինչպես ասում են՝ տեխնիկայի, կամ միլիարդների հարց է: Պատկերացնո՞ւմ եք, եթե հանկարծ Մաեձավայի հետ հայուհի ոտք դնի Լուսնի վրա...Ճապոնացուն անմիջապես կմոռանան, փոխարենը՝ կեցցե Հայաստանի վարչապետը, որի օրոք հայը Լուսին հասավ կասեն:

Պարոն Մաեձավայի կոնտակտները համացանցում կան: Ինչպե՞ս գտնել, շատ հեշտ, պարզապես համացանցում պետք է ոչ թե ուշադրություն դարձնել վախեցնող ատելությանը, որն արդեն կենցաղ է մտել, այլ գեղեցիկ բաներին, որոնց մեծ մասը, ցավոք, հայերեն չէ, ճիշտ ուելսցի Դիլան Թոմասի ստեղծագործությունների պես: Ի դեպ, Թոմասը, որ մահացավ 1953-ին, 39 տարեկանում՝ Մանհեթենի Սպիտակ ձի պանդոկում մի լավ հարբելուց հետո, վերջինն ասաց հետեւյալը. «Ահա այն ամենը, ինչը ես արեցի 39 տարում»: Ավելի վաղ, երբ 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ Թոմասն աշխատում էր՝ կառավարության համար գրելով քարոզչական տեքստեր, հաճախ էր պարծենում՝ դատարկած շշերի թվով: Մի անգամ նույնիսկ ասել է. «Ես միանգամից խմեցի 18 շիշ թունդ վիսկի, ինձ թվում է՝ սա ռեկորդ է»: Ասեմ, որ բանաստեղծի այս նախադասությունը ավելի հայտնի է, քան նրա վերջին բառերը:

Այնուամենայնիվ, մեկ այլ Թոմաս՝ ԱՄՆ 3-րդ նախագահ Ջեֆերսոնը, կարողացավ Ամերիկայի անկախության հռչակագրում գրել մի բառ, ինչի կարիքը միշտ եւ ամենուր ամենաշատը կա: Երջանկություն... բոլորիս:

# ԵՄ անդամակցության կարեւոր նշանակությունը արեւմտյան Բալկաններում

«Հեռանկարի ուժը: Ինչո՞ւ ԵՄ անդամակցությունը դեռեւս կարեւոր նշանակություն ունի արեւմտյան Բալկաններում» խորագրով խմբագրությանը հասցեագրված մամուլի հաղորդագրությունը տեղեկացնում է, որ դեպի կենտրոնական եւ արեւելյան Եվրոպա ընդարձակման Եվրոմիության ծրագիրը սկզբից ի վեր հարեւան երկրների միջեւ բարեկամական հարաբերությունների հաստատումը համարել էր կարեւոր: Բայց վերջերս արեւմտյան Բալկաններում երկկողմ վեճերի կարգավորումը դարձել է հետագա ընդարձակումների ամենաշեշտադրված եւ ամենավճռորոշ նախապայմաններից մեկը: Երկկողմ վեճերն այդ շրջանում հաճախ ներառում են սահմանային՝ մինչ օրս չկարգավորված խնդիրներ, որոնք որպես ժառանգություն մեզ են փոխանցվել նախկին Հարավսլավիայից, որտեղ հանրապետությունների միջեւ սահմանագծումները միշտ չէ, որ ճշգրիտ են եղել:

Չանդրադառնալ այդ հարցերին՝ նշանակում է իսկական խոչընդոտ հանդիսանալ նոր անդամների ինտեգրման գործընթացում: Այլ վեճեր առայժմ քնած կամ կիսաքնած վիճակում են:

Ուղեղների համաեվրոպական շտեմարան համարվող «Արտաքին հարաբերությունների եվրոպական խորհուրդը» (ECFR) նպատակ է հետապնդում համապատասխան երկրների արժեքների պահպանման միջոցով արդյունավետ, բայց անկախ հետազոտություն անցկացնել եւ դրա հիման վրա մշակել նոր մարտավարություն: Այդ շրջանակներում կառույցի այցելու աշխատակիցներից, Բուդապեշտի համալսարանի հասարակական գիտությունների ELTE ֆակուլտետի պրոֆեսորի օգնական **Բեատա Հուժկան** (Beata Huszka) չկարգավորված խնդիրների իր նոր հայեցակարգն է ներկայացրել ստորեւ:

1- Հյուսիսային Մակեդոնիայի հետ բանակցություններ վարելու ԵՄ-ի ձախողումը կարող է խոչընդոտել Հունաստանի եւ Հյուսիսային Մակեդոնիայի միջեւ «Պրեսպա համաձայնության» (Prespa Agreement) հաջող կիրառմանը: 2020-ի ապրիլին ձեւավորվելիք Հյուսիսային Մակեդոնիայի նոր կառավարությունը կարող է սպառնալիք դառնալ համաձայնության ապագայի համար:

2- Դժվար է պատկերացնել Սերբիայի եւ Կոսովոյի միջեւ հարաբերությունների առաջխաղացում՝ առանց ԵՄ անդամակցության խոստումների, քանի որ այդ խոստումները ուժեղ դրդապատճառ կարող են հանդիսանալ Սերբիայի համար, եւ ԵՄ-ին մոտենալու կարեւոր քայլ (հետագա հեռանկարի իրականացման առումով)՝ Կոսովոյի համար:

3- Սերբիայի եւ Չեռնոգորիայի



միջեւ կացությունը շատ ավելի նուրբ է, կապված հատկապես Չեռնոգորիայում սերբիական ուղղափառ եկեղեցու գործունեության հետ: Այս կոնտեքստում անհրաժեշտ է, որ ԵՄ-ն եւ իր անդամ երկրները հաշվի առնեն Չեռնոգորիայի կառավարության դիմագրաված մարտահրավերները:

4- Իսկ ամենազգայունը Ալբանիայի եւ Հունաստանի միջեւ գոյություն ունեցող առափնյա սահմանների վեճն է: Վերջերս այս հարցի լուծումը առավել առաջնային է դարձել Հունաստանի համար:

Եվրոմիությունը սովորաբար չի միջամտում կամ անմիջական մասնակցություն չի ցուցաբերում երկկողմ խնդիրների կարգավորման հարցերում: Բայց անդամացկության պայմանականությունը ուղղորդում է թեկնածու երկրներին՝ կարգավորելու իրենց խնդիրները հարեւանների հետ: Նման մոտեցումը, մեր կարծիքով, ամենաուժեղ դրդապատճառն է, որ կարող է վեճերի կարգավորման հիմք ծառայել եւ երկարատեւ խաղաղություն եւ կայունություն հաստատել տարածաշրջանում:

Մամուլի հաղորդագրությունը մասնավորապես արձանագրում է, որ (ա) Հյուսիսային Մակեդոնիայի եւ Ալբանիայի անդամակցությունների բանակցային գործընթացի վրա Ֆրանսիայի 2018-ի հոկտեմբերին դրած վետոն թուլացրել է Արեւմտյան Բալկանների քաղաքացիների վստահությունը ԵՄ-ի նկատմամբ: Ապրիլին Հյուսիսային Մակեդոնիայում սպասվող ընտրությունները կարող են շրջադարձային դառնալ Հունաստանի հետ այդ երկրի հարաբերություններում, սակայն դրանք նաեւ նոր խնդիրների առաջացման ռիսկեր կարող են պարունակել: (բ) Եթե ԵՄ-ի ազդեցությունը թուլանա, ազգայնական ղեկավարներ կարող են այնտեղ տեղափոխվել եւ սրել հարաբերությունները հարեւան երկրների հետ: (գ) Հյուսիսային Մակեդոնիայի եւ Հունաստանի միջեւ ստորագրված «Պրեսպա համաձայնագրի» ապագան սպառնալիքի տակ է: Խնդիրներ կարող է առաջացնել նաեւ Սերբիական ուղղափառ եկեղեցիների գոյությունը Կոսովոյում եւ Չեռնոգորիայում:

Ուստի ԵՄ-ն ստիպված է ցույց տալ իր պարտավորվածությունը Արեւմտյան Բալկաններում գտնվող երկրներին՝ քաջալերելով նրանց կարգավորելու իրենց առկախ խնդիրները հարեւանների հետ, որպեսզի նրանք դառնան առավել արժանավոր թեկնածուներ անդամակցության համար եւ, միաժամանակ, որպեսզի ուժեղացնեն անվտանգությունը իրենց տարածաշրջանում:

Ներկայիս իր ընդարձակման քաղաքականությունը հիմնական վերանայման ենթարկելու գործընթացում է գտնվում Եվրոմիությունը, չմոռանալով անշուշտ, որ բազմաթիվ նոր հնարավորություններ կարող են բացվել Արեւմտյան Բալկաններում խնդիրների կարգավորման արդյունքում:

Թարգմ. Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

AZG NEW SHABAT.QXD 30/01/2020 21:51 Page 10



# Հայկական անվտանգության ծառայություն




⇨1 Ինչ ունենք հակադրելու արտաքին բոլոր տեսակի նենգ խաղերին՝ որպես պետություն, ինչ անվտանգային համակարգ է մեր ունեցածը եւ իրոք կարո՞ղ ենք այն անվտանգային համարել:

Հարցեր, որոնց պատասխանը մամուլի մակարդակով չէ, որ պետք է հնչեն, բայց քանի որ ակնհայտ եւ բազմակետանի պատասխան որեւէ տեղ ըստ էության դժվար է գտնել, է, մամուլով էլ որոնենք դա:

Ռուսաստանում աշխուժորեն քննարկում են անցյալ դարավերջի՝ 90-ականների ընթացքում տեղի ունեցած Ելցին-Բիլ Քլինթոն հեռախոսային խոսակցությունների վերծանումները, որոնք առարկայորեն հաստատում են , թե ժամանակին ինչպես է ԱՄՆ-ի նախագահն օժանդակել ինչպես Ելցինի իշխանության գալուն, այնպես էլ հետագայում իշխանությունը պահպանելուն՝ Ելցինին դարձնելով սեփական քաղաքականության դրածո: Այդ վերծանումներից պարզ է դարձել նաեւ, թե ինչպես է օգտագործվել Գորբաչովը՝ Խորհրդային Միությունը փլուզելիս: Դե պատկերացրեք՝ եթե Ռուսաստանում եղել է դրածո իշխանություն, ապա ի՞նչ է կատարվել, ուրեմն, Հայաստանի հետ:

Մի օր, իհարկե, մեր մասով էլ վերծանումներ կլինեն, եւ մենք կիմանանք այն, ինչ ենթադրվել է միայն: Սակայն խոսքն այստեղ այլ բանի մասին է:

Ինչ ենք անում, որպեսզի տարածաշրջանային անվտանգության պատկերացումներից զատ իրոք բովանդակություն ունենա ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ, միս ու արյուն, կարեւոր հարցերի մասին նախապես ձեւակերպած պատասխան, որ որեւէ իշխանություն դրանք չկարողանա շահարկել՝ մյուսի հանդեպ առավելության հասնելու համար, այլ լինի դրանց անառարկելի իրականացնողը: Բացի այդ՝ վստահություն լինի այն կադրերի ու մասնագետների նկատմամբ, որոնք իրականացնելու են մեր ազգային անվտանգությունը: Հստակ իմանանք, թե ինչ պատրաստվածությամբ, ինչ գիտելիքների բագաժով են նրանք պետության թիվ մեկ խնդիրն իրացնելու:

Երբ նայում ես, թե ինչպես է աշխարհի ուժեղներից կազմված խումբը բաժնետիրական ընկերության սկզբունքով կառավարվում աշխարհը, ըստ բաժնետերերի ունեցած բաժնեմասի՝ լուծում այս կամ այն ժողովրդի խնդիրը՝ անկախ նրա շահից, ու ակամա քննիչ հայացք ես գցում հայկական քարտեզին ու մեր հայկական իրականությանը՝մեր ֆիգուրանտների առումով, եզրակցությունն ամենեւին էլ հանգստացնող չէ, քանի որ այդ բաժնետերերի ներկայությունը մեր հանրային կյանքի վրա, անզեն աչքով էլ թե դիտարկենք, չափից ավելի է եւ ամեն ինչում:

Այսօր, երբ արտերկրի տարբեր լրատվամիջոցներում հանգիստ կարելի է պատվիրել Հայաստանի կամ նրա ղեկավարների մասին որեւէ արատավորող նյութ, երբ Հայաստանի հանրային կյանքին հետեւողը առանց դժվարության նկատում է այլ պետությունների շահերը սպասարկողներին, երբ իբրեւ թե ինտեգրման, բարի-դրացիության, դիվանագիտական շփման անվան տակ իրականացվում է այլ շահերի լոբբինգ՝ հրամայական է դառնում հայկական անվտանգության բովանդակային առկայությունը, որի վերաբերյալ հաճախ թղթի վրա գրված ձեւակերպումներից այն կողմ առարկայական քիչ բան կարելի է հայտնաբերել:

Որտեղ է այդ բովանդակությունը, եթե հենց մեր տեղական լրատվամիջոցում կարող է արտահոսեցնել (իսկ ավելի ստույգ՝ հորինել), թե Մինսկի խմբի համանախագահները մտահոգված են եւ կոշտ են խոսել Մնացականյանի հետ՝ վարչապետի ասուլիսում հնչած նախկին բանակցային նյութը բացահայտելու համար: Ջհանդամ թե մտահոգված չեն, թե՞ միայն Ալիեւը պետք է միակողմանի արտահոսքեր անի եւ միջազգային վերաբերմունքի չարժանանա, համ էլ՝ ինչ գիտեք փափուկն ու կոշտը, սեղանի տակ թաքնված էի՞ք: Հիմա այս տեսակ լուրերի ճիշտն ու սխալը կապ ունի՞ անվտանգության հետ, թե՞ չունի: Կամ որ Սամվել Բաբայանը ասում է, թե նախկինները 5 միլիարդ դոլարի դիմաց Արցախը սկուտեղի վրա մատուցում էին Ադրբեջանին՝ անվտանգության մարմինները ստուգո՞ւմ են այդ փաստը, թե՞ լուրջ չեն վերաբերվում, եւ ո՞վ պետք է սահմանի՝ ինչին լուրջ վերաբերվել, ինչին՝ ոչ:

Հայաստանի անվտանգային պատվարը ձեւավորելու հարցը շատ մեծ է, բազմատարր, մենք այսօր կխոսենք նրանցից միայն մի տարրի՝ մասնագետների պատրաստման մասին, որի վրա, ի դեպ, կառուցվում են մյուս անվտանգային բաղադրիչները, ու կադրերից է կախված այդ անվտանգության մյուս բաղադրիչների լրջությունն ու մակարդակը:

Միայն այն, որ Հայաստանի անվտանգության ծառայության կադրերը շարունակում են ուղարկվել Ռուսաստանի անվտանգության ծառայության ակադեմիայում եւ ռուսական անվտանգային այլ կառույցներում սովորելու, արդեն իսկ կասկածի տակ է դնում այդ կադրերի՝ ուղնուծուծով հայկական լինելու բովանդակությունը: Ի՞նչ են սովորեցնում այնտեղ՝ ինչպես իրականացնել Ռուսաստանի ազգային անվտանգությունը, վատագույն դեպքում՝ կարող են հավաքագրել որպես այդ երկրի անվտանգության գործակալներ: Իսկ որքան հավաքագրվածներ կան Խորհրդային Միության ժամանակներից մեր երկրում, որեւէ մեկը ցուցակագրե՞լ է նույնիսկ պարտադիր էլ չէ՝ թղթով ու վճարո՞վ, թե՞ առանց դրանց, կարեւորը՝ մտածողությամբ այդպիսին լինելն է:

1991-ի դեկտեմբերին խորհրդային ՊԱԿ-ից անջատված հայկական ՊԱԿ-ը վերանվանվեց Հայաստանի ազգային անվտանգության վարչություն, այն ժամանակից տարին տարվա վրա սպասվում էր անվտանգության ինքնաբավ համակարգի կառուցումը, եւ որ ավելի կարեւոր է՝ սեփական անտանգային դպրոցի ստեղծումը՝ դրա համար ահռելի միջոցների ներդրումով, սեփական բազմակողմանի զարգացած, անվտանգությանը սպառնացող բոլոր մարտահրավերների համար պատրաստված, թող որ՝ թանկարժեք ու մրցունակ կադրերի պատրաստմամբ: Ասենք՝ ոնց է, կարելի է ունենալ Դիլիջանի միջազգային դպրոց, Եվրոպայի խորհրդի քաղաքագիտական դպրոց՝ ըստ պատվերի ուղղվածության երիտասարդ մարդկանց պատրաստմամբ, դրանով ոգեւորվել, իսկ ահա որեւէ իշխանություն չուզեցավ Հայաստանի անվտանգության համար անհրաժեշտ եւ անհետաձգելի՝ ընտրյալ երիտասարդներին դեռ մանկուց որպես անվտանգության մասնագետ լավագույնս պատրաստելու գործը հիմնադրել:

Մեր օրենսդիրները, ով զարմանք, այսօր էլ փորձում են հարցը ոչ թե տանել ազգային անվտանգային բովանդակային տիրույթ, այլ՝միմյանց հետ մենամարտում են, թե ԱԱԾ ղեկավարը կուսակցական պաշտոն լինի, թե՞ ապակուսակցական:

Կարծես չի գիտակցվում, որ որեւէ երկրի անվտանգության մակարդակը նրա կադրերի մակարդակից է կախված, ու հատկապես՝ ապակուսակցական, վերկուսակցական անվտանգության մասնագետներից:

Ինչ ունենք հիմա մենք: ԽՍՀՄ-ից ժառանգած անտանգության դպրոց (շկոլա ասվածը), որտեղ դեռ ներկա են նախկին ՊԱԿ-ի աշխատակիցներն ու նախկին ՊԱԿ-ի հայեցակարգերը, որտեղ սերնդափոխությունը նույնպես կատարվում է Ռուսաստանի անվտանգային ակադեմիաներում վերապատրաստված կամ ուսանած կադրերով, կամ ծայրահեղ դեպքում՝ ֆլետչերի դպրոցն ավարտածներով: Հասկանում եք, չէ՞, ինչ է սա, երբ մի երկրի անվտանգությունն ապահովում են այլ երկրի լսարաններով, անվտանգային համակարգերով անցած մարդիկ: Հիմա երբ նայում ես, թե ինչ է տեղի ունենում Հայաստանում, ինչպես են դեսպանատների, միջազգային կառույցների աշխատակիցներն անընդհատ հանդիպում այս ու այն քաղաքական ուժի, այսուայն հանրային աղմուկ ստեղծողի հետ, որին հաջորդում են տարբեր իրադարձություններ, շատ մեծ փորձագետ լինել պետք չէ՝ հասկանալու համար, որ աշխարհը կառավարող բաժնետերերն ուղղակի բացահայտ խառնվում են մեր ներքին գործերին: Եւ առհասարակ՝ նայեք բոլոր նորահայտ փորձագետներին, վերլուծաբաններին, քաղաքական հայտ ներկայացնողներին, հետեւեք վերջին տարիների նրանց գործունեությանը, եւ կտեսնեք, որ նրանք այս կամ այն կերպ կապված են արտերկրյա դեսպանատների հետ, նրանց հայտի կամ գործունեության մեջ նրանց հովանավոր շրջանակների շահերն անթաքույց երեւում են: Նույն կերպ խորհրդարանում հայտնված «Իմ քայլի» պատգամավորների մի զգալի մասի հետեւում են ականջներ երեւում՝նրանց խորհրդարան տարած դեմքերը նկատեն դա, թե ոչ: Տեսեք, թե որքան ակումբներ կան՝ այս կամ այն առաքելությամբ՝ նրանք հաճախ աննկատ սպասարկում են ռուսական, ամերիկյան, մասոնական , այլեւայլ շահեր, քանի որ նրանց տրամադրվող ֆինանսական աջակցության ուղղվածության մեջ անգամ բացահայտ դրված է այս կամ ուղղվածությանը հետեւելը: Հիմա այսպիսի երկրում, որտեղ բոլոր առանցքային կառույցներում աննկատ կամ նկատելի կարող են սողոսկած լինել տարբեր շահեր, կամ այսպես ասենք՝ աշխարհը կառավարող բաժնետերերի ներկայացուցիչները, որոնք կարող են որոշել ե՛ւ երկրի ղեկավար փոխել, ե՛ւ արժեզրկել՝ իրենց «պատրոն» երկրի ազդեցությանը ենթարկելու համար, ինչպես կարող են մաս կազմել նույն կառույցների՝ օրենսդիր, գործադիր ճյուղերին: Եւ ո՞վ պիտի նրանց բացահայտի՝ եթե մեր անվտանգության մասնագետներն էլ պատրաստման նույն ճանապարհն են անցնում: Զարմանալի է, որ մինչեւ հիմա նախկին կառավարությունները, հիմա էլ նոր կառավարությունը չի մտահոգվում սեփական անվտանգության «շկոլան» ստեղծելու մասին, դրա համար չի առանձնացնում միջոցներ, խոսքը մեծ գումարների մասին է, որոնք կներդվեն սեփական անվտանգային մասնագետներին պատրաստելու գործում, նրանց կընտրեն դպրոցական տարիքից եւ կպատրաստեն ֆիզիկապես, հոգեբանորեն, մի քանի լեզու կսովորեցնեն, կսովորեցնեն հայկական անվտանգության գերխնդիրը, կուսուցանեն հայոց պատմությունը՝անցյալ դարերում պարսկական, բյուզանդական արքունիքներից ներդրված տրոյական ձիերի միջոցով մեր պատմության մեջ գործված ավերները սերտելուց սկսած, վերջացրած մինչեւ այժմ Հայաստանում առկա եւ չլյուստրացված ՊԱԿ գործակալների պատմությունները: Անկախ իշխանության փոխվելուց՝մենք այսօր պետք է ունենայինք հարյուրավոր երիտասարդ կադրեր, որոնք պատրաստված կլինեին հայկական անվտանգային կանխավարկածով, նրանցից յուրաքանչյուրի վրա պետությունը ծախսած կլիներ միլիոնավոր դոլարներ՝միայն երկրին ծառայելով դրանք հետ վերադարձնելու պայմանով: Այսինքն՝ համարյա անգին մասնագետներ կստեղծեր, որոնք կհամալրեին մեր անվտանգային համակարգը ոչ թե պատահական ընտրությամբ, սրա-նրա քրոջ, եղբոր տղան լինելու հանգամանքով, այլ օրինաչափորեն, որպես ոլորտի բարձր պրոֆեսիոնալներ: Իսկ այլ երկրների հատուկ ծառայություններ՝ նրանք միայն փորձի փոխանակման պայմանագրերով կմեկնեին: Բայց չէ, այդպիսի բան չենք արել, ու մերոնք շարունակում են սովորել Ռուսաստանի անվտանգության ակադեմիայում: Ինչ են սովորում, կամ որքան պիտի անատամ լինի որեւէ երկիր, որ իր կառույցներում սովորող անվտանգության մասնագետին չհավաքագրի: Սա՛ է կոչվում Հայաստանի անվտանգություն: Է, լավ, այս կամ այն երկրում ուսում ստացածները, այդ երկրներին իրենց ուսմամբ պարտք մնացածները կնկատե՞ն այդ երկրների աննկատ շարժումները մեր երկրում, թե՞ աչք կփակեն:

Եւ հրատապ է այդ մասին մտածելը՝ որքան շուտ, այնքան լավ:

AZG NEW SHABAT.QXD 30/01/2020 21:51 Page 11



# Թրամփը հրապարակել է «դարի գործարքը»

## *Մերձավորարեւելյան կարգավորման եւս մեկ փորձ*

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի «դարի գործարքի»՝ պաղեստինա-իսրայելական հակամարտության կարգավորման ծրագրի կարեւոր կետերը հրապարակվել են Սպիտակ տանը Թրամփի եւ Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուի մամլո ասուլիսում:

Թրամփի ծրագիրը նախատեսում է երկու՝ հրեական եւ պաղեստինյան պետությունների ստեղծում: Երուսաղեմը մնում է Իսրայելի անբաժանելի մայրաքաղաքը, բայց ընդսմին Թրամփը պաղեստինցիներին մայրաքաղաք է խոստանում Արեւելյան Երուսաղեմում՝ ԱՄՆ դեսպանատան ներկայությամբ, ինչպես նաեւ պաղեստինյան տարածքի կրկնակի ավելացում: Բացի դրանից, տվյալ ծրագրի համաձայն, ԱՄՆ-ը եւ Իսրայելը պատրաստ են Պաղեստինի տարածքներ ճանաչել ներկայումս պաղեստինցիների վերահսկողության տակ գտնվող տարածքները՝ պայմանով, որ նրանք հրաժարվեն ահաբեկչական գործողություններից:

Տրանսպորտային կապեր կստեղծվեն Պաղեստինի տարածքում եւ Հորդանան գետի արեւմտյան ափին: Բացի դրանից, Թրամփի մտահղացման համաձայն, պաղեստինցի փախստականները կկարողանան ընտրել բնակության վայրեր՝ ապագա Պաղեստինի տարածքում, Իսրայելին ինտեգրվելիք ներկայիս բնակության տարածքներում, կամ վերաբնակվել երրորդ երկրներում:

Ծրագիրը նախատեսում է նաեւ Իսրայելի ինքնիշխանության ճանաչում Հորդանան գետի արեւմտյան ափին եւ Գազայի հատվածում գտնվող խոշոր (Հուդա, Սամարա) բնակավայրերի նկատմամբ: «Դարի գործարքի» համաձայն, «Համաս» խմբավորումը պետք է զինաթափվի, իսկ Գազայի հատվածի տարածքը պետք է ապառազմականացվի: Ծրագիրը նախատեսում է Տաճարի լեռան կարգավիճակի պահպանում Հորդանանի միջնորդությամբ:

Նշվում է, որ մերձավորարեւելյան կարգավորման ծրագիրն ընդունելու դեպքում Պաղեստինը կստանա 50 միլիարդ դոլարի ամերիկյան օգնություն:

**Թրամփը** իր թվիթերյան էջում հրապարակել է երկու՝ պաղեստինյան եւ իսրայելական պետությունների քարտեզը: Այնտեղ երեւում է, որ պաղեստինյան տարածքներին կավելացվի երկու խոշոր շրջան Եգիպտոսի սահմանի երկայնքով:

Սպիտակ տան ղեկավարը հայտարարել է, որ «դարի գործարքը» կենսագործելով՝ Իսրայելը առաջընթաց մեծ քայլ կկատարի: Թրամփը նաեւ ընդգծել է, որ ծրագիրը սպառնալիք չի ներկայացնում Իսրայելի անվտանգության համար: Նախագահն ավելացրել է, որ Իսրայելի հետ համախումբ կկազմվի տվյալ նախաձեռնությունների իրականացման նպատակով: Ենթադրվում է, որ Իսրայելը եւ Պաղեստինը առաջիկա չորս տարիներին կկարողանան համաձայնեցնել ծրագրի մանրամասնությունները:

Իսրայելի վարչապետ **Բենիամին Նաթանյահուն** «դարի ծրագիրն» անվանել է դեպի խաղաղություն տանող իրատեսական ճանապարհ: Ըստ որում, նրա խոսքերով, Պաղեստինի որոշումից անկախ, Իսրայելը կընթանա ընտրված ճանապարհով, բայց եթե Պաղեստինը ճանաչի հրեական պետությունը, ապա Իսրայելը անհապաղ պատրաստ կլինի բանակցությունների:

«Ես ուզում եմ Թրամփին եւ Նաթանյահուին ասել, որ Երուսաղեմը չի վաճառվում: Մեր իրավունքները չեն վաճառվում եւ սակարկության առարկա չեն: Ձեր գործարքը դավադրություն է, եւ այն չի գործում», Reuters գործակալությունը մեջբերում է պաղեստինցիների առաջնորդ **Մահմուդ Աբբասի** Ռամալլահ քաղաքում մամլո ասուլիսում ասած խոսքերը: Աբբասը նաեւ ընդգծել է, որ Պաղեստինը ծնկի չի գա եւ անձնատուր չի լինի: Արաբական պետությունների լիգայի գլխավոր քարտուղար **Ահմեդ Աբու Գեյթը** հայտարարել է, որ «դարի գործարքը» կարող է հաջող լինել ազնիվ միջնորդությամբ եւ առանց թելադրանքի փորձերի՝ պաղեստինցիների եւ իսրայելցիների բանակցությունների անցկացման դեպքում:

ՌԴ Աշխարհաքաղաքական հիմնահարցերի ակադեմիայի նախագահության անդամ **Արայիկ Ստեփանյանը** Russia Today թղթակցի հետ զրուցելիս հայտարարել է, որ «դարի գործարքում» բավական շատ են հակասությունները: «Օրինակ՝ Արեւելյան Երուսաղեմը եւ Երուսաղեմը չեն կարող լինել միաժամանակ Պաղեստինի եւ Իսրայելի մայրաքաղաքները: Նաեւ ապագա պաղեստինյան պետության 50 մլրդ դոլար հատկացնելու Թրամփի առաջարկությունը ոչնչով հիմնավորված չէ: Դա խայծ է՝ պաղեստինցիներին կաշառելու նպատակով», հայտարարել է փորձագետը:

Պաղեստինի վարչապետ **Մուհամմեդ Շտայեն** հայտարարել է, որ ինքը չի ընդունի Սպիտակ տան ծրագիրը:

Նա համաշխահային հանրությանը կոչ է արել մերժել Թրամփի առաջարկությունը: «Այդ ծրագիրն անհրաժեշտ է Թրամփին պաշտոնանկությունից պաշտպանելու եւ Նաթանյահուին բանտից փրկելու, այլ ոչ թե խաղաղության համար», ընդգծել է նա:

Մոսկվայի Պետհամալսարանի պրոֆեսոր **Ալեքսանդր Վավիլովը** նշում է, որ Թրամփի ծրագիրը նրա «սովորական քաղաքական խաղն է: Նա այդ ծրագիրը նախապատրաստում է առանց պաղեստինյան կողմի եւ Ռուսաստանի հետ խորհրդակցելու: Վերջինս տվյալ հարցով զբաղվել է վերջին հիսուն տարիներին: Թրամփի ծրագիրը ենթադրում է, որ Իսրայելի մայրաքաղաք պետք է լինի Երուսաղեմը եւ չի ընդունում երկմիասնական պետության հայեցակարգը: Բայց նրա առաջարկություններն անիրատեսական են: Ըստ այդմ, Պաղեստինը չի համաձայնի նրա պայմաններին», նշել է ռուս փորձագետը RT-ին տված հարցազրույցում:

Արաբական երկրների հետ բարեկամության եւ գործարար համագործակցության ընկերության նախագահ **Վյաչեսլավ Մատուզովի** խոսքերով՝ «Թրամփի ծրագիրն ուղղված է ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդմանը եւ Նաթանյահուի աջակցմանը, որն Իսրայելում հայտնվել է ծանր վիճակում... Ամերիկացիները չեն հասկանում, որ տվյալ խնդիրը չի լուծվի առանց պաղեստինցիների համաձայնության: Պաղեստինի ղեկավարությունը իր հերթին դիմել է Արաբական լիգային՝ կոչ անելով համերաշխություն դրսեւորել տվյալ հարցում: Թրամփի այդ ծրագիրը չի կարող իրականացվել հենց միայն Իսրայելի հանդեպ համակրանքի շնորհիվ, քանի որ հարկավոր է հաշվի առնել նաեւ պաղեստինցի ժողովրդի շահերը», եզրակացնում է փորձագետը:

**ԱՐԵՎԻԿ ՔԵՇԻՇՅԱՆ**

# Բրիտանացի գործակալներ Թուրքիայի արեւելքու՞մ

## *Հեղաշրջում նախապատրաստելու կասկածներ*

Թուրքիայում լավ հայտնի Star gazete թերթը հրապարակել է հետաքրքրաշարժ տեղեկություն: Դրա համաձայն, պաշտոնաթող գնդապետ **Ուղուր Աթիլան** հայտարարել է, որ բրիտանական «Մի-6» հետախուզությունը Թուրքիայում նոր հեղաշրջում նախապատրաստելու նպատակով բանակցություններ է սկսել երկրի արեւելքում ապրող ցեղերի հետ եւ շատ փող է խոստացել ապստամբությանն օժանդակելու համար»:

Միեւնույն ժամանակ, թերթը մեջբերում է Սոցիալական հաշտության ու համաձայնության ընկերակցության նախագահ **Քենան Կարատաշի** կարծիքը, ըստ որի բրիտանական հետախուզությունը աշխատանք է կատարում տարածաշրջանում, բայց դրա գլխավոր նպատակը հեղաշրջումը չէ: «Ես համաձայն չեմ այն տեսակետին, թե բրիտանական հետախուզությունը աշխատում է նոր հեղաշրջման նախապատրաստման վրա: Իմպերիալիստական գործակալները վաղուց հիմնավորվել են երկրի արեւելքում եւ տարածաշրջանում շրջում են ավանդական հագուստով, քրդերեն խոսում են մայրենի լեզվի պես: Նրանք զրուցում են ցեղերի հետ, տեղեկություններ հավաքում կարեւոր օբյեկտների մասին, ինչպիսիք են ռազմակայանները, ոստիկանական տեղամասերը, կառավարական շենքերը: Իսրայելի, Մեծ Բրիտանիայի հովանու ներքո նրանք ուզում են ստեղծել Դաշնություն, որն իր կազմում կընդգրկի Կահրամանմարաշը (մեր Մարաշը- **Ծ.Խ.**), Անթափիան եւ նույնիսկ Ադանան: Այդ կառույցի մեջ Թուրքիայի մասին խոսք անգամ չկա: Ենթադրվում է, որ հետագայում այդ Դաշնությանը կմիանան Իրաքը եւ Սիրիան», ընդգծել է Կարատաշը:

Բայց Աթիլայի եւ Կարատաշի դրույթները չեն հակասում միմյանց: Խոսքը սոսկ Անկարայի դեմ ուղղված գործողությունների մասին է: Ամեն ինչից երեւում է, որ Թուրքիայի իշխանությունները տեղեկատվության արտանետում են կատարել Star gazete թերթի միջոցով: Պահը պատահականորեն չէր ընտրված: Թուրքիայում դատավճիռներ են կայացվել երկրում պետական հեղաշրջման գործով 131 ամբաստանյալների նկատմամբ: Դատապարտյալների մեջ է Անվտանգության վարչության նախկին ղեկավար Ալի Ֆուատ Յըլմազերը եւ վարչության հետախուզական դեպարտամենտի ղեկավար Ռամազան Աքյուրեկը: Նրանց գործերի լսումներն անցկացվում էին դռնփակ ռեժիմով, բայց հիմքեր կան ենթադրելու, որ քննչական գործողությունների ընթացքում իշխանությունները տեղեկություններ են ստացել Թուրքիայի տարածքում բրիտանական հետախուզության գործունեության մասին, ինչպես նաեւ այն մասին, որ Լոնդոնը տարածաշրջանում որոշակի խաղ է սկսել՝ նախապատրաստվելով, գուցե նաեւ արդեն իրականացնելով, ոչ միայն քաղաքական բնույթի գաղտնի գործողություններ: Ըստ որում, օգտագործվում են «խոր քողարկմամբ» աշխատող գործակալներ:



«Շուրջ մեկ դար է անցել 1918 թվականից, եւ Մերձավոր Արեւելքում կրկին փոփոխվում են սահմանները: Ինչպես հարյուր տարի առաջ, այսօր եւս վխտում են լրտեսներ եւ հատուկ գործողությունների մասնակիցներ», վերջերս գրեց թուրքական Yeni Ca հրատարակությունը: «Եվ մենք առաջիկա տարիներին հավանաբար կիմանանք, թե ովքեր են այդ լրտեսները, որոնք գործում են Թուրքիայում եւ Մերձավոր Արեւելքում: Նրանք միայն օտար պետությունների քաղաքացիներ չեն: Նրանց մեջ քիչ չեն նաեւ թուրքերը, որոնք ՔԲԿ-ից թուրքական ազգի պաշտպանությունը իբր նախապատրաստում են «բանակցային» եւ «խաղաղ» գործընթացի շրջանակներում: Բայց իրականում Արեւմուտքից ակնկալում են Մերձավոր Արեւելքի սահմանների վերաձեւում: Բայց ինչպե՞ս: Այդպիսով մենք հանգում ենք Կարատաշի աշխարհաքաղաքական դրույթին՝ ենթադրյալ Դաշնության ստեղծում, որը կներառի Կահրամանմարաշը, Անթափիան եւ նույնիսկ Ադանան՝ Իրաքի ու Սիրիայի հետ:

Լոնդոնում հրատարակվող արաբալեզու Al-Rai al-Youm թերթը որպես տարածաշրջանի աշխարհաքաղաքական տրոհման սցենար, որի նպատակն է շիա տերություն Իրանը կտրել Եմենից, Լիբանանից եւ Իրաքից, նշում է Իրաքից քրդական աշխարհազորի տեղափոխումը հյուսիսային Սիրիա, որպեսզի «արյունաքամ» արվի Իրանը, իսկ Թուրքիայում եւ Իրաքում՝ քաղաքացիական պատերազմի հրահրումը: Բրիտանական հետախուզության տվյալների համաձայն, Իրաքի մասնատման ծրագիրը գոյություն է ունեցել դեռ նախքան ամերիկյան զորքերի 2003 թ. ներխուժումն այդ երկիր: Դա նախապատրաստվել էր, բայց այդպես էլ չէր իրագործվել: Ծրագրի համաձայն, Իրաքի մասնատումից հետո պետք է ստեղծվեին շիաների եւ քրդերի պետություններ, իսկ սուննիների ճակատագիրը որոշվելու էր նրանց Հորդանանին հանձնելու միջոցով: 2016 թվականի մարտին Սիրիայի հնարավոր դաշնայնացման վերաբերյալ պայմանավորվեցին սիրիացի քրդերը՝ հույս դնելով Իրաքի դաշնայնացման փորձի կրկնության վրա:

Տարածքը ըստ էթնոկրոնական հատկանիշի մասնատելու գաղափարը եւ տարբեր խմբերին անկախ կամ ինքնավար կառավարման իրավունքի շնորհումը զուտ բրիտանական նախագիծ է, որը հանգեցնում է հակամարտությունների սաստկացմանը, չէ՞ որ Օսմանյան կայսրության անկումից հետո տարածաշրջանում դժվար է գտնել որեւէ երկիր, որը տարածքային հավակնություններ չունենա հարեւանների նկատմամբ: Ճիշտ է, ինչպես նշում է Al-Rai al-Youm թերթը, նախատեսվող իրադարձությունների ընթացքը կարող է խափանվել ռուս-թուրք-իրանական հակասցենարի միջոցով: Այս կապակցությամբ պատահական չի թվում վերջերս Մոսկվայում Ռուսաստանի եւ Թուրքիայի հետախուզական ծառայության ղեկավար Հաքան Ֆիդանի եւ նրա սիրիացի պաշտոնակից Ալի Մամլուքի միջեւ կայացած հանդիպումը, թեեւ վերջերս Իրանում եւ Սիրիայում նման հանդիպումներ արդեն եղել էին:

Փորձագետներից շատերի գնահատումների համաձայն, Անկարան, թեեւ առայժմ ոչ հրապարակայնորեն, բայց սկսում է փոխել իր վերաբերմունքը Սիրիայի նախագահ Բաշար Ասադի հանդեպ: Ահա թե ինչու Star gazete թերթի իրականացրած տեղեկատվական արտանետումը լուրջ վերլուծության կարիք ունի: Հնարավոր է՝ Անկարան որոշել է ուրվագծել կանխիչ բնույթի գործողություններ՝ նպատակ ունենալով նշանակալի արձագանք առաջացնել տեղեկատվական միջավայրում՝ դրանք շաղկապելով ինչ-ինչ կարեւոր իրադարձություններին առնչվող կոնկրետ իրադրության հետ: Բայց չի բացառվում, որ խոսքը սոսկ ապատեղեկատվության մասին է, որը քողարկում է իշխանությունների իրական գործողությունները, կարծում է փորձագետ **Ստանիսլավ Տարասովը**: Բացառված չէ նաեւ, որ Թուրքիան այդ ձեւով «ջերմագին ողջույն» է հղում բրիտանական «Մի-6» հետախուզության ղեկավարի պաշտոնը թողնող, Մերձավոր Արեւելքի որակյալ մասնագետ Ալեքս Յանգերին: Գուցե տարածաշրջանում նա չի գտել խնդիրների լուծման նոր տարբերակներ եւ մերձավորարեւելյան թնջուկը փոխանցում է իր իրավահաջորդին:

Բրիտանական «Մի-6» հետախուզությունը աշխարհում հնագույն ծառայություններից մեկն է եւ մնում է արդիական բարձր մակարդակի վրա: Առաջվա պես լուրջ հակառակորդ է, որը խորհրդակցում է ԱՄՆ-ի հետ, բայց միշտ չէ, որ հետեւում է ամերիկացիների օրինակին:

**ԱՐԵՎԻԿ ՔԵՇԻՇՅԱՆ**

AZG NEW SHABAT.QXD 30/01/2020 21:51 Page 12



# Նախագահ Էրդողանը բնակիչների ճակատագրին վերագրեց Էլյազիգի երկրաշարժը

*Իսկ կրոնական գործերի վարչության պետ Էրբաշը դա համարեց Ալլահի կամքը, նահատակ հռչակելով զոհվածներին*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

**Թուրքագետ**



Ինչպես նշել էի նախորդ համարներում, Թուրքիան նոր տարին դիմավորեց օրակարգային երկու խնդիրներով, երկուսն էլ առանցքային: Դրանցից առաջինը «Կանալ Ստամբուլն» էր, որի շուրջը ծավալվող իշխանություն-ընդդիմություն պայքարը Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի համառության պատճառով վերածվել էր կատարյալ առճակման: Երկրորդը Լիբիա զորք ուղարկելու որոշումն էր, որը նույնպես պայմանավորվեց վերջինի համառությամբ, իհարկե առանց հաշվի առնելու դրա նպատակահարմարությունը: Այս երկու խնդիրներն առաջնահերթությամբ իրար էին փոխարինում: Հունվարի 2-ին, երբ Թուրքիայի ազգային մեծ ժողովը՝ Մեջլիսը, որն ամանորյա արձակուրդում էր, Էրդողանին ընդառաջելու համար արտակարգ նիստ գումարեց, որ կառավարությանը լիազորի Տրիպոլի զորք ուղարկելու արտոնությամբ, «Կանալ Ստամբուլը» երկրորդ պլան մղվեց Թուրքիայի օրակարգում:

Հունվարի 19-ին Լիբիայի ճգնաժամի հարցով Բեռլինում գումարված գագաթաժողովն էլ , ի չիք դարձնելով գագաթաժողովում կենտրոնական դեմք դառնալու Էրդողանի հույսերը, երկրորդ պլան մղեց Տրիպոլի զորք ուղարկելու խնդիրը: Այն առումով, որ գագաթաժողովի ավարտին ընդունված եզրափակիչ հայտարարությունը, որը ստորագրել է նաեւ Էրդողանը, բացառում է օտերկրյա միջամտության ամեն մի դրսեւորում Լիբիայի ներքին գործերին, առավել եւս հակամարտող կողմերին ռազմական օգնություն ցուցաբերելն ու զորք ուղարկելն այնտեղ: Հունվարի 18-ին Բեռլին մեկնելու նախօրյակին Լիբիա զորք ուղարկելը շարունակելու, այդ ուղղությամբ բոլոր ուժերը մոբիլիզացնելու մասին հայտարարող **Էրդողանը**, վերադարձին արդեն հայտարարեց, որ զորք չեն ուղարկելու: Ավելին, հունվարի 26-ին Ալժիր այցելելիս նա կարծիք հայտնեց, թե ինքը ռազմական լուծումը երբեւէ չի դիտարկել Լիբիայի ճգնաժամի հաղթահարման միջոց:

Ինչո՞ւ, որովհետեւ ընդդիմադիր «Haber TV-ի» քաղաքական մեկնաբան **Էրոլ Մութերջիմլերի** դիպուկ արտահայտությամբ՝ Բեռլինում Էրդողանի փոխարեն կենտրոնական դեմք էր դարձել Լիբիայի ազգային բանակի զորահրամանատար Խալիֆե Խաֆթերը, «ունենալով թիկունքում ողջ աշխարհը եւ նա ստացել էր այն, ինչ ցանկանում էր, իսկ Էրդողանը վերադարձել էր ձեռնունայն»: Ըստ երեւույթին ձեռնունայնության հանգամանքն էր ստիպել Էրդողանին, որ կրկին օրակարգի առաջնահերթ խնդիրը դարձնի «Կանալ Ստամբուլը»: Նրա՝ «ուզեք, թե չուզեք ես կառուցելու եմ այդ ջրանցքը» խոսքերին, ընդդիմությունը, ի դեմս Ժողովրդա-հանրապետական կուսակցության նախագահի **Քեմալ Քըլըչդարօղլուի**, պատասխանում էր. «Չես կարողանալու, առաջին իսկ ընտրություններին դու հեռանալու ես իշխանությունից»:

Նա միաժամանակ զգուշացնում էր շինարարական ընկերություններին, կապալառուներին, որ գործարք չկնքեն Էրդողանի հետ, որովհետեւ իշխանության գալու դեպքում չեղյալ է հայտարարելու գործարքը, առանց որեւէ գրոշ վճարելու կառուցման աշխատանքների դիմաց: Մինչ լեզվակռիվը հետզհետե թեժանում էր Էրդողանի եւ ընդդիմության միջեւ, ահա հունվարի 24-ին 6.8 բալանոց երկրաշարժով ցնցվեց Էլյազիգն ու Մալաթիան: Երկրաշարժը զգացվեց Դիյարբեքիրում, Գազիանթեփում, Շանլիուրֆայում, Կեսարիայում, Սվազում, Դերսիմում, Սեւ ծովին առափնյա Սամսունում, Տրապիզոնում, Օրդույում, Գիրեսունում, ինչպես նաեւ սահմանակից Սիրիայում, Իրաքում, նույնիսկ Վրաստանում:

Երկրաշարժի հետեւանքով, ըստ պաշտոնական տվյալների, Էլյազիգում մահացավ 37 մարդ, իսկ Մալաթիայում՝ 4, ընդհանուր թվով 41, վիրավորվեց ավելի քան 1 600-ը: Փրկարարները փլատակներից ողջառողջ հանել են 45 տուժողի: Փրկարարական AFAD ջոկատը երկրաշարժի գոտում ուսումնասիրել է 2 հազար 945 շենք, ուսումնասիրված շենքերից 1287-ը եղել է խիստ վթարային, 56-ը միջին, 876-ը թեթեւ, 87 շենք հիմնովին փլվել է: Ընդ որում փլած շենքերը դեռեւս տուժել էին 2011 թ. Վանի ահեղ երկրաշարժից, որի ընթացքում հիմնովին ավերվել էր 24 հազար շենք: Ի դեպ, հակառակ AFAD-ի, «Halk TV-ն» փլած շենքերի թիվը 253 էր նշել, ընդգծելով, որ 100-ը հենց Էլյազիգի կենտրոնում:

Այս փաստն ինքնին վիճելի է դարձնում AFAD-ի տվյալների իսկությունը, հատկապես այն դեպքում, երբ այս ջոկատը խանգարել է Անկարայի, Իզմիրի, Ստամբուլի քաղաքապետարանների երկրաշարժի գոտի գործուղած փրկարարական ջոկատների աշխատանքը, տրամադրելով աշխատանքների համար նրանց 3 փլած շենք: Հատկանշական է, որ փրկարարական աշխատանքներին առնչվող բոլոր տեսանյութերը նկարահանված էին այդ շենքերում, հրապարակումները նմանապես առնչվում էին նույն շենքերին: AFAD-ի գործունեությունը գրեթե չերեւաց հեռուստաէկրաններում: Չերեւացին նաեւ գյուղերը: Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության Էլյազիգ գործուղած պատվիրակության ղեկավար **Այշե Աջար Բաշարանը** հունվարի 27-ին այնտեղ կազմակերպած մամուլի ասուլիսում, մեղադրելով Էրդողանի իշխանություններին անտարբերության մեջ, մահացու դեպքերը վերագրեց վերջինների թողտվությանն ու ասաց. «Շրջակա 60 գյուղում ոչ մի ուսումնասիրություն չի կատարվել: Թեեւ Չեւրիմթաշ գյուղում երկու մարդ մահացել է, 3-ը ծանր վիրավորվել, բայց ոչ ոք այնտեղ ոտք անգամ չի դրել: Սիվրիջե գավառում, երբ զրուցում էինք բնակչության հետ, ասացին, որ օգնություն եկել է, բայց եկածը Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության շրջանային վարչության նախագահի թեթեւ ձեռքով բաժանել են կուսակիցներին միայն»:

Էլյազիգի գյուղերում տները քարաշեն չեն, այլ կավահող, հետեւաբար մահացու դեպքերը շատ չեն լինի, սակայն մահացածների թվի մասին իշխանությունները լռում են, նշանակում է կամ չգիտեն, կամ էլ գիտեն, բայց չեն հայտնում, որ քողարկվի զոհվածների իրական պատկերը: Նույն մոտեցումը հավանաբար դրսեւորվել է նաեւ Էլյազիգում փլատակների տակ մնացածների պարագայում: Համենայն դեպս հունվարի 24-ին տեղի ունեցած երկրաշարժի 3-րդ օրը, երկուշաբթի երեկոյան, ետ ուղարկվեցին Անկարայից, Իզմիրից եւ Ստամբուլից ուղարկված փրկարար ջոկատները, որոնք ընդամենը 67 ժամ էին աշխատել, իսկ հաջորդ օրն առավոտյան AFAD-ը հայտարարեց, որ փլատակներից հանել են վերջին տուժածին, հետեւաբար դադարեցնում է որոնման աշխատանքները:

Աղետի եւ արտակարգ իրավիճակների վարչությունը՝ AFAD-ն անվանապես ենթակա է ներքին գործերի նախարարությանը, բայց իրականում անմիջականորեն Էրդողանի աշխատակազմին է ենթարկվում: Ինչ վերաբերում է Անկարայի, Իզմիրի եւ Ստամբուլի փրկարար ջոկատներին, ապա դրանք էլ՝ տվյալ քաղաքապետերին, իսկ քաղաքապետերը Ժողովրդա-հանրապետական կուսակցության ներկայացուցիչներ են:

Զոհերի իրական թվի բացահայտումը է՛լ ավելի կուժեղացներ առկա անկումը:Այդ ամենի առումով հատկանշական են լրագրող **Սերդար Աքինանի** հունվարի 25-ին գրածը «Odatv-ի» կայքէջում: Ահա թե ինչ է գրել. «Եթե այս երկրաշարժում 24 հազար շենք փլեր, ինչպես 2011-ին Վանում փլվեց, մենք կանգնած կլինեինք շատ ավելի մեծ աղետի առջեւ: Էլյազիգում էժան պրծանք: Ես նկատի չունեմ երկրաշարժի ուժգնությունը, այլ փրկարարական աշխատանքների անբավարար մակարդակը: AFAD-ը նույնպես, ինչպես իշխանական մյուս կառույցներն են, կուսակցականացված է, ցածր մակարդակի պատրաստվածությամբ: Համագործակցության փոխարեն աղետի գոտում իշխում է կուսակցականացվածությունից բխող խտրականությունը»:

Խնդիրը, սակայն, սոսկ AFAD-ը չէ, այլ «կարմիր մահիկի» գլխավոր նախագահ **Քերեմ Քընըքը**, որը երկրաշարժից ուղիղ մեկ րոպե անց ինտերնետով դիմել էր Թուրքիայի քաղաքացիներին եւ յուրաքանչյուրից տուժածների համար 10 հազարական լիրա օգնություն էր պահանջել: Այդ մասին տեղեկացրեց ընդդիմադիր «Haber TV-ն, մինչ իշխանամետ լրատվամիջոցները, իհարկե, շրջանցեցին: Քընըքի այս պահանջը բուռն հակազդեցություն առաջացրեց բնակչության շրջանում: Այդ ընթացքում Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը, ի դեմս նախագահի Քըլըչդարօղլուի, իշխանություններին հիշեցրեց երկրաշարժի հարկից կուտակված 34 մլրդ. դոլարի մասին:

Այդ հարկը նշանակվել էր դեռեւս 1999 թ. Մարմարայի երկրաշարժից հետո, վթարային շենքերը բարեկարգելու նպատակով, բայց միանվագ էր: 2004-ին Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը գալով իշխանության, դա դարձրեց մշտական: Սակայն առայսօր անորոշ է մնում կուտակված գումարի ճակատագիրը: Ժամանակի ֆինանսների նախարարն ասաց, որ գումարն օգտագործել են պետբյուջեի պակասորդը փակելու համար, իսկ տրանսպորտինը՝ ճանապարհաշինության եւ կամուրջներ կառուցելու: Մինչդեռ այդ ամենի համար պետբյուջեից կառավարությանը հատկացվել էին ֆինանսական համապատասխան միջոցներ: Մնում է ենթադրել, որ կերել են:

Չնայած երկրաշարժի հարկից կուտակված 34 մլրդ. դոլարն ուտելու, ինչպես նաեւ հարցը քննարկելու համար Մեջլիսի հանձնաժողով ստեղծելու ընդդիմության առաջարկի՝ «Արդարություն եւ բարգավաճում» ու Ազգայնական շարժում կուսակցությունների «դեմ» ձայներով մերժվելու հավանականությանը, բնակչությունն այնուամենայնիվ 56 մլն. լիրայի հանգանակություն էր արել երկրաշարժից տուժածներին, Էլյազիգի ու Մալաթիայի կուսակալություններին պետության տրամադրած 3-ական մլն-ի դիմաց: Երեք մլն լիրայի մասին, որը 5 հազար 260 դոլար է անում, իսկ 56 մլն.-ն՝ ավելի քան 98 հազար, հունվարի 25-ին, մեկնելով ներքին գործերի նախարար Սուլեյման Սոյլուի եւ առողջապահության նախարար Ֆահրեթդին Քոջայի հետ աղետի գոտի՝ հայտարարեց շրջակա միջավայրի եւ քաղաքաշինության նախարար **Մուրադ Քուրումը**, ավելացնելով միաժամանակ, որ չի կարելի ամեն ինչ ակնկալել պետությունից:

Նույն օրը Էլյազիգում եղավ նաեւ Էրդողանը: Նա էլ դիմեց տուժածներին, հարցնելով. «Մի՞թե կարելի է կանխել երկրաշարժը, մենք այդ հնարավորությունը չունենք: Պետք է համակերպվել»: Ինչ խոսք՝ ճակատագրի հետ: Այն ինչ Էրդողանը խուսափում էր ուղղակի արտահայտել, արտահայտեց կրոնական գործերի վարչության պետ **Ալի Էրբաշը**: Նա ցավակցություն հայտնելով զոհվածների ընտանիքներին՝ ասաց, որ բնական աղետները, երկրաշարժերը նմանապես, Ալլահի կամքն են, բոլորս էլ կարող ենք զոհ գնալ, չի կարելի դրա համար գանգատվել, հատկապես այն դեպքում, երբ զոհվածներն արժանանում են նահատակի կոչման, գանգատը նրանց կզրկի այդ «երանելի» կոչումից:

Թե ի՞նչ տպավորություն գործեցին Էրբաշի խոսքերը Էլյազիգի բնակչության վրա, չգիտենք: Ակնհայտ է, սակայն, որ փրկարարական աշխատանքների հետ նաեւ ստացած օգնության կուսակցականացման պատճառով երկրաշարժն անգամ Թուրքիայում վերածվեց ճգնաժամի, ակնհայտ է: Հաշվի առնելով երկրաշարժի հարկից կուտակված 34 մլրդ. դոլարի փոշիացման հանգամանքը եւ այդ հարցին հետամուտ լինելու ընդդիմության վճռականությունը, կարելի է ենթադրել. որ քաղաքական ճգնաժամը դեռ երկար կտեւի:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԹԵՔԵՅԱՆ ՓԱԲԼԻՇԻՆԳ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
**e-mail:** azg@azg.am, azgdaily@gmail.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Թեքեյան Փաբլիշինգ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 19.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 30.1.2020, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2:

AZG NEW MSHAKUIT.qxd 30/01/2020 18:02 Page 1

Ազգ ՀԱՎԵԼՎԱԾ ՄՇԱԿՈՒՅԹ

Թիվ 4(464)
31 ՀՈՒՆՎԱՐ
2020

# ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՎԱԾ ԽԱՂԸ

**Նաիր ՅԱՆ**

Հունվարի 13-ից սկսած եվրոպական բարձր երաժշտական աշխարհը փոթորկվել էր. ամեն ինչ սկսվեց ՀՀ ժողովրդական արտիստուհի **Հասմիկ Պապյանի** սենսացիոն հայտարարությունից՝ ադրբեջանցի տենոր **Յուսիֆ Էյվազովը** հրաժարվել է երգել սոպրանո **Ռուզան Մանթաշյանի** հետ փետրվարի 7-ին Դրեզդենի Semper Opera Ball-ի հանդիսավոր արարողությանը; Էյվազովը համերգը բոյկոտել է, որովհետեւ պետք է երգեր հայ երգչուհու հետ: Հասմիկ Պապյանը նաեւ հայտարարել էր, որ պատրաստվում է բողոքի ձայն բարձրացնել, եւ իսկապես երգչուհին հետագա բոլոր օրերին հետեւողական եղավ իրադարձությունների ընթացքին: Այսինքն՝ եթե նա այս խնդիրը չբարձրաձայներ, միգուցե Յուսիֆ Էյվազովը, որը օպերային երգչուհի Աննա Նետրեբկոյի ամուսինն է, ազգայնամոլական իր քայլը մարսեր:

Գաղտնիք չէ, որ Հասմիկ Պապյանը հատկապես Գերմանիայում մեծ ճանաչում ու հեղինակություն ունի, նրա բողոքի ձայնը լսել են աշխարհահռչակ երգիչներն ու երաժիշտները: Օրինակ՝ Բեռլինի օպերային թատրոնի մեներգիչ **Ռենե Պապեն** հայտարարել է.«Որպես ծնունդով դրեզդենցի, ռասիզմի դեմ պայքարի դեսպան, ստիպված եմ ասել իմ հարգարժան կոլեգա Յուսիֆին՝ ատելություն չբերել իմ քաղաք կամ որեւէ այլ տեղ:...Հրավիրված լինել այստեղ երգել՝ շատ մեծ պատիվ է եւ առավելություն: Դու պետք է երջանիկ ու հպարտ լինես նրա մի մասնիկը դառնալու համար: Դու կհիշվես որպես արտիստ, ոչ թե ատելության կրող»:

Գերմանական, ֆրանսիական լրատվամիջոցները, նաեւ BBC-ն անդրադարձել են սկանդալային թեմային, ռուս հայտնի բլոգերները խնդիրը դիտարկել են որպես Աննա Նետրեբկո-Յուսիֆ Էյվազով զույգի հերթական կամակորություն ու խտրական քայլ: Դասական երաժշտության համաշխարհային անցուդարձի մեջ էլ ամեն բան մաքուր ու ազնիվ չէ: Այնտեղ էլ կան եղանակ թելադրողներ, մենաշնորհային դիրք ունեցող դեմքեր, որոնց կամքը, եթե անգամ արդար չէ, միեւնույն է՝ ընդունվում եւ կատարվում: Աննա Նետրեբկոն բարձր արվեստի աշխարհում հենց այդպիսին է: Նրա քմահաճույքները շատերին են հոգնեցրել, բայց դասական արվեստ մատուցող արվեստագետներն այս ամենի մասին խոսում են ոչ թե բացահայտ, այլ կուլիսներում: Բայցեւայնպես, խոսում են:

Յուսիֆ Էյվազովի բեմական որակները թեեւ նույն բարձր արվեստի աշխարհին չեն գոհացնում, բայց երգիչն իր ցածր որակներին հակառակ՝ տասներորդ պլանում չէ՝ շնորհիվ իր կնոջ՝ Աննա Նետրեբկոյի:

Ռուսական լրատվամիջոցներն ուսումնասիրել են այս զույգի ամուսնության պատճառները եւ հասել շատ ավելի հեռուներ՝ 2000-ականների սկիզբ, երբ էմիգրանտ ադրբեջանցին 24 տարեկանում ամուսնացել է 73 տարեկան իտալուհի Ադել Ֆերարիի հետ ու նրա հետ ապրել 17 տարի:

Նույն լրատվամիջոցները հաղորդում են, որ Էյվազովը Ֆերարիի հետ ամուսնացել է շահադիտական նպատակներով՝ նախ Իտալիայի քաղաքացիություն ստանալու եւ երաժշտական աշխարհում կարիերա սկսելու համար, իսկ տիկին Ադելը փոքր ֆիգուր չէ եւ չափազանց երիտասարդ ամուսնու առնվազն այդ երկու նպատակներն իրականացնել կարողացել է:

Եվ այսպես, Էյվազովը մուտք է գործել օպերային աշխարհ, մի օր էլ երգել է Աննա Նետրեբկոյի հետ, ու սկսվել է «ծառայողական սիրավեպը»: 2017 թվականին Էյվազովը Ադել Ֆերարիից բաժանվել եւ ամուսնացել է իրենից 6 տարով մեծ Նետրեբկոյի հետ, որը որդի ունի:

Առաջին հայացքից կթվա, թե այս զույգի անձնական կյանքի մանրամասներն առնչություն չունեն Ռուզան Մանթաշյանի հանդեպ Յուսիֆ Էյվազովի ազգայնամոլական ու հայատյաց քայլի հետ: Բայց դժվար է հավատալ, թե ադրբեջանցի երգիչը հրապարակավ կհրաժարվեր հայ երգչուհու հետ ելույթ ունենալ այն էլ այնպիսի կարեւոր համերգին, ինչպիսին է Semper Opera Ball-ն է, եթե թիկունք չունենար, եթե չիմանար, որ իր հայտարարության հետեւանքների համար պատասխանատվության չի ենթարկվելու:



Ավելին, Semper Opera Ball -ի գեղարվեստական ղեկավար **Հանս Յոահիմ Ֆրեյը** պաշտպանեց ադրբեջանցի երգչին՝ ասելով, որ Ռուզան Մանթաշյանի՝ փետրվարի 7-ի համերգի մասնակցությունը չեղարկվում է, որովհետեւ տենոր Յուսիֆ Էյվազովը չի ուզում երգել նրա հետ: Գերմանացին հայտարարության մեջ կրկնել էր Էյվազովի բերած պատճառը՝ Ռուզան Մանթաշյանը հայ է: Բացի այդ, Հանս Յոահիմ Ֆրեյը նաեւ հայտարարել էր, թե իբր Դրեզդենի օպերային թատրոնը Ռուզան Մանթաշյանի հետ պայմանավորվածություն չունի:

Դժվար չէ պատկերացնել Ռուզան Մանթաշյանի հոգեվիճակն այդ օրերին: Նրա կողքին չլինելով էլ՝ հասկանալի է, որ երգչուհին շոկի մեջ է հայտնվել. բավական չէ՝ նա դարձել հայատյացության զոհ, դեռ համերգի կազմակերպիչն էլ հայտարարել է, թե երգչուհու հետ պայմանագիր չի կնքվել:

Դեպքերի ընթացքին ոչ թե ուղղակի հետեւած, այլ դեպքերին մեծապես միջամտած Հասմիկ Պապյանն ամենայն մանրամասնությամբ հետազոտել է ու հավաստիացել, որ Ռուզան Մանթաշյանի անունը հենց սկզբից ամրագրված է եղել մեծ համերգի ցանկերում: Բացի այդ, եթե նրա անունը չլիներ, Էյվազովն ինչպե՞ս եւ ինչո՞ւ պետք է բոյկոտեր համերգը:

Ուղղակի խղճալ է պետք Էյվազովին: Նախ՝ համաշխարհային դասական երաժշտարվեստը նա ստորադասում է ազգայնամոլական նկրտումներին, հետո՝ ո՞վ իմանա՝ միգուցե նա պարտավորված է եղել զեկուցել Ադրբեջանին, որ հեղինակավոր համերգային երեկոյին երգելու է հայ երգչուհու հետ: Իսկ գաղտնիք չէ, որ նրա երկիրը նման հարցերում հանդուրժող չէ: Ո՞վ գիտե՝ միգուցե այդ երկրից են հրահանգել, որ իրենց երգիչը հրապարակավ հրաժարվի հայ երգչուհու հետ բեմ բարձրանալ՝ ազգամիջյան հակամարտության արձագանքները տեղափոխելով բարձրաշխարհիկ երաժշտության դաշտ: Հիվանդագին երեւույթները խորթ չեն այդ երկրին ու նրա ներկայացուցիչներին: Մեծ սորտում էլ ենք հաճախ նման դրսեւորումների հանդիպում:

Սկանդալային միջադեպի մասին շատերն են կարծիք հայտնել՝ մեծ մասամբ դատապարտելով ու ամոթանք տալով ոչ միայն Էյվազովին, այլեւ համերգի կազմակերպիչներին: Բայց հատկապես հայ հանրությանը ցնցել է ՌԴ ժողովրդական արտիստ Վլադիմիր Սպիվակովի հայ կնոջ՝ **Սաթի Սպիվակովայի** հանրային հրապարակումը: Տիկին Սպիվակովան ասել է, որ ինքը պաշտպանում է Յուսիֆ Էյվազովին ու գիտե, որ նրան խաբել ու զրպարտել են: Նա նաեւ հորդորել է բոլորին հանգստանալ ու վերջ տալ «զառանցանքին»:

Համաշխարհային մշակույթի բոլոր գործիչների մեջ Սաթի Սպիվակովան միակն է, որ պաշտպանել է Յուսիֆ Էյվազովին: Մյուսներն անգամ շատ խիստ վերաբերմունք են դրսեւորել: Գրող **Նարինե Աբգարյանը** եւս դատապարտել է Էյվազովի արարքն ու կոչ արել համաշխարհային երաժշտարվեստի ներկայացուցիչներին ազգայնամոլական դրսեւորումներն արմատախիլ անել:

Կանխատեսո՞ւմ էին Էյվազովը, Նետրեբկոն, համերգի կազմակերպիչները, որ հայ ու օտարազգի գործիչների բողոքի ալիքը կվերաճի աղմուկի. այնպիսի աղմուկի, որը հանդարտեցնելու համար ստիպված են լինելու բանավոր ու գրավոր ներողություն խնդրել Ռուզան Մանթաշյանից ու նրա ներկայացուցիչներից: Միանշանակ պատասխանել այս հարցին հնարավոր չէ:

Բողոքի ալիքը տեղին էր ու զուսպ, առանց ագրեսիայի ու կտրուկ քայլերի: Հայտնի է, որ եվրոպական երաժշտական հայտնի ընկերություններն աղմուկի ու կոնֆլիկտի կողմնակից չեն: Աղմուկը չէր բխի նաեւ Ռուզան Մանթաշյանի շահերից: Երիտասարդ աղջիկը, որը մեծ ջանքերի գնով է արժանացել աշխարհահռչակ օպերային դահլիճներում երգելու պատվին, կարող էր մեկ րոպեում կորցնել տարիների վաստակածը: Ի վերջո, օպերային թատրոնները սկանդալներից ու սկանդալային դեմքերից խուսափում են: Թեեւ այս ամբողջ ընթացքում Ռուզան Մանթաշյանը եւ ոչ մի հրապարակում չի կատարել, վիրավորված լինելու կամ իր հետ անարդար վարվելու մասին չի խոսել, բայց բացառված չէր, որ նա դառնար սկանդալի պատճառ, ինչը բացասաբար կազդեր նրա հետագա կարիերայի վրա: Թերեւս հենց այդ պատճառով է, որ երգչուհին մինչեւ հիմա որեւէ խոսք չի ասել, անգամ չի դատապարտել իր հետ կատարվածը: Բայց նա ունեցել է պաշտպանների մեծ բանակ, որը հավասարակշիռ, խելացի քայլերի միջոցով վերականգնեց արդարությունը: Այդ բանակը ոտքի կանգնեց Հասմիկ Պապյանի շնորհիվ: Սա նախադեպ կդառնա, որ այսուհետեւ որեւէ Էյվազով կամ եվրոպացի հայատյաց քայլ անելուց առաջ ծանութեթեւ անի, ավելի զգույշ լինի ու հետեւանքների մասին մտածի:

Ռուզան Մանթաշյանը կերգի փետրվարի 7-ին Դրեզդենում կայանալիք մեծ համերգին, նա համաձայնությունը հայտնել է: Կերգի Չայկովսու «Եվգենի Օնեգին» օպերայից Տատյանայի արիան:

## Բազմաշնորհ արվեստագետը՝ Գուրգեն Մանուկյան



Գուրգեն Մանուկյանը բազմաշնորհ արվեստագետ է: Նա ոչ միայն ջրաներկով եւ յուղաներկով է կտավներ ստեղծում, այլեւ զբաղվում գրաֆիկական արվեստով եւ ֆիլմերի նկարահանման վայրերի ձեւավորումով:

Ծնվել է Երեւանում 1937-ին, Վանից տարագրված ընտանիքում: Պապը մասնակիցներից է եղել Վանի հերոսական ճակատամարտերին: Միջնակարգ կրթություն ստանալուց հետո աշխատել է Երեւանի Ռուսական թատրոնում (1956-63 թթ.): Հինգ տարի Մոսկվայում կիրառական արվեստի ֆակուլտետում սովորելուց հետո, վերադարձել է Հայաստան եւ աշխատանքի անցել Հայֆիլմում եւ հեռուստատեսային ստուդիաներում: Ստեղծել է կամ մասնակցել ստեղծելու մոտ 40 ֆիլմեր, որոնց թվում են «Հայրիկը», «Քաոսը», «Հեծյալ, որին սպասում էին», «Դեպի Սասունցի Դավիթ», «Սպիտակ ափեր», «Ջուր մեր հանապազօրյա», «Հրաժեշտ սահմանից այն կողմ» կինոնկարները:

«Իմ նախասիրած ստեղծագործությունները հայ մշակույթի մեծագույն վարպետների՝ Կոմիտասի, Խաչատրյանի, Խրիմյան Հայրիկի դիմանկարներով կատարված կտավներն են», նշել է նա «Միրոր-Սփեքթեյթրի» աշխատակազմից **Արամ Արքունի** հետ զրուցելիս:

Մանուկյանը Բոստոն (ԱՄՆ) է տեղափոխվել 1990-ական թվականներին, այնտեղ երկու ցուցահանդեսներ կազմակերպելուց հետո: Անցյալ տարի լույս է տեսել նրա «Հայկական տարազ» հատորը, որ երկար տարիների ուսումնասիրությունների արդյունք է: 1972-ին, Մոսկվայում «Հայրիկ» ֆիլմի նկարահանումների օրերին, նա մի գրախանութ է մտնում այնտեղ եւ ալբոմներ թերթելիս դեմ առ դեմ գալիս հայկական տարազների, որոնք ներկայացված են լինում որպես թուրքական: Երեւան վերադառնալիս երդվել է պատրաստել մի ալբոմ, որտեղ հայկական տարազները ճիշտ ներկայացված կլինեն ըստ Արեւմտյան Հայաստանի նահանգների: Ալբոմում, որը «Անտարես» հրատարակչատունն է լույս ընծայել եւ որի շնորհանդեսը Դետրոյթում կայանալու է գարնանը, նա ծանոթ ավանդականի կողքին նաեւ ներկայացրել է մոռացության մատնված տարազներ, հնարավորության սահմաններում վերականգնելով դրանք: Հ.Ծ.



*Արամ Խաչատրյան, 1982*

AZG NEW MSHAKUIT.qxd 30/01/2020 18:02 Page 2



# Կարեն Սամունջյան. «Հայաստանի հոգու խճանկարն ավելի մեծ է, քան Հայաստանն ինքը»

**Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ**

*Կարեն Սամունջյանը բազմաշնորհ արվեստագետ է. ծնվել է 1967 թվականին, Թբիլիսիում, բնակվում է ԱՄՆ-ում: 1985-ին ընդունվել է Վրացական պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ֆակուլտետ: 1990-ին արտագաղթել է Միացյալ Նահանգներ: Հեղինակ է «Այգեպան» եւ «Ճաշակի գործ» գրքերի: Նրա պոեզիան տպագրվում է* ***litprichal.ru*** *եւ ռուս գրականության այլ կայքերում...*

**-Հարգելի Կարեն, սկզբում քո մասին իմացել եմ որպես բանաստեղծի, բայց պարզվեց, որ ներգրավված ես նաեւ դիզայնի, ճարտարապետական նախագծման, նկարչության եւ լուսանկարչության ոլորտներում:Ո՞ր մասնագիտությունն է քեզ առավել բնորոշ:**

-Ճարտարապետական նախագծումն ու դիզայնը, չնայած կերպարվեստը նույնպես մասամբ իմ մասնագիտությունն է: Իմ գեղանկարների մեծ մասը վաճառվում է: Լուսանկարչությունը բացառապես կիրք է ու անհրաժեշտություն, երբ ճանապարհորդում եմ: Բջջային հեռախոսս իմ միակ լուսանկարչական խցիկն է... դա մասնագիտությունից մի փոքր հեռու է թվում... ճիշտ չէ՞:



**-Ճիշտ է... Դու ծնվել ես Թբիլիսիում, հայկական հարուստ անցյալ ունեցող քաղաքում: Պատմի՛ր ընտանիքիդ ու Թբիլիսիի՝ քեզ տվածի մասին:**

-Ես մեծացել եմ հայ-ռուսական ընտանիքում: Ծնողներս՝ Ռաֆայել Սամունջյանը եւ Լիլյա Սամունջյանը, ծնյալ Գավրինա, ծնվել են Թբիլիսիում: Հայրս սովորել է Վրաստանի Գեղարվեստի ակադեմիայում: Պապս՝ Հակոբ Սամունջյանը, ծնվել է Ախալքալաքում: Սա ինձ դարձնում է երրորդ սերնդի հայ Վրաստանում:

Ես քաջատեղյակ եմ վրացական մշակույթին եւ վրացի ազգին որպես իմ սեփականն եմ ընդունում: Թբիլիսին ինձ շատ բան է տվել, բայց ամենակարեւորը՝ երախտագետ լինելու զգացում: Բոլոր փոքր բաները գնահատելը... վայելել մի կտոր հաց, մի բաժակ գինի... ընկերների հետ անցկացնել լավ ժամանակ ու միմյանց հետ բարի կամք փոխանակել... Կյանքի պարզ հաճույքները:

**-Դու գրում ես ռուսերեն, որը քո մայրենի լեզուն է: Արդեն 30 տարի է՝ ապրում ես ԱՄՆ-ում ու գրում ես նաեւ անգլերեն: Ինչ-որ տեղ զբաղեցնո՞ւմ ես ժամանակակից ռուս եւ ամերիկյան պոեզիայում:**

-Սահուն խոսում եմ երեք լեզվով՝ ռուսերեն, վրացերեն եւ անգլերեն: Դժբախտաբար, հայերեն շատ քիչ եմ հասկանում: Ռուսերենն իմ մայրենի լեզուն է, ու ինձ հետեւողներից շատերը ռուսախոսներ են: Հազարից ավելի բանաստեղծություն եմ գրել, կարծում եմ, բավականաչափ սերմեր եմ ցանել: Կարծում եմ՝ այժմ մեզ միայն բերքահավաք է անհրաժեշտ: Հենց հիմա դժվար է ասել, թե կոնկրետ ի՞նչ տեղ կգրավի իմ պոեզիան՝ ընթերցողներիս սրտում լինելուց բացի: Սահմանը երկինքն է:

**-Քեզ հետաքրքրում են կրոնական փիլիսոփայությունը, էզոթերիկ ուսմունքները եւ ժամանակի երեւույթը: Մեկ այլ առիթով ես կցանկանայի երկար զրուցել քեզ հետ հատկապես վերջինի մասին, բայց հիմա միայն մեկ հարց կտամ. նույնիսկ երեխաներն են արդեն դժգոհում, որ ժամանակն արագ է անցնում: Ունե՞ս որեւէ բացատրություն:**

-Սա իմ սիրելի զրույցի թեմա՛ն է: Ես հավատում եմ, որ ժամանակը հակամարտություն է մեր հավերժական հոգու եւ ժամանակավոր եսի միջեւ: Մարդ ո՞ր տեսակետն է ընտրում ժամանակի դիտարկման համար: Չկա մի գործիք, որը կարելի է գործածել ժամանակը չափելու համար: Գոյություն ունեցող վայրկյանի խորությունը չափազանց մեծ է այն սահմանափակելու համար: Մահանալուց առաջ եղած վայրկյանը... ծնվելուց հետո եղած վայրկյանը... անհամեմատելի են:

**-ԱՄՆ-ում ռուսալեզու հայերը սովորաբար կապ չունեն տեղի հայ համայնքի հետ: Իսկ դո՞ւ:**

-Հյուսիսային Ջերսիի շրջակայքում քիչ հայկական եկեղեցիներ ունենք: Ես այդ մեծ համայնքի մաս եմ կազմել երիտասարդության տարիներին: Ինչպես Թբիլիսիում, այստեղ եւս հայերի հետ իմ հարաբերությունները շատ բարեկամական, բայց պատահական են:

**-Քո գործունեության մեջ հայ մշակույթը որեւէ տեղ ունի՞:**

-Բացառիկ հայ մշակույթը մեծ պատմություն ունի: Ազգի հին լինելը մեծապես ազդել է ողջ աշխարհի հայ արվեստագետների վրա: Հայաստանի հոգու խճանկարն ավելի մեծ է, քան Հայաստանն ինքը: Այդ խճանկարում ես հազարավորներից մեկն եմ՝ որպես նկարիչ, որպես բանաստեղծ եւ որպես անհաս...

**-Դու կազմել ես «Իմ Իտալիան» եւ «Իմ Արգենտինան» լուսանկարչական ալբոմները: Իսկ «Իմ Հայաստա՞նը»...**

-Դժբախտաբար, ես դեռ պատշաճ կերպով չեմ այցելել Հայաստան... անցյալ տարի իմ ուղեւորությունը շատ կարճ էր, որպեսզի անեի՝ ինչ կուզեի անել: Հաջորդ անգամ կցանկանայի ուսումնասիրել Հայաստանն այնպես, ինչպիսին ես հարկ եմ համարում: Սովորաբար իմ ուղեւորություններից հետո ես ոգեշնչվում եմ: Սկսում եմ գրել մտքերով: Իմ բանաստեղծություններին կցված լուսանկարչական շարքերը նպատակ ունեն ներգրավել նոր մարդկանց: Հայաստանը հատուկ է: Ես պետք է ծրագրեմ մի ճիշտ ժամանակ, որպեսզի նրան այցելեմ ճիշտ կերպ:

**-Դու մի քանի բանաստեղծություն ես նվիրել Հայաստանին: Խնդրեմ ներկայացրու մեկ-երկուսը:**

-Հաճույքով: Ահա երկուսը՝ Հենրիկ Բաբաջանյանի թարգմանությամբ:

### ԻՄ ՆԱԽԱՊԱՊԸ

*Դիպչելով եզրին սուրբ հողի*
*Շնչելով ծաղկունքը դարի...*
*Ես գիտեմ, որ իմ նախածնողը*
*Նայել է արեւամարին...*
*Կտրելով սահմանը բախտի*
*Թռչում էր, թող հուշս չմարի,*
*Կծկված իր մաշված թամբին,*
*Տակով ղողանջող կամարի...*
*Եվ բռնած սանձերի ծերերից*
*Ու հեծած աշխետ խենթ ձին*
*Նախապապս, բարբարոս վերեւից*
*Կամք ուներ ազատածին:*
*Վառելով սարերում հուր-բոցը*
*Նայելով Գիշերվա բիբերին*
*Լսել է սարսափի ոռնոցը*
*Չի եղել նա ահի գերին:*
*Օրը դար ապրելով անապակ*
*Մերձացած բախտի հետ իր խուլ*
*Սառ ձյուն է խմել նա պապակ՝*
*Նախապապս՝ ափից իր գոլ:*

### ԱԽ, ԵՐԵՎԱՆ

*Նրբանցքներում կենսառատ կարմրաերանգ սուտակով,*
*Տերությունում վեհ կանանց եւ ֆիդայի այրերի,*
*Իսկն երկիր տիրասուր եւ հայտնության կրակով,*
*Կանչող տեսքով հրահուր դեպի հավատն հայերի:*
*Արծիվների չուն վերում հայեցությամբ ակնահաս՝*
*Քամիներին ընդառաջ տանող իղձեր մարդկային,*
*Քնի ժամին պանծալի - Արարատն է ձյունառաս,*
*Այնտեղ գարուն խենթացած՝ հանդերձանքում ծիրանի:*
*Ա՜խ Երեւան... Երեւան... Ունես հազար լիճ, գետեր,*
*Բյուրեղյաակն դու Սեւան, փերի՝ նայող դեպ Աստված...*
*Տաճարներդ՝ քո որդիք... հնուց Աստված է կերտել:*
*Քաղաք-հերոս այրերի՝ դժոխքներից համբառնած:*
*Դու՝ բուրմունք ձոր-սարերի,*
*Որթ՝ լույսի անապական,*
*Դյուցազն քաղաք դարերի՝*
*Նայող դեպի ապագան...*

# Հայ բառարանագրի աշխատության քննական վերահրատարակությունը

Լույս է տեսել Գերմանիայում հրատարակվող «Թուրքական ժողովուրդների լեզվի, պատմության եւ մշակույթի ուսումնասիրություններ» մատենաշարի 23-րդ պրակը՝ «**Ջովաննի Մոլինոյի «Իտալերեն-թուրքերեն բառարանը**», **1641**»՝ լեհ թուրքագետ **Էլժբետա Շվիենչիցկայի** աշխատասիրությամբ: Ջովաննի Մոլինոն հայ մատենագիտությանը ծանոթ տպագրիչ եւ թարգմանիչ Հովհաննես Անկյուրացին է, որի ներդրումները թուրքերենի պատմությանն ու օսմանյան թուրքական մշակույթին մինչ օրս ան-




հայտ էին: 17-րդ դարում Հռոմում նրա հրատարակած եւ իր տեսակի մեջ առաջին թուրքերեն բառարանի շուրջ 8000 բառերը վերցված են խոսակցական թուրքերենից: Շվիենչիցկան ոչ միայն քննական հրատարակության է ենթարկել Մոլինոյի բառարանը, այլեւ վերակազմել է հակադարձ եղանակով՝ թուրքերեն-իտալերեն: Մոլինոյի բառարանի միավորները ներկայացված են ըստ ձեւաբանական եւ հնչյունաբանական սկզբունքների, իրենց ուղղագրական տարբերակներով՝ բացահայտելով ժամանակաշրջանի օսմաներենի ձեւաբանա-հնչյունաբանական օրինաչափությունները: Մոլինոյի գրառած լատինատառ թուրքերենի հնչումը գրեթե նման է ժամանակակիցին ու կարող է համարվել կամուրջ դեպի ժամանակակից թուրքերենը: Աշխատասիրողը ներկայացրել է նաեւ Մոլինոյի կենսագրությունը, նրա աշխատանքի համատեքստը, կապը նախորդների ու հաջորդների հետ եւ կատարել նախնական լեզվաբանական նշումներ:

Էլժբետա Շվիենչիցկան թուրքագիտություն է ուսանել Կրակովի Յագելոնյան համալսարանում: Հաստատվելով Շվեդիայում՝ տարիներ շարունակ թուրքերեն, թուրքական պատմություն եւ գրականություն է դասավանդել Ուփսալայի եւ Ստոկհոլմի համալսարաններում: Հեղինակ է թուրքերենին, թուրք-լեհական եւ թուրք-շվեդական պատմական կապերին նվիրված հոդվածների, որոնք լույս են տեսել գիտական հրատարակություններում՝ լեհերեն, անգլերեն եւ շվեդերեն: 2000-ին հրատարակել է ծավալուն հոդված 17-րդ դարի լեհահայ ազնվական, դիվանագետ Զակարիաշ Գամոցկիի մասին:

**Ա. Բ.**

# Հայկական ասացվածքների ժողովածու բուլղարերեն

Հունվարի 21-ին Սոֆիայի Բուլղար լրագրողների միության դահլիճում մոտ 90 ներկաների մասնակցությամբ կայացավ անցած տարեվերջին լույս տեսած «**Անուշ հոտը վարդից կուզեն, մարդկությունը մարդուց կուզեն. հայկական առածներ ու ասացվածքներ**» վերնագրով գրքի շնորհանդեսը: Ժողովածուն կազմել է սոֆիաբնակ պատմաբան, թարգմանչուհի **Գոհար Խնկանոսյանը**: Հատորն ընդգրկում է հայկական մոտ 400 ասացվածք, լույս է տեսել Սոֆիայի «Իզտոկ-Զապադ» («Արեւելք-Արեւմուտք») հրատարակչությունում, հրատարակվել է Հայկական դպրոցական ընկերության կողմից Բուլղարիայի Նախարարների խորհրդի ազգային փոքրամասնությունների խրախուսման ծրագրով:




Գոհար Խնկանոսյանը ծնվել է Երեւանում, մանկուց բնակվում է Բուլղարիայում: Սոֆիայի Սուրբ Կլիմենտ Օխրիդսկու անվան համալսարանի բանասիրական բաժնում արժանացել է բակալավրի աստիճանի՝ հայ բանասիրության (1997-2001) ու մագիստրոսի աստիճանի՝ իրանագիտության գծով (1994-1999): Աշխատել է որպես հայոց լեզվի ուսուցչուհի Վիլյամ Սարոյանի անվան պետական դպրոցում եւ վարել է շաբաթօրյա դասընթացներ: Հայագիտական թեմաներով զեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում: 2018 թվականին Բուլղարիայի Գիտությունների Ակադեմիայում պաշտպանել է ատենախոսություն «Բուլղարիայի հայկական մշակութային օջախները 1878-1944 թթ.» թեմայով եւ արժանացել պատմական գիտությունների թեկնածուի աստիճանի: Աշխատակցել է բուլղարահայ մամուլին: Հայերենից բուլղարերեն թարգմանությամբ հրատարակել է նմուշներ հայ գրականությունից (Ակսել Բակունց, Հովհաննես Շիրազ, Սիլվա Կապուտիկյան, Յուրի Սահակյան եւն):

**Ա. Բ.**

# Չափանիշը պրոֆեսիոնալ բարձր մակարդակն է

## «Նարեկ» պարային համույթ

**Նազենիկ ՍԱՐԳՍՅԱՆ**

Արվեստագիտության դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի
առաջատար գիտաշխատող





Նախորդ՝ 2019 տարվա նոյեմբերին եւ դեկտեմբերին Նորքի Հայորդյաց տան «Նարեկ» պարային համույթը նշեց իր 30-ամյա հոբելյանը Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնի բեմում: Նոյեմբերի 25-ին համույթը հանդես եկավ վերջին չորս տարվա ընթացքում բեմադրված հինգ ներկայացումների դրվագներից կազմված յուրօրինակ գեղարվեստա-վավերագրական ծրագրով: Դեկտեմբերի 16-ին տեղի ունեցավ «Նարեկ» համույթի պարային դպրոցի հաշվետու ավարտական համերգը, որի ընթացքում դպրոցի սաները հանդես եկան տարբեր պարային ոճերով բեմադրված համարներով:

Նախ եւ առաջ պետք է նշել, որ 90-ականներից ի վեր Երեւանում (նաեւ, անշուշտ, Հայաստանի այլ շրջաններում եւ քաղաքներում) սկսեցին ձեւավորվել բազում պարային դպրոցներ, ստուդիաներ, համույթներ: Անշուշտ, դրանցից միայն հատ ու կենտը պատշաճ մակարդակ ունեն եւ կարող են գնահատվել որպես պրոֆեսիոնալ՝ Հայաստանը այլ երկրներում ներկայացնելու արժանի: «Նարեկ» պարային համույթը պատկանում է վերջիններիս շարքին:

Մայր աթոռ Սբ. Էջմիածնի եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախաձեռնությամբ ստեղծված եւ ներկայումս գործող Հայորդյաց տուն անվանումը կրող բազում կազմակերպությունների նպատակն է հայ երեխաներին ներգրավել արվեստի աշխարհը: Այստեղ դասավանդվում են արվեստի ամենատարբեր ձեւերը: Նորքի Հայորդյաց տան պարային համույթը հիմնադրել է 1989 թ. **Լյուդվիգ Բուլղադարյանը**: Հետագայում հայ պարարվեստի ամենափայլուն ներկայացուցիչների թվին պատկանող **Փայլակ Սարգսյանի** կողմից համույթին կից կազմավորվել է պարային դպրոցը: Նա ձեւավորեց պրոֆեսիոնալ պարային ուսուցման պահանջներին համապատասխանող համակարգը: Դպրոցն ընդունվում են նախնական քննություն անցնելով, ամեն ուսումնական տարվա կիսամյակին եւ ավարտին սաները քննություններ են հանձնում: Ուսման տեւողությունը վեց տարի է, որից հետո լավագույն աշակերտներն անցնում են պահեստային խումբ, իսկ այնուհետեւ արդեն դառնում պարային համույթի դերասան-պարողներ: Դպրոցում դասավանդվում է երեք առարկա: Որպես հիմնականը՝ դասական պար, այնուհետեւ՝ հայ ժողովրդական պարային ֆոլկլորի, ինչպես նաեւ այլ ժողովուրդների ժողովրդական պարերի բեմական տարբերակների հիմունքները, եւ վերջապես՝ այսպես կոչված՝ contemporary (ազատ, մոդեռն) պարի դասընթացը: Պարային համույթում ընդգրկվում են դպրոցն ավարտած լավագույն սաները:

2004 թ. Նորքի Հայորդյաց տան «Նարեկ» պարային համույթի ղեկավարը դարձած **Արման Ջուլհակյանը** շարունակեց եւ զարգացրեց իր ուսուցիչ Փայլակ Սարգսյանի ավանդույթները:

Արմանը ծնվել եւ մեծացել է դերասանական ընտանիքում: Հայրը՝ Հրաչ Ջուլհակյանը, ավարտել է Երեւանի պարարվեստի ուսումնարանի դասական պարի բաժինը: Կարճ ժամանակ աշխատել է Սպենդիարյանի անվան թատրոնում որպես բալետի արտիստ, սակայն ստացած վնասվածքի պատճառով ստիպված դադարեցրել է կատարողական գործունեությունը: Մայրը՝ Աիդա Անդրեասյանը, ավարտել էր Երեւանի Գեղարվեստաթատերական ինստիտուտի ռեժիսորական բաժինը: Նրա ղեկավարն էր Վարդան Աճեմյանը: Մանկուց Արմանը ցուցաբերեց ունակություններ արվեստի տարբեր ոլորտներում, որոնցից առաջինը գեղանկարչությունն էր: Երեք տարի սովորել է Թերլեմեզյանի անվան գեղանկարչական ուսումնարանի դիզայնի բաժնում, այնուհետեւ ընդունվել է Գեղարվեստաթատերական ինստիտուտի դրամատիկական թատրոնի ռեժիսուրայի բաժինը, Ալեքսանդր Գրիգորյանի կուրսը: 2002 թ., ինստիտուտն ավարտելուց հետո, զորակոչվել է բանակ, որտեղ ծառայել է որպես «Սարդարապատ» պարային համույթի կատարող: Ծառայության ավարտից հետո ընդունվել է «Բարեկամություն» պետական պարային համույթ: Մեկուկես տարի անց դարձել է այդ համույթի մենակատար: Հանդես է եկել «Ճանապարհ», «Նոկտյուրն», «Չինար ես», «Արշիլ Գորկու վերջին նամակը» եւ այլ մենապարային համարներում: 1996-ից նաեւ աշխատել է Նորքի Հայորդյաց տանը որպես նկարիչ-ձեւավորող, այնուհետեւ դարձել պարի դպրոցի պարուսույց-մանկավարժ: 2004-ից մինչ այսօր (արդեն շուրջ 16 տարի) համույթի եւ դպրոցի գեղարվեստական ղեկավարն է: Մինչեւ 2015 թ. բեմադրել է բազում պարային համարներ, իսկ 2016-ից 2018-ը՝ հինգ բալետային ներկայացում:

Այժմ անդրադառնանք խաղացանկին: Երեւի թե Հայաստանի ոչ մի պարային համույթ (նույնիսկ մեր օպերայի եւ բալետի թատրոնը) չունի այնքան բալետային ներկայացումներ՝ նվիրված Մեծ եղեռնի թեմային, որքան «Նարեկ» պարային համույթը:

Նախասկիզբը հանդիսացավ 2015 թ. ստեղծված «Ո՞ւր է, մա՛հ, հաղթանակը քո» ներկայացումը, որտեղ Արման Ջուլհակյանը հանդես եկավ որպես գաղափարի հեղինակ եւ երկու գլխավոր դերակատարներից մեկը: Պլաստիկ ներկայացման ռեժիսորն էր **Գրիգոր Խաչատրյանը**, բալետմայստերը՝ **Արա Ասատուրյանը**: Ներկայացման մեջ ներգրավված էին «Նարեկ» պարային համույթի ցածր դասարանի վեց աշակերտ...

Արդեն հետագա ներկայացումները, ինչպես ընդգծեց ինքը՝ Արմանը, ստեղծվել են ռեժիսոր Գ. Խաչատրյանի, բալետմայստերներ Ջուլհակյանի եւ Արա Ասատրյանի համագործակցությամբ:

Առանձնակի պետք է նշենք, որ Արմանը հանդես է գալիս նաեւ որպես ներկայացումների հանդերձանքի եւ մեծ մասամբ բեմահարդարման բեմադրող նկարիչ:

Արդեն 2016 թ. հանրահայտ կինոռեժիսոր Անրի Վեռնոյի որդու՝ **Պատրիկ Մալաքյանի** նախաձեռնությամբ բեմադրվեց «Հավերժություն» բալետը, որի հիմքում ընկած է հայ ժողովրդի պատմությունը հինավուրց ժամանակներից մինչեւ մեր օրերը: Հիմնական շեշտը դրված է 1915 թ. Հայոց ցեղասպանության եւ տեղահանման թեմայի պարային մեկնաբանման վրա: Ներկայացումը ցուցադրվեց Մարսելի «Կոնգրե» պալատում:

Հետագա տարիներին բեմադրվեցին եւս չորս ներկայացումներ՝ «Հոգիս», «Ամեն», «Մեր խոստումը», «Սասունցիների պարը», որոնք տարբեր տեսանկյուններով բացահայտում են Մեծ եղեռնի թեման, սակայն ոչ մեկը ըստ սցենարի եւ պարային լուծման չեն նմանվում իրար:

Այսպես, 2016 թ. բեմադրված «Հոգիս» բալետի հիմքում ընկած է մի սիրո պատմություն: Տեղահանության զոհ երկու մանուկներ՝ աղջիկ ու տղա, որոնք շատ կապված են իրար՝ բաժանվում են: Աղջիկը մեկնում է Նյու Յորք, իսկ տղան՝ Հայաստան: Ողջ կյանքի ընթացքում նրանք հոգեպես կապված են մնում, եւ երազում են հանդիպման մասին, սակայն հանդիպում են իրար արդեն պատկառելի հասակում՝ Հայաստանում, մեր «մութ» 90-ականներին: Երկրագնդի տարբեր ծայրերում գտնվող սիրահար զույգի կյանքը պատկերված է բեմի երկու հարթակում: Վերեւի բեմահարթակում Նյու Յորքն է, որտեղ ապրում է աղջիկը: Այստեղ ընդհանուր առմամբ ներկայացված է ամերիկյան կյանքը, հնչում է ջազը, կատարվում են ամերիկյան հատուկ ոճով բեմադրված պարեր: Ներքեւի մասում Հայաստանն է, զինվորական կյանքը, ռազմական տեսարաններ:

Աղջիկը եւ տղան հետզհետե մեծանում են՝ ուստի գլխավոր դերակատարները փոխվում են համաձայն տարիքի՝ երեխա, երիտասարդ եւ արդեն հասուն մարդիկ:

Երեւի թե բալետի ամենավառ տեսարանն է արդեն Հայաստանում միացած զույգի կացությունը «մութ» 90-ականներին, որտեղ մարդիկ բոլորված են վառարանի եւ նավթի լամպի շուրջը: Հանկարծ այդ բոլոր առարկաները վերածվում են երաժշտական գործիքների եւ սկսվում է խմբային ուրախ տեսարան՝ խորհրդանշող հայ մարդու անսասան լավատես եւ դժվարությունները հաղթահարող անմահ ոգին: Բալետը ստեղծվել է **Անի Մանուկյանի** եւ Պատրիկ Մալաքյանի նախաձեռնությամբ եւ ներկայացվել Նյու Յորքի «Սիթի սենթր» թատրոնում՝ ՀԲԸՄիության 110-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների շրջանակում:

2017 թ. երկու պրոդյուսերների եւ գաղափարի հեղինակ կոմպոզիտոր **Արաքսի Մուշեղյանի** եւ **Հասմիկ Չաքմաքչյանի** առաջարկով «Նարեկ» համույթը դարձավ «Ամեն» ներկայացման մասնակից եւ պարային-շարժական տեսարանների հեղինակ: Ինչպես հայտնի է, մասնակցության համար հրավիրվեցին լավագույն երգիչներն աշխարհի տարբեր երկրներից՝ **Հովհաննես Այվազյանը, Բարսեղ Թումանյանը, Ջուլիես Գալստյանը, Հրաչուհի Բասենցը**... Ներկայացմանը մասնակցում էր Պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը **Էդուարդ Թոփչյանի** ղեկավարությամբ, ժողովրդական գործիքների համույթի եւ ջազային նվագախմբի հետ համատեղ: Անշուշտ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հիմնականում ողջ արարողությունը պարային էր եւ նշված հանրահայտ երգիչները իրենց դրվագները կատարելիս նույնպես ներգրավված էին շարժական տեսարաններում: Ինչպես հայտնի է «Ամեն»-ը ցուցադրվել է Մարզահամերգային համալիրում:

2017 թ. կրկին Պատրիկ Մալաքյանի պատվերով ստեղծվեց հայտնի «Խոստումը» ֆիլմի բեմական պարային մեկնաբանությունը «Մեր խոստումը» խորագրով, կինոնկարում հնչող երաժշտության հիմքով: Երաժշտական մասի կատարումը կրկին ապահովեց Պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ եւ «Հովեր» երգչախումբը **Սոնա Հովհաննիսյանի** ղեկավարությամբ:

2018 թ. բեմադրվեց կանադահայ կոմպոզիտոր **Մաժակ Թոշիկյանի** երաժշտությամբ «Սասունցիների պարը» ըստ **Գեւորգ Էմինի** համանուն պոեմի: Այստեղ ամենակարեւորը առաջին պլան բերվեց հայոց այբուբենը եւ գիրքը, որոնք միավորում ու պահպանում են հայ ժողովրդի միասնականությունը եւ երկարակեցությունը: Ներկայացումը բեմադրվել է 2018 թվականին եւ 2019-ին ներկայացվել է Ստամբուլում:

«Նարեկ» համույթի մոտակա պլաններից են Մաժակ Թոշիկյանի երաժշտությամբ «Ախթամար» բալետի բեմադրությունը եւ Պատրիկ Մալաքյանի կողմից Անրի Վեռնոյի մասին պարային ներկայացման ստեղծումը կինոռեժիսորի ֆիլմերում օգտագործված երաժշտության հիմքով: Դժվար է, անշուշտ, ստեղծել այդքան բալետային ներկայացումներ՝ նվիրված Մեծ եղեռնին, ոչ միայն լուսաբանելով տարբեր տեսանկյուններով, այլեւ չկրկնելով պարային լեզուն: Եվ իրոք, վերը նշված ներկայացումները հիմնվել են հայ պարային ֆոլկլորի տարրերի յուրօրինակ մեկնաբանման վրա, բալետի եւ ազատ պարի համակարգին պատկանող տարրերի բազմազան համակցությունները երբեք չեն կրկնում իրար:

Վերջում կցանկանայինք ընդգծել, որ «Նարեկ» պարային համույթի 30-ամյա գործունեությունը ապացուցում է, որ հաջողության ամենակարեւոր գրավականն է բարձր մակարդակի պրոֆեսիոնալիզմը...

AZG NEW MSHAKUIT.qxd 30/01/2020 18:02 Page 4



Գարեգին ՂԱԶԱՐՅԱՆ

# «Հուշարձան» տարեգրքի նոր համարը

Նորերս լույս տեսավ ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի որոշմամբ, «Պատմամշակութային ժառանգություն» մատենաշարով եւ պետպատվերով հրատարակվող «Հուշարձան» տարեգրքի ԺԴ հատորը (գլխավոր խմբագիր՝ պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Հակոբ Սիմոնյան): Տարեգիրքը գիտական աստիճաններ եւ կոչումներ շնորհող Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատվել է որպես սահմանված կարգավիճակ ունեցող գիտական պարբերական՝ հեղինակներին ընձեռած համապատասխան իրավունքներով:

**ԺԴ հատորի «Ուսումնասիրություններ», «Նորահայտ հուշարձաններ», «Հուշարձանների հաշվառում», «Ճարտարապետություն», «Գրախոսություն» գլխագրերի ներքո ժողովված են 8 ուշագրավ նյութեր:**

Հակոբ Սիմոնյանի, պատմական գիտությունների թեկնածու Արսեն Հարությունյանի, Մերի Սաֆարյանի, Նանար Քալանթարյանի «Ստեփանոս Աղցից վանականի նորահայտ տապանագիրը» հոդվածը նվիրված է Աղցքի նշանավոր արքայական դամբարան-հուշահամալիրում հայտնաբերված՝ Ստեփանոս վանականի տապանաքարի, դրա արձանագրության ուսումնասիրմանը եւ թվագրմանը՝ պատմական իրույթների համատեքստում:

Արման Նալբանդյանի «Նորահայտ վիմագրեր Հավուց թառից» հոդվածում լուսաբանվել են Հավուց թառ վանական համալիրի «Բլրի» եկեղեցուն հարակից միջնադարյան գերեզմանոցում Պատմական հուշարձանները վերականգնող ճարտարապետների հայկական ասոցիացիայի հետազոտություններով եւ նշյալ ՊՈԱԿ-ի արշավախմբի պեղումներով բացահայտված վիմագրերն ու նոր՝ մատուռանման կառույցը, որն արդեն վկայագրվել է եւ ընդգրկվել հուշարձանների պետական ցանկում:

Պատմական գիտությունների թեկնածու Նյուրա Հակոբյանի «Լուսավորության միջնադարյան կավակերտ միջոցները» հոդվածը յուրուրույն ջատագովքն է Հայոց 3 մայրաքաղաքներում (Արտաշատ, Դվին, Անի) օգտագործված լուսավորության միջոցների (ճրագ, ճրագակալ, աշտանակ, ջահ), որոնց վաղագույն օրինակները Հայկական լեռնաշխարհում հայտնի են տակավին Ք.ա. IV հազարամյակից:

Պատմական գիտությունների թեկնածու Աղավնի Ժամկոչյանը «Արցախի Տիգրանակերտ քաղաքի միջնադարյան խեցեղենը» ուսումնասիրության մեջ տասնյակ արտեֆակտների լուսանկարաշարով հանգամանորեն ներկայացնում է 2005 թ. հայտնաբերված եւ պարբերաբար պեղվող մեր հին նոր Տիգրանակերտի V-XIV դդ. բազմատեսակ խեցեղենը՝ լայն տարածաշրջանային զուգահեռներ անցկացնելով:

Կարեն Ծերեթյանի եւ Հակոբ Սիմոնյանի «Ամուլսարի 2017 թ. պեղումների նախնական արդյունքները» հոդվածում գիտական բարձր մակարդակով արծարծված են Ամուլսարում (Վայոց ձորի մարզի Գնդեվազ գյուղի հողատարածք) նշյալ ՊՈԱԿ-ի եւ «Մշակութային ժառանգություն» ՀԿ-ի միացյալ արշավախմբի կատարած հնագիտական հետազոտությունների արդյունքներն ու առավել նշանակալի գտածոները (վանակատի մշակման արհեստանոց, աշտարակատիպ կառույց):




*«Հուշարձան» տարեգրքի նոր համարը*

Կարեն Ծերեթյանի մեկ այլ՝ «Հայտնաբերումներ Սյունիքում եւ Վայոց ձորում» հոդվածի ատաղձն է մեր այդ երկու մարզերում նույն ՊՈԱԿ-ի արշավախմբի 2016 թ. ուսումնասիրություններով հայտնաբերված 9 նորահայտ հուշարձանները (ժայռապատկերներ, քարայրեր, բնակատեղիներ, խաչքարեր):

Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Մարիետա Գասպարյանն իր «Արդի ժամանակաշրջանի երեւանյան ճարտարապետության զարգացումները» հոդվածում լայն անդրադարձներ է կատարում, մայրաքաղաքի գլխավոր հատակագծի կտրվածքով, 1990-ական թթ. եւ 2000-2017 թթ. ճարտարապետական եւ շինարարական կյանքի նորույթներին՝ վերլուծելով հիմնական նորակառույցների, բազմագործառական համալիրների, տրանսպորտային ցանցի տիպաբանությունը, միտումներն ու հեռանկարները:

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի որոշմամբ՝ «Պատմամշակութային ժառանգություն» մատենաշարով տպագրվել է նաեւ Երվանդ Սիմոնյանի «Ախալցխան կրակե օղակում» գիրքը (2-րդ, լրացված հրատարակություն, Եր., 2019 թ.), որն ամփոփում է ականատես հեղինակի հուշերն Առաջին աշխարհամարտի տարիների մասին եւ հատկապես 1918-1921 թթ. իրադարձալից Ախալցխա քաղաքի եւ հարակից 13 հայաբնակ գյուղերի նիստուկացը, ավանդույթներն ու սովորույթները, ազգամիջյան հարաբերությունները:

Հատորում զետեղված է «Հայկական հանրագիտարան. հրատարակչություն» ՊՈԱԿ-ի տնօրեն-գլխավոր խմբագիր, քիմիական գիտությունների դոկտոր, ծագումով Ջավախք աշխարհից Հովհաննես Այվազյանի գրախոսությունը՝ «Հերոսական ինքնապաշտպանության մի փառավոր էջ» վերտառությամբ:

«Հուշարձան» տարեգրքի ԺԴ հատորը հարուստ պատկերազարդված է (22 գունավոր էջեր), հանդերձված է անձնանունների, տեղանունների, հուշարձանների ցանկերով, որոնք դասդասվել են ըստ հայերենի եւ 4 օտար լեզուների (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն):

# Զապել Եսայանի գիրքը Էլիֆ Շաֆաքի գնահատմամբ



**Անցյալ տարվա դեկտեմբերի 26-ի համարում «Նյու Յորք Թայմս Բուք Ռիվյու» գրախոսականների ամերիկյան հանդեսը հարցազրույց է տպագրել ճանաչված թուրք մրցանակակիր վիպասան Էլիֆ Շաֆաքի հետ, որտեղ լրագրողի՝ «Ո՞րն է ձեր նախասիրած գիրքը, որն անծանոթ է ուրիշներին» հարցին նա պատասխանել է. «Զապել Եսայանի (1878-1943) «In the Ruins» («Ավերակներուն մէջ», 1911) գիրքը, որ պատմում է 1909ի Ատանայի ջարդերի մասին:**

**«Վիպասան, մտավորական, հասարակական գործիչ եւ ֆեմինիստական շարժման ռահվիրա գրողը փայլուն մտքի տեր կին էր, որն առաջ էր անցել իր ժամանակից: Նրա այդ գիրքը սրտաճմլիկ ճիչ է, եւ խիստ կարեւոր ժամանակագրություն, որն անպայման պետք է կարդալ», նշել է նա:**

**Շաֆաքը Եսայանի գրքին ծանոթացել է AIWA-ի (Հայ կանանց միջազգային ասոցիացիայի) լույս ընծայած անգլերեն թարգմանության միջոցով: AIWA-ն «Հայ կանանց գրական գանձերը» խորագրով մատենաշար է հրատարակում, որն արդեն, բացի «Աւերակներուն մէջ» հատորից անգլիախոս ընթերցողի սեղանին է դրել նաեւ Եսայանի «Սիլիհտարի պարտէզները» (1935 թ.) վեպ-հուշագրությունն ու «Հոգիս աքսորեալ» (1919 թ.) վիպակը:**

**Շուտով լույս կընծայվի նաեւ Սրբուհի Տյուսաբի (Վահանյան, 1841-1901 թթ.) «Մայտա» վեպը:**

**Էլիֆ Շաֆաքը գրում է ինչպես թուրքերեն, այնպես էլ անգլերեն լեզուներով: Նրա վերջերս լույս ընծայած գիրքը կոչվում է «10 րոպե եւ 38 վայրկյան այս տարօրինակ աշխարհում», որը «Booker Prize» 2019-ի մրցանակաբաշխութեան եզրափակիչ փուլ էր հասել: Նրա մյուս հատորներն են «Ստամբուլի լակոտը», «Սիրո 40 օրենքները» եւ «Եվայի երեք դուստրերը»:**

**«Կարդացեք կին գրողների, լրագրողների եւ բանաստեղծների գրությունները: Կին ասելով հասկանում եմ ընդհանրապես ամենատարբեր մշակութային անցյալ ունեցող էթնիկական խմբավորումների եւ ազգությունների իգական սեռի ներկայացուցիչներին», խորհուրդ է տվել Շաֆաքը հարցազրույցը վարող լրագրողին:** Հ.Ծ.

# Լուսանկարները որպես հարուստ ժառանգության վկաներ

Ժամանակին «կապիտան» եւ «բազե» կոչումներ կրող վարպետ օդաչու, իսկ հետագայում միջազգային համբավի արժանացած լուսանկարիչ **Հրայր Հռուկ Խաչերյանը** (Հրայր Բազե) ծնվել է Բեյրութում, Զեյթունից գաղթած ընտանիքում: 1984-ին տեղափոխվել է Կանադա, որտեղ ակտիվ հասարակական գործունեություն է ծավալել: Վերջին 30 տարիների ընթացքում նա մեծագույն նվիրվածությամբ եւ կրքոտությամբ ձեռնամուխ է եղել արկածախնդրական արշավների՝ լուսանկարելու եւ աշխարհին ներկայացնելու Հայաստանի, Արցախի, Երուսաղեմի եւ ավելի ուշ նաեւ Կիլիկիայի հրաշագեղ վայրերը, թաքուն անկյունները եւ դժվար հասանելի բարձունքներն ու ամրաշինությունները:



Վրաստանի եւ Կարսի վրայով Կիլիկիա այցելությունը մտահղացել է Ռոբերտ Էդուարդսի «Հայկական Կիլիկիայի ամրաշինությունները» խորագրով գիրքը կարդալուց հետո: Ինքն էլ իր հերթին հրատարակել է իր գիրք-ալբոմը: Եթե Էդուարդսը կենտրոնացել էր Կիլիկիայի պատմության, տեղագրության եւ դեպքերի վերլուծության վրա, Խաչերյանը դժվարամատչելի վայրերի հազվագյուտ լուսանկարներով է ներկայացրել իր ալբոմը, որն իր իսկ խոստովանությամբ 22 տարիների շարունակական ճանապարհորդությունների արդյունք է: Հաջորդ գիրքը նույնպես նվիրված է լինելու Կիլիկիային եւ ներառելու է քարտեզներ, հայկական հին մետաղադրամների, ինչպես նաեւ ձեռագրերի եւ արձանագրությունների լուսանկարներ:

«Արվեստը հզոր միջոց է: Լուսանկարները, քարտեզները, ֆիլմերը հեշտությամբ տպավորվում են մարդկանց ուղեղներում: Երեխա ժամանակ դժվար էր ինձ համար սովորել հայոց պատմություն առարկան, որովհետեւ դասագրքերում նկարներ չկային եւ ուսուցիչներն էլ այդ պատմական վայրերում չէին եղել, որ պատկերավոր մատուցեին նյութը: Հույս ունեմ, որ ալբոմս այդ բացը կլրացնի եւ սերունդներին կտա հնարավորություն ճիշտ պատկերացում կազմելու անցյալի մեր ժառանգության մասին»:

Խաչերյանը ավելի քան 150 անգամ է եղել Հայաստանում: Ունի լուսանկարների հարուստ հավաքածու, որը նա օգտագործում է տարբեր երկրներում դասախոսություններ եւ ցուցահանդեսներ կազմակերպելու համար: Նման մի եզակի հանդիպում Թեքեյան մշակութային միությունն է կազմակերպել Նյու Յորքում անցյալ տարվա դեկտեմբերի 19-ին, որի ընթացքում նա ներկայացրել է իր աշխատանքները: «Սիրում եմ արկածներ որոնել եւ բացահայտումներ անել: Ցանկանում եմ, որ Ճապոնիայից մինչեւ Անտարկտիդա մարդիկ իմանան, թե ինչպիսի ազգ ենք եղել եւ ինչ հարուստ անցյալ ենք ունեցել», ասել է նա: Խաչերյանի մյուս գրքերի շարքում կարելի է նշել «Արցախ: Ճանապարհորդություն լուսանկարների միջոցով», «Ղարաբաղ-100 լուսանկարներ», «Երկիր- 100 (1915-2015 թթ.»), «Խաչքար» եւ «Արմենիա: Դրախտ երկրի վրա» հատորները:

Շրջադարձային է եղել նրա համար այն ժամանակահատվածը, երբ նրա մարմնում բժիշկները քաղցկեղ են հայտնաբերել: Նա հիվանդանոցի պատերին ամրացրել է Արցախում, Հայաստանում եւ Կիլիկիայում կատարած իր լուսանկարները, որոնց պարգեւած ներշնչանքի շնորհիվ կարողացել է հաղթահարել հիվանդությունը: Տեղեկությունը՝ Թալին Բաբայանի հոդվածից:

**Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ**
**(The Arm. Mirror-Spectator)**